





MAR 2010

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՅՈՒՂԵՆԱԿԱՆ ԷԿԵՆՏՐՈՒԱԿԱՆ ՅԱՆՉԱԽՈՒՄՐԻ

ՀԱՅԿ ԱՃԵՄԵԱՆ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐԱՄԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ

ԹԱՒՐԻԶ

ՀԱՐԻԿԱՌԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԹԻԻ

1835—1935

ԹԱՒՐԻԶ

Առաջատականի Հայոց Թեմական Տպարան

1936

ԳԻՆՆ Է 5 ՐԻԱԼ

6 FEB 2013

Հ.Գ.Տ  
162 373  
Ա-50

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՑՈՒՑԵԼԵԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒՄԱԿԱՆ ՅԱՆՉԱԱԿՈՒՄԲԻ

ՇՊ. պահ. ցովին Անդրամերէ

Հանկա ՀԱՅԿ ԱՃԷՄԵԱՆ

Դարձ

20 ՀՆ - ՀԲ 1936

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐԱՄԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ

ԹԱԿՐԻԶ

ՀԱՐԻԿՐԱՄԵԱՅ ՑՈՒՑԵԼԵԱՆԻ ԱՌԹԻՒ

1835—1935

Թ Ա Կ Ր Ի Զ

Ալբատականի Հայոց Թեմական Տպարան

1936



6 FEB 2013

57.230

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՎԻՊԱՍԱՆ

Ա. Ա Մ Ա Խ Ա Բ Ո Ւ Ա

ՐԱՓԹԻՒ

(ՅԱԿՈԲ ՄԵԼԻՔ ՅԱԿՈԲԵԱՆ)

Ծննդեան Հարիւրամեակին—1835—1935

ի յիշատակ

ԿԸՆԿԻՐԵ

ՀԵՂԻՆԱԿԲ

1581-91

1169-901

ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԿԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՎԱՅԻ ԱՌԱՋԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Ա  
ԽԱՆԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Ա

### ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ծնորհիւ մեր երկրի վեհապետ Ն. Կ. Մ. Աղա Շահ  
Մեծն Փահլաւիի հերոսական ջանքերի՝ իրանի համայն  
ժողովուրդը այսօր ապրում է ոգեռութեան և հիացմուն-  
քի մի նոր շրջան՝ վերածնութեան ոսկեդարը:

Մեր երկիրը օրէ օր օժտում է լուսաւորութեան ու  
անտեսական նորանոր բարիքներով, որոնց արդիւնքը հա-  
ւասարապէս տարածւում է բոլոր ժողովուրդների մէջ:

Կրթական ու գպրոցական գործին յատկացրած խո-  
շոր բիւղչէն ապացոյց է, որ իրանի ժողովուրդը թօթա-  
փում է իրենից անցեալի տգիտութեան խաւարը և կանգ-  
նած է յառաջադիմութեան նոր վերելքի առաջ և որ այդ  
յառաջադիմութիւնը կատարում է հաստատուն և արագ  
քայլերով:

Ուրախ ենք արձանագրելու, որ իրանի զարթօնքի  
այս մեծ շրջանին զուգադիպում է Արամեան (Սաբա)  
գպրոցի հարիւրամեայ յորելեանը: Այս հինաւուրց գպրոցը  
իր հարիւրամեայ գոյութեան ընթացքում, ուսում ու գի-  
տութիւն տարածելով իրանահայ մանուկների մէջ, վատա-  
հօրէն կարող ենք ասել, որ իրանի լուսաւորութեան գոր-  
ծում իր բաժին գերն ունի կատարած, որի համար այսօր  
նա փոխարինաբար օգտուում է մեր երկրի բարիքներից  
հաւասարապէս, ապացոյց դրան մեր կառավարութեան  
կուսաւորութեան նախարարութեան կողմից նշանակւած  
օժանդակութիւնը ի նպաստ Թաւրիզի հայոց գպրոցների՝  
պարսկերէն լեզվի ուժեղացման և պետական ծրագրի գոր-  
ծադրման առթիւ, տարեկան 19,200 ըիալ, որից հաւասար  
բաժին է ստանում Արամեան գպրոցը: Այդ առթիւ դըպ-  
րոցի հոգաբարձութիւնը և Յորելենական կենտր. Յանձ-  
նախումբը իրենց գոհունակութեան և շնուհակալութեան

խօսքն են ուղղում Հուսաւորութեան յարգոյ Նախարարին և Ասրպատականի Հուսաւորութեան պլ. Տեսչին, որոնց ջանքերի շնորհիւ դպրոցական գործը օրէ օր բարգաւաճում է մեզանում:

Արամեան դպրոցի Հարիւրամեայ Յորելեանը գերազանցօրէն հայ մշակոյթի փառաբանման ու պանծացման մէկ տօնն է, քանի որ դարերի հոլովոյթի ընթացքում հայկական մշակոյթի ակն ու ակունքը հանդիսացել է հայ դպրոցը, որ ծառայել է նրա մատաղ սերնդի դաստիարակութեան վեհ գործին՝ մայրենի ոգեվառ շնչով օծուն:

Մէկ հարիւրամեակ սերունդներ եկել անցել են այս հինաւուրց հաստատութեան սեմից: Մէկ դար անընդհատ լուսոյ այս տաճարը թօթովախօս մանուկների լեզւի կապանքներն է արձակել և նրանց ուսուցել Մեսրոպեան գիրն ու հնչիւնը:

Փառք հայ դպրոցին, Փառք հայ մշակոյթի յուշարձաններից մէկի՝ հարիւրամեայ յորելեար Արամեան դպրոցին,

Յորելենական կենտրոնական Յանձնախումբը դպրոցի հարիւրամեայ յորելեանի առթիւ անհրաժեշտ համարեց հրատարակութեան տալ նրա համառօտ պատմութիւնը: Պ. Հայկ Աճէմեանը, որ կազմած ունէր Արամեան դպրոցի պատմութիւնը, սիրայօժար կամքով տրամադրեց հրատարակելու, որի համար Յանձնախումբը իր շնորհակալութիւնն է յայտնում: Հրատարակութիւնից գոյացած զուտ արդիւնքը յատկացւելու է Յորելենական ֆոնդին:

ՅՈՒԵԼԵՆԱԿԱՆ ԿԵՆՏ. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Թաւրիկ  
4 Մայիս 1936

## ԸՆԹԷՐՑՈՂԻՆ

Արամեան դպրոցի հարիւրամեակի Յորելենական կենտրոնական Յանձնախումբը առաջարկեց ինձ գրել դպրոցի պատմութիւնը սկիզբէն մինչև մեր օրերը:

Տարիներու ընթացքին թէ Թաւրիկի մէջ և թէ այլուր, ինչպէս նաև ամառնային ուսումնասիրական ճամբորդութեանցս ատեն ևս հաւաքած, ձեռք բերած եմ բազմատեսակ փաստաթուղթեր, նամակներ, լուսանկարներ, հին հրատարակութիւններ, յուշեր ու կազմած եմ մանրամասն և ընդարձակ «Պատմութիւն Հայոց Ատրապատականի» անունով աշխատութիւնն մը՝ նագոյն դարերէն մինչև մեր օրերը: Ահա իմ այս անտիպ աշխատութեան մէջէն ես հանեցի Արամեան դպրոցի պատմութեան վերաբերեալ նիւթերն ու փաստաթուղթերը, որոնք կարձ ժամանակի մէջ դասաւորելէ յետոյ յանձնեցի մամուլին, բնիթերցողը Արամեան դպրոցի բաւական մանրամասն պատմութենէն դաստիթի գանէ նաև բազմատեսակ աեղեկութիւններ մասնաւորապէս Թաւրիկի աւելի քան 100տարիներու մշակութային կեանքի և զանազան գէպքերու ու դէմքերու մասին:


Աշխատութեանս համար իբր աղքիւր նկատի ունեցած եմ Ատրապատականի Հայոց Առաջնորդարանի դիւնական հատ ու կտոր թուղթերը, նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թուղթերէն կատարած արտազրութիւնները (1931ի ամրան) իմ սեփական փաստաթուղթերն ու գրութիւնները՝ զանազան գրքեր և այլն: Գրքի տպագրութեան ժամանակը շատ կարձ ըլլալով, տարաբախտաբար չկրցայ քննել Արամեան դպրոցի վերջին յիսնամեակի թուղթերը: Իմ ունեցած հազուագիւտ և պատմական լուսանկարներէն ումանց հրատարակութիւնն այս գրքի մէջ շատ կարևոր էր, բայց ժամանակը կարձ ըլլալով հնարաւոր չեղաւ:

Անշուշտ աշխատութիւնս ունի իր անխուսափելի թերութիւնները, որոնց համար ընթերցողի ներողամառութիւնը կը ինքիմ, խոստանալով ապագային կատարել լրացումները:

Առիթէն օգտուելով յատկապէս պիտի խնդրէի, որ Թաւրիկի հայ հին գերդաստաններն ու բանիմաց անձինք տրամադրէին ինձ զանազան հին լուսանկարներ, պատմական արժէք ունեցող նամակներ կամ գրութիւնները, որպէսզի օգտագործեմ իմ «Պատմութիւն Հայոց Ատրապատականի» աշխատութեան մէջ, որ մատղիր եմ մօտիկ ապագային լոյս ընծայել՝ եթէ միայն մեկնաս կամ հրատարակիչ գտնուի:

Թաւրիկ 28 Մայիս 1936

ՀԱՅԿ ԱՃԵՄԵԱՆ



ԳԵՐԱՇՆՈՐԾ ՏԵՐ ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԼԻՔ ԹԱՆԳԵԱՆ  
ԱԶԴԱՆՈՒԵՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԱՏՐԴԱՏԱԿԱՆԻ  
ՄԻՃ Հովանաւոր Թաւրիզի Հայոց Ազգային Հաստատութեանց

## ՊԱՐԵՐՈՒ ՄԵԶԵՆ

Հայ մատենազրութեան պատմութեան մէջ արժանի տեղ կը զրաւէ բնիկ Թաւրիզեցի Պատմազիր Առաքել Վարդապետ Դավիթիծեցին\*), որուն ծննդեան թուականը յայտնի չըլլալով կ'ենթադրուի թէ ծնած է 1590ական թուականներուն։ Թաւրիզի մէջ գրաճանաչ զանալէ յետոյ՝ դեռ պատանի կը տարուի էջմիածին, ուր կը ստանայ հողկոր ուսում և կ'աշակերտէ Աղքակեցի Փիլիպպոս Կաթողիկոսին։ Ասոր հրամանով ալ 1651ին ձեռնարկեց զրել իր պատմութիւնը, որ կը շօշափէ 60 տարիներու շրջան մը իր պատմութիւնը զրեց 11 տարիներու ընթացքին, ծնրութեան մէջ—«Զի ծերացեալ եմ և կարի պակասեալ ի զօրութեանց», «ցաւագար մարմնով», «աչքի պակաս լուսով», «գողահար ձեռքով» և և ամենայն կարողութեանց տկարացեալ»։ Ինքն ալ ցանկութիւն ունեցած է զրել ժամանակակից զէպքերու պատմութիւնը.—«Ինձնէն իսկ տեսանելով զաւերս հայստան աշխարհին, և զնուազին մերոյս ազգին..., կակծալի մորմոքմամբ այրիւր սիրտն իմ, վասն որոյ յօժարեցայ յարձանագրութեան սոցին»։ Բազմարդիւն Առաքել Վարդապետը վախճանեցաւ 1670ին յէջմիածին և թաղուեցաւ վանքի գերեզմանատան մէջ, ուր և կայ իր շիրիմը հետեւեալ պարզ արձանագրութեամբ։ — «ՊԱՏՄԱԳԻՐՆ. ԱՅՍ է ՏԱՊԱՆ ԱՌԱՅԹՔԵԼ ՎԱՐԴԱԳԵՏԻՆ. ԽՃԺԹ ԹՈՒԻՆ»։

Մեծն Շահ Աբասի բոնագաղթէն յետոյ կաթոլիկ քարոզիչները իրան անցան՝ Հայ ժողովուրդը պառակտելու և Հայ ազգային հեղացին վարկարեկելու նպատակով։

Կաթոլիկ քարոզութեան դէմ պայքարելու համար՝ էջմիածնէն, Տաթևէն, Վարագայ վանքէն և այլ կեղրոններէն ճարտասան վարդապետներ շրջագայութեան ելան։ Այս վարդապետներէն մէկն էր Վասպուրականի Մոկս գաւառի Բար (Կամ Բառ) գիւղին մէջ ծնած Պօղոս Վարդապետը, որ «քարոզելով եկն ի Թարվէղ քաղաք և անդ է կիր արկեալ զգործ վարդապետութեան իւրոյ և յամենայն աւուրս քարոզիւ և զասիւ և յորդառատ վարդապետութեամբ լուսաւորէր զժողովուրդ քրիստոնէից, որ և պատահէին անդ»։ Մոկացի Պօղոս Վարդապետը, վերանորոգեց Թաւրիզի Հայոց եկեղեցին և դպրատուն շինեց և «իրոց աշակերտաց կացուցանէր դպրապետս, և զոմանս մանկանց զպատշաճաւորս ընդ իւր շրջեցուցանելով ուսուցանէր»։

\*) Ասոր հարազատները սերունդէ սերունդ քահանայ ձեռնազրուեցան և պահեցին Առաքել անունը իրենց զերդաստանին մէջ, որ կը շարունակուի մինչև այժմ։ Պատմազրի անունով զերդաստանն ալ Պատմազրեան կոչուած է՝ Ժ. դարու առաջին կէսէն։

Կաթոլիկ քարողիչները Թաւրիզի մէջ կը կատարէին հայակործան աշխատանք, որուն դէմ առնելու համար՝ Նոր Զուղայեցի Աղեքսանդր Կաթողիկոսը 1707ին հջմիածնէն խնդրագիր (արդա) մը գրեց Թաւրիզ՝ «Շահին Շահ Ղուլի Խանին»—«...Ահա մեր խընդիրքն՝ առաջին՝ և միջին՝ և վերջին այս է, որ հայն հայ լինի, և փոանկն Փոանկ . . . հայն հայ կենայ և փոանկն Փոանկ. հայն Փոանկի ժամն չգնայ և տղայ կարդալու չտայ. . . Աղաչեմ մեծապատիւ Տէրութենէդ որ ուհաթին ողորմես այս Փոանկութիւն վերանայ: Աստուած Շահին Շահ Ղուլի Խանիդ և քու հրամանուցդ դուզաթն և ուղբն զիադայ անէ: Ամէնու: (Անտիպ կոնդակէն արտագրած եմ): Կաթոլիկութիւնը վերջ կը գտնէ Թաւրիզի մէջ 1720ական թուերուն և հայերը կ'աղատուին օտարներու աղգակործան արարքներէն և աղղեցութենէն:

Թաւրիզի Բերդաթաղի Հայոց Ս. Աստուածածին եկեղեցոյ բակին մէջ միշտ ալ գոյութիւն ունեցած է գպրատուն կամ վարժատուն, որուն շէնքն անկասկած գետնայարկ, կիսալոյս խուց մը կամ աղիւսաշէն ցած կամարներով սենեակ մը եղած է, ուր աւելի քան 100 տարիներու ընթացքին (1670—1790) իրը վարժապետ և դասատու Թաւրիզի Հայոց բազմաթիւ քահանաներէն յայտնի են հետևեալները.—Պատմագիր Առաքել Վարդապետի նուուիկ անունով եղբօր որդին՝ Տէր Փիլիպպոս (վախճ. 1684), Վանեցի Տէր Յակոբ (վախճ. 1686), Տէր Առաքել Դավրիժեցի (վախճ. 1724) Տէր Փիլիպպոս (վախճ. 1775) Տէր Սիմէոն (վախճ. 1707) Տէր Յովսէփ Աւ. Քէն. Մէլիք Յովհաննիսեան, որ 1782ին կը հիմնէ Ս. Աստուածածին եկեղեցոյ ներկայ շէնքը, որուն մօտ էր նաև Թաւրիզի Հայոց վարժապետունը:

Համբոյը ձեզ, խոնաւ ու խոնարհ գպրատուներ, կիսալոյս և լիայոյս վարժատուներ, որ ձեր խորին խորհուրդ կամարներն ու մուալլ պատերը գարերու ընթացքին՝ դարձան հաւաքարան և ընդունարան հայ ուսումնատենչ մանուկներուն և պատանիներուն:

Յարգննք ձեզ, անվարձ մշակ և կենդանի նահատակ հին վարժապետներ, դնւք մտաւոր խաւարի մէջ առկայծող ճրագներ, որ ձեր աշակերտներու միտքը լուսաւորեցիք Լուսաւորչի լոյս հաւատքով և Հայոց Այբուբենի խորաքանդակներով:

Ողջոյն ձեզ, ուսումնատենչ հայ մանուկներ և պատանիներ, դնւք, անձինք նուիրեալք, որ դպրատուներու և կամարակապ ու տիսուր խուցերուն մէջ, ծնրադիր նստած հողածածկ յատակներուն վրայ՝ ծանր պատիժներու և հարուածներու հնթակայ ըլլալով հանդիրձ, ձեր անոյշ ձայներով հնչեցուցիք Հայոց Ոսկեղենիկ ու Մեծասրամնշեղուն և մայրենի բարբառը սիրական:

## ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՅ ԿՐԹԱԿԱՆ ԱՐԾԱԼՈՅԱԾ

### ԲԵՐԴԱԹԱՂԻ ԴՊՐԱՏՈՒՆ-ՎԱՐԺԱՏՈՒՆ

Թաւրիզի հայաբնակ Ղալա կամ Բերդաթաղի Ս. Աստուածածին եկեղեցոյ արևմտակողմի անկիւնը մինչև այժմ կը մնայ միջակ մեծութեամբ (4.50×3.50) մեթր), ցած առաստաղով և հողէ յատակով սենեակ մը, որ այժմ տպարանի պահեստն է:

Աւելի քան 120 տարի առաջ այդ կիսալոյս սենեակն էր ահա Թաւրիզի Հայոց դպրոցական շէնքը, որ կոչուած է նաև Բերդաթաղի դպրատուն-վարժատուն:

Ս. Աստուածածին եկեղեցոյ շատ քիչ ուսումնական քահանաներէն մէկը և կամ ոմն դպիր ու տիրացու՝ այդ մինաւոր ու տիրատեսիլ սենեակին մէջ գրել կարդալ կը սովորեցնէին հայ պատանիներուն: Ասոնք զրածանաչ դառնալէ յետոյ կը սկսէին կարդալ և կամ բերանացի սովորել եկեղեցական աղօթքներ, շարականներ, սաղմոսներ, մինչև անդամ Գր. Նարեկացիի խրթին գրաբարով աղօթքներն ու փառաբանութիւնները: Դասատուն եթէ գիտէր քերականութիւնները: Դասատուն եկեղեցի գիտէր պատանիներուն, չէր հանդուրժել, որ անոնք շուտ ըմբռնէին և կամ հասկնային իր ըսածները, վախնալով որ կրնան զինք գերազանցել Այդ քահանան այնքան ծեծ ու պատիժ կուտար ընդունակ աշակերտներուն, որ ասոնք ստիպուած կ'ըլլային ուսումնէն փախչիլ և արհեստի երթալ:

Բեղաթաղի դպրատան մէջ աշակերտներուն պարսկերէն լեզու կը սովորեցնէր Բեթլեհեմ վարժապետը։ Սա ի պատուի էր մանաւանդ Թաւրիզի հարուստ հայերու մօռն Բեթլեհեմ վարժապետը լուակեաց և դաժան մարդ էր, բայց հմուտ էր պարսից լեզուին, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ դպրապետ էր և առհասարակ համայնքի ազդեցիկ անձերէն մէկն էր։

Երբ Վրաստանի Հայոց Առաջնորդ Ներսէս Արքեպիս. (յետոյ Կաթողիկոս) Աշտարակեցին Թիֆլիսի մէջ հիմնեց Ներսիսեան դպրանոցը (1824ին), Բեթլեհեմ վարժապետը պատիւ ունեցաւ Աշտարակեցիի կողմէ 1828-ին հրաւիրուելու Թիֆլիս՝ իբր Պարսից լեզուի դասաւու Ներսիսեան դպրանոցի մէջ պաշտօնավարելու համար։

ԺԹ. դարու առաջին քառորդին Թաւրիզի մէջ յայտնի էր հայազգի Սեթ Խանը, որ Ֆաթ-Ալի Շահի և ասոր զաւակ Արաս Միրզայի կողմէ յարգուած անձնաւորութիւն մըն էր. Այդ դարու սկիզբները՝ Ատրպատականի Հայոց Առաջնորդները կը նստէին Արտազի Ս. Թաղէսս Առաքելոյ վանքին մէջ և երբեմն թեմական այցելութեան կ'երթային գաւառները, իսկ պաշտօնական գործերու համար կուգային Թաւրիզ։ Սեթ Խանն էր, որ Հայոց առաջնորդները կը հիւրընկալէր իր տան մէջ և կամ անոնց խընդրանքները կը ներկայացնէր կառավարութեան և թագաժառանգ Արաս Միրզային՝ միշտ համնելով դրական արդիւնքի։

Ամենայն Հայոց Եփրեմ Կաթողիկոսի հաւատարիմ աջակից և Հայրապետական գործերու ղեկավարը ազգանուել Ներսէս Արքեպ. Աշտարակեցին էր. Ասոր հրահանգով Տաթևի վանահայր Մարտիրոս Արքեպ. 1823-ին, Մեղ-

\* ) Սեթ Խանը Ֆաթ-Ալի Շահի կողմէ 1821ին դնաց Լոնդոն իբր դեսպան, իսկ վերադարձէն յետոյ Թաւրիզի մէջ կազմակերպեց անզիւական ապրանքներու ցուցահանդէսը։

րիի վրայով անցաւ Ղարադաղ և եկաւ Թաւրիզ՝ Արաս Միրզային ներկայանալու համար։ Մարտիրոս Արքեպ.ը իջաւ Սեթ Խանի տունը. բացատրեց որ եկած է թագաժառանգին ներկայացնելու կարգ մը խնդիրներ, որոնք կապ ունին Էջմիածնի վանքի, հայրապետական գործերու, Երևանի Սարդար Հիւսէյին Խանի յարաբերութեանց և այլն հարցերու հետ։

Սեթ Խանի միջնորդութեամբ Մարտիրոս Արքեպ.ը ներկայացաւ թագաժառանգին, որ բարեյաջող լուծում տուաւ անոր խնդիրներուն։ Ի պատիւ Էջմիածնի պատգամաւոր Արքեպիսկոպոսին Սեթ Խանը իր տան մէջ ընթրիք տուաւ, որուն հրաւիրուած էին հայ և պարսիկ բազմաթիւ յայտնի մարդիկ։

Ընթրիքէն յետոյ, Սեթ Խանը, երբ արդէն օտարազգի հիւրերը գնացեր և մնացեր էին միայն հայերը, խնդրեց Մարտիրոս Արքեպ.էն, որ Էջմիածնին հասնելուն պէս հըմուտ և ուսումնական վարժապետ մը ղրկեն Թաւրիզ՝ հայ պատանիներուն ուսում սովորեցնելու համար։ Մարտիրոս Արքեպ.ը խոստացաւ Էջմիածնին հասնելուն պէս կատարել Սեթ Խանի խնդրանքը։

Եւ իսկապէս 1823-ի աշնան Էջմիածնէն Թաւրիզ հասաւ Վանեցի Ղազար Վարդապետ Վարժապետը\*), որ ոչ միայն քաջ հայկաբան էր, վարժ երաժիշտ, այլև բանաստեղծ։ Սա ընտաիր գրաբարով գրած է տաղաչափեալ ուտանաւորներ, ձօներ, գովքեր, կրօնական երգեր և այլն։ Թաւրիզի Հայ իշխաններուն իր ձօնած երգէն ահա տուն մը իբր նմոյշ։

Գերապատիւ յարզոյ իշխանի,  
Ասբանազեան ազգին պարծանի,  
Ահա ենա ժամ ցնծութեան,  
Երգս յօրինել մեզ բերկրական։

\*) Սա կը ստորագրէր—Ղազար իբր Վարժապետ Վարդապետ Տէր Մարտիրոսնեան Տէր Ղետնդեանց։

Աղբակի Ս. Բարդողիմէսո վանքի վանահայրն էր 1820ական թուականներուն իսրայէլ Եպիսկոպոսը, որ կը վայելէր Իրանի Թագաժառանգ (Նայիթ Սալթանէ) Արաս Միրզայի համակրանքը: Ուսու-պարսկական 1827 թուի պատերազմի ընթացքին այս եպիսկոպոսը շատ մեծ ծառայութիւն ցոյց տուաւ Իրանին՝ իր հակառուս գործունէութեամբ, որուն առաջ չը կրցան առնել Պասկեիչն ու Ներսէս Արքեպ. Աշտարակեցին: Վերջինիս սպառնալիքով միայն Իսրայէլ Եպիսկոպոսը ձեռնթափ եղաւ Ատրպատականի Հայոց Առաջնորդութեան պաշտօնէն և քաշուեցաւ Աղբակը: Արդէն Թիւրքմէնչայի ուսու-պարսկական դաշինքն ալ կնքուած էր և Ատրպատականէն աւելի քան 40,000 հայեր անցան Արարատեան դաշտը՝ 1828 թուի գարնան:


Այս թուականին Թաւրիզի մէջ մնացին միայն վեց տուն հայեր—Զարգարբաշոնց (Պատմագրեան), Սէթխանենց, Բժշկեանենց, Տէր Յովսէփենց և մէկ երկու այլ տներ:

Նոյն թուի աշնան Էջմիածնէն իրը առաջնորդ եկաւ Կեսարացի Բարսեղ Արքեպիսկոպ.ը, որ ազդեցիկ և եռանդուն անձ մը եղած է: Սա շրջագայութեան գնաց գաւառները, որոնք պատերազմի պատճառով սնտեսապէս քայքայուած էին:

Բարսեղ Արքեպ.ի նպատակն էր Մակուի Ս. Թաղէի վանքէն Առաջնորդարանը փոխազրել Թաւրիզի: Բայց այս գործը չը կարգադրած ստիպուած եղաւ մեկնիլ Էջմիածին 1831ի Հոկտեմբերին, որպէսզի ներկայ ըլլար Յովհաննէս Ը. Կարբեցի Կաթողիկոսի օծման հանդիսին, որ պիտի տեղի ունենար Նոյեմբեր 8-ին Էջմիածնի մէջ:

Բարսեղ Արքեպ.ը Էջմիածնէն ալ չը վերադարձաւ ուստի և Ատրպատականի թեմը թափուր մնաց:

Յովհաննէս Կաթողիկոսը 1833ի ամրան (Յուլիս 9) Կարբեցի նիկողոս Վարդապետը եպիսկոպոս ձեռնադրեց և ուղարկեց Թաւրիզ՝ նոյն թուի աշնան, իրը Ատրպատա-



ՔԱՐՄԱՔԻ ԲԵՐԴԱՐԱՐ ԿՐՅԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱԿՈՒՆ - ՎԱՐԺԱՄՈՒՆ,

ուր պահօնավարած է ՄԵՍՈՒՋ ԹԱՐԱՐԱՐ ԱՅՐԱՐԱՐ 1836 - 1837 թվերուն:

Առողջապահութեան հայոց Առաջնորդ Գլուխ Արքայի արդուի տեղուն և Սէր Ներսէս Արքայի արդուի տեղուն Սէր Սուլիկանան Ա

կանի Հայոց Առաջնորդ, որու առաջին գործն եղաւ 1834ին հիմնել Առաջնորդարանի յարմար շէնք մը՝ Մայր Աստուածածին եկեղեցոյ արևմտակողմը։ Այդ շէնքը մինչև հիմայ կայ և 1889էն ի վեր կը ծառայէ իբր Ատրպատականի Հայոց տպարան։

Դալրատան գործը այս Առաջնորդի օրով գրեթէ նոյնը մնաց։ Նիկողոս Եպիսկոպոսի ամբողջ գործը եղաւ կանոնաւորել Թեմական հասոյթները, հաւաքել տալ պաղպրամը և իր համար աջահամբոյր։ Ուսումնասէր ըլլալէ աւելի դրամասէր մարդ էր, վարչական կարողութենէ զուրկ, բայց հանդարտ ու հաշտ բնաւորութիւն ունէր։ Լոելեայն կ'ենթարկուէր Թաւրիզի հայոց զիխաւորներու քմահաճոյքներուն։ Կառավարութեան կողմէ յարգուած էր։

Նիկողոս Եպիս ի ժամանակն էր, 1836ի ամառը, երբ Հնդկաստանէն Թաւրիզ եկաւ Մեսրոպ Թաղիադեանը, որ նոր Զուղայի և Կալկաթայի մէջ իբրև դաստիարակ, ազգային գործիչ և քաջ ուսումնագէտ՝ համբաւ հանած էր, Կատարելապէս կը տիրապետէր հայերէն, պարսկերէն և անգլերէն լեզուներուն։ Թաղիադեանը Թաւրիզ եկաւ իր դեռատի կնոջ՝ Թանգ Խաթունի հետ, որ նոր Զուղայեցի Մկրտիչ Սեթեանի դուստրն էր և նոր էին ամուսնացեր։ Թաղիադեանը Թաւրիզի մէջ ծանօթացաւ անգլիական հիւպատոսի հետ, որու անուան յանձնարարական թուղթեր բերած էր Կալկաթայէն և Սպահանէն։ Հիւպատոսի ջանքերու շնորհիւ Թաղիադեանը Թաւրիզի մէջ արքայազն Մելիք Ղասըմ Միրզային անգլերէն դասեր սկսաւ տալ լաւ վարձատրութեամբ։ Թաւրիզի հայերը տեսնելով Թաղիադեանի հմտութիւնը և դաստիարակի կարողութիւնը լինդրեցին, որ իրենց վարժարանի հայկարանութեան դասերն ստանձնէ տարեկան 60 թուման ոռճիկով։

Թաղիադեանը ամսական 5 թուման լրիւ չէր ստանար, միշտ պարտք ունէր և կամ իր ծանօթներէն ամշնաւով դրամ փոխ կ'առնէր իր օրուան ծախքերը հոգալու

համար: Թաղիադեանը յուսախար եղած էր, մանաւանդ որ ինքն ալ անհամբեր մարդ էր, չէր հանդուրժեր անարդար վարմունքի: Այսպէս, ապերախտ և անմիխթար պայմաններու մէջ Թաղիադեանը Թաւրիզի հայոց վարժատան մէջ պաշտօնավարեց մինչև 1837ի վերջերը՝ երբ ընտանեկան դժբախտութիւն մը խորտակեց անոր սիրտը: Իր սիրելի Թանգ Խաթունը ծննդաբերութեան երկունքի տաեն մեռաւ 1837ի նոյեմբեր 18ին:

Ի պատիւ արդիւնաւոր վարժապետին՝ վշտահար Մեսրոպին՝ յուղարկաւորութիւնն ու թաղումը կատարուեցաւ հանդիսաւոր կերպով:

Առաջնորդ Նիկողոս Եպիսկոպոսը պատարագիչն էր: Թաւրիզի ամբողջ Հայութիւնը ներկայ էր թաղման: Դամբանական խօսեցան Թաղիադեանի ուսուցիչ - դաստիարակ Պողոս Վարդապետ Ղարադաղցին և պաշտօնակից Ղազար Վարդապետ-Վարժապետը: Թանգ Խաթունը թաղուեցաւ Մայր Եկեղեցոյ հիւսիսակողմը:

Թանգ Խաթունի մահէն յետոյ Թաղիադեանը կորսընցուց իր հոգեկան խաղաղութիւնը, դարձաւ սրտաբեկ և վշտահար: Նա Եկեղեցոյ բակէն դուրս կ'ապրէր, իսկ դըպրատունը կը գտնուէր Եկեղեցոյ բակին մէջ, ուրկէ երբ կ'անցնէր և աչքը կ'իյնար Թանգ Խաթունի գերեզմանին վրայ, չէր կրնար իր յուղումը պահել.

«Սարսափելի մտայուզութիւն կզգամ ուսումնարան յաճախելոյս ժամանակն որովհետեւ պարտաւոր եմ իմ Թանգ Խաթունի գերեզմանի մօտովն անցանել»:

Թաղիադեանը Թաւրիզէն չը մեկնած՝ իր վաղամեռիկ Թանգ Խաթունի գերեզմանին վրայ սև մարմարեայ հազարիւտ քարերով յուշարձան մը շինել կուտայ՝ գրելով նաև հետեւեալ տապանագիրը.

\*) Այս յուշարձանի ձեի, քարերու և տեղի մասին դանազան ենթադրութիւններ կան Թաւրիզի մէջ:

Թանգ Մեսրովբայ Թաղիադեանց  
Օսար յիմոց Հայրենիեց  
Ի ծնանել զմարդ յաշխարհ  
Ծնայ ինքնին առ Աստուած:  
1837 ամի. 18 նոյեմբերի

Թանգ Խաթունի մահէն յետոյ բազմատանջ Թաղիադեանը միայն ճ ամիս մնաց Թաւրիզի Նա 1838ի Ապրիլ սկզբին ճամբայ ելաւ դէպի էջմիածին և անկից ալ Մայիսին անցաւ կ. Պոլիս:

Մեսրոպ Վարժապետը իր մէկ ու կէս տարուան պաշտօնավարութեան ընթացքին շատ խոր և անմոռաց յիշատակներ թողուց Թաւրիզի Հայութեան մէջ: Անոր հաւատարիմ բարեկամներն ու երախտագէտ աշակերտները երկար տարիներ պատկառանքով յիշած են իրենց սիրելի Վարժապետի անձնուէր և արդիւնաւոր պաշտօնավարութիւնը: Երախտագէտ հին սերունդը տարիներ շարունակ օրհնել տուած է ազգի երախտաւոր Վարժապետի վաղամեռիկ կնոջ գերեզմանը, որուն սև մարմարիոն շիրմաքարը սակայն շուրջ 50 տարի առաջ աւերիչ ձեռքերը վերցեր են, անյայտ թողնելով նոյնիսկ գերեզմանին տեղը:

Թաղիադեանը Թաւրիզէն հեռանալէ յետոյ ալ նամակագրութիւն պահեց իր հաւատարիմ բարեկամներու հետ, որոնցմէ էին Ծատուրիանեան «Բարձրաստիճան Սեթ Խան և Պարոն Անդրէաս, պլ. Ռւոպելով»: Թաղիադեանը Կալկաթայէն 1841ի Փետրուար 20ին նամակ կը գրէ խնդրելով, որ իր բարեկամները և թէ «Գերապատիւ հասարակութիւնն Դավթիժոյ» դրամապէս օժանդակեն իրեն որպէսզի լոյս ընծայէ «տասնեւթ հատոր գրեանք միայն յինէն շարադրեալ պատրաստի կայ վասն տպագրութեան, և կարօտի օժանդակութեան ազգասիրաց մերոց ընդ ամենայն տեղիուց: Թաղիադեանը իր բարեկամներուն կը գրէ նաև հետեւեալը.

«Յկսեալ 1827-էն մինչև 1840, մեծահոչակ Աթոռն Հայաստանեայց Ս. էջմիածնի իւր հինգհարիւրաւոր միաբանիւքն և համօրէն ազգիս եկամտովն չգրեաց այնքան գրեանս որքան նուաստս միայնակ: . . . Արդ եթէ նոքաձերոց ողորմութեանց կարօտին և գան և առատապէս վարձատրին, ընդէ՞ր ոչ և նուաստս, որ քան զամենեսին զնոսա առաւել վաստակեցի»:

Արարատեան Աշխարհի այս Մեծ Զաւակը՝ նոյնինքն Մեսրոպ Թաղիադեանը, որ ժմ. դարու Հայ Ազգային Վերածնութեան ռահվիրաներէն մէկն է, շուրջ 30 տարիներու արդիւնաւոր և ազգանուէր գործունէութիւն ունեցաւ: Անոր միշտ սիրելի անունը լուսատու ճառագայթի մը նման կը շողայ Թաւրիզի Հայոց Կրթական Արշալոյսի պատմութեան մէջ, երբ նա իր լուսամիտ գաղափարներով, դաստիարակչական նոր ուղղութեամբ, հայրենասիրական ոգիով, ազգային շունչով Բերդաթաղի դպրատան վարժատան խոնարհ յարկին տակ ուսում կուտար հայ մանուկներուն և պատանիներուն, որոնց կը սորվեցնէր երգել իր յօրինած ազգային երգը.

Տէր կեցո դու զՀայս

Եւ արա զնոսա պայծառ...

Իր մօտ մէկուկէս տարուան պաշտօնավարութեամբ Մեսրոպ Թաղիադեանը Թաւրիզի Հայոց դպրատուն - վարժատունը ժամանակակից կրթական ոգիին յարմարցուց և դաստիարակութեան գործը աւելի ցայտուն ու որոշ դարձուց՝ Թաւրիզի տեղական պայմաններուն համեմատ: Անկառած է, որ Թաղիադեանի վարժապետական կարձատե պաշտօնավարութիւնը նոր և յուսատու դարագլուխ մը բացաւ Թաւրիզի հայոց դպրոցական կեանքի համար: Զուտ կրօնական դպրատունը Թաղիադեանի շնորհիւ վերածուեցաւ աշխարհական վարժատան, ուր անշուշտ կրօնական շունչը դարձեալ ուժեղ էր: Ցորեւեար դպրոցի շէնքի կառուցումը թէն 1851ին կատարուեցաւ, սակայն այդ թուա-


կանէն 15—20 տարի առաջ, Բերդաթաղի դպրատունը իւր պաշտօնական դպրոց գոյութիւն ունեցեր է, իսկ Թաղիադեանի օրով դպրատան՝ կամ ինչպէս ինքը կ'ըսէ «Ռուսամատակակից նորագոյն մեթոդներուն ծանօթ ըլլալով՝ Թաղիադեանը իրը դաստիարակ և ուսուցիչ իրը փորձուած կրթական գործիչ չը պիտի հանդուրժէր որ դպիր, տիրացու, տէրտէր կամ վարդապետը յամառօրէն շարունակէին դպրատունը պահել ուսուցման մոալ և գաժան ձեերու և կրօնական ծանը շունչին տակ:

Թաղիադեանի կարճատե բայց արդիւնաւոր ուսուցչական պաշտօնավարութիւնը այն նշանակութիւնն ունեցաւ, որ Բերդաթաղի դպրատուն - վարժատունը աշխարհիկ շունչ և հայկական ոգի առաւ և ժամանակակից ըմբռնութիւնը համաձայն ազգային ուսումնարան համարւեցաւ: Այս տեսակէտէն ենելով Մեսրոպ Թաղիադեանը կը հանդիսանայ իրը Թաւրիզի Հայոց Կրթական Արշալոյսի եթէ ոչ անգրանիկ, այլ մեծագոյն ռահվիրաներէն մէկը, որուն գործը աւելի հիմնաւորեց, կերպարանաւորեց և պաշտօնական բնոյթ տուաւ Աշարակեցի Սահակ Եպիս. Սաթունեանը, Ատրպատականի Հայոց երջանկայիշատակ Առաջնորդը:

Ինչպէս վերը յիշեցի 1837 թուի ամառը Ագուլիսէն՝ Ղարադաղի վրայով Թաւրիզ եկաւ բնիկ Մուժամբար զիւղացի, բայց Ղարադաղցի կոչումով, յայտնի հայկաբան Պօղոս Վարդապետը, որուն աշակերտած էր Մեսրոպ Թաղիադեանը: Պօղոս Վարդապետը Թաւրիզ մնաց մօտ ութամիս, մինչև 1838ի սկիզբները: Այս բազմարդիւն վարժապետ-վարդապետը, «արտաքոյ ուսումնարանին» հաւաքած էր 10ի չափ պատանիներ, որոնց ճարտասանութիւն և քերականութեւն կը սորվեցնէր: Բայց Պօղոս Վարդապետն ալ «ստիպալ ֆեմակակութենէ Հազար Վարդա-

35/3

1881-91թթ-թթ-թթ-



պետի վերադարձաւ Ագուլիս»:

Բերդաթաղի վարժատունը դարձեալ մնաց Ղազար Վարդապետի վարժապետութեան ներքոյ: Հայ պատանիները կը ստանային ժամանակի ողին համապատասխան կրօնական դաստիարակութիւն և կը սորվէին դրաբար լեզուն, ճարտասանութիւն, տարրական թուաբանութիւն և հաշիւ, աղիւսակ, եկեղեցական երաժշտութիւն, վարժատան կամ դպրատան մէջ չը կային գրասեղաններ: Աշկերտները կը նստէին հողածածկ, խոնաւ յատակի վրայ, տուներէն բերած փոքրիկ ներքնակներն ունենալով իրք նստարան, իսկ վարժապետը կը նստէր այծի մորթիի և կամ չոր բազմոցի վրայ:

Հին դպրոցը իր հնագոյն ուղղութեամբ, դաստիարակութեան ծանր ու ճնշող լուծով խալիթա, ուսա վարժապետներով, տէրտէրներով, տիրացու-դպիրներով և վարդապետներով իր մաայլ դրոշմը դրած էր նաև Թաւրիզի Բերդաթաղի վարժատան-դպրատան մէջ, ուր 1840ական թուականներուն տիրական դեր կը կատարէր Ղազար Վարդապետ-Վարժապետը, որ համայնքի գործերուն ալ կը խառնուէր, միանալով «Հայ իշխան»ներուն և պաշտամնելով անոնց տեսակէտները:

«Հայ իշխան» ըսուածները Թաւրիզի հարուստ հայերն էին կամ պետութեան մէջ զանազան պաշտօններ վարող ազդեցիկ հայ խաներ:

Ղազար Վարդապետը յամառ և կտրուկ մարդ եղած է, եռանդուն և աշխատասէր: Արժանացած է Ներսէս Ե. Աշտարակեցի Կաթողիկոսի քաջալերութեան և այս իսկ պատճառով աւելի համարձակ կերպով պայքարած է անոնց դէմ, որոնք իրեն հակառակ եղած են:

Ասկէ դեռ 10 տարի առաջ տողերս ստորագրողը կը ցաւ հաստատել, որ Թաւրիզի հայոց դպրոցական անդրանիկ շէնքը, — Բերդաթաղի դպրատուն-վարժատունը, Աստուածածին մայր եկեղեցոյ արևմտակողմի անկիւնի այն

ցած առաստաղով փոքրիկ սենեակն է, որ այժմ կը դորձածուի իբր տպարանի պահեստ: Այս մասին յիշատակութիւն ըրած եմ իմ «Հայոց Հայրիկ» գրքի մէջ (էջ 299):

Տարիներ շարունակ հետամուտ եղած եմ Թաւրիզի Հայոց դպրոցական այդ պարզ ու խղճուկ շէնքի մասին նոր փաստեր գտնելու: Մտածեցի որ եթէ, յիրաւի, այդ է յիշատակուած դպրատունը, ապա ուրեմն անոր պատերուն վրայ, աշակերտներու կողմէ պէտք է, որ զանազան գրութիւններ կամ մանկական նկարներ, խզզումներ գոյցութիւններ ունենան, ինչ որ ընդհանուր է դպրոցներու մէջ:

Եւ ահա 1936ի Ապրիլ 23, 24 և 25ին լայնաբերան դանակով մը սկսայ քանդել դպրատան սենեակի և միջանցքի պատերու վեց տակ ծեփերը և հասայ բուն ծեփին, որ բաց սկ գոյն ունի: Սխալուած չէի ենթադրութեանս մէջ: Սպասած գրութիւններն ու նկարները, ինչպէս նաև թուականներն ու զանազան մանկական խաղապատկերներ երեցան պատերու ծեփին վրայ, սրածայր երկաթով կամ փայտով գրուած կամ նկարուած:

Ինչ որ յայտնուեցան պատերու վրայ, բոլորն ալ նոյնութեամբ արտագրեցի և արտանկարեցի՝ դժուարին և երկարաւու աշխատանքով:

Ուշագրաւ են մանաւանդ նկարները, որոնք կը պատկերացնեն աւելի քան հարիւր տարի առաջուան արանց և կանանց տարագները, պարելու ձևերը, չիրուխ քաշող տղամարդիկ՝ երկարաւուն զլիսարկներով, խարսխաւոր նաւը, թռչուններ ևայլն: Հետաքրքիր է մանաւանդ փաթթացաւոր զլիսարկով և երկար մօրուքով մարդ մը, որ հաւանաբար հին վարժապետ և կամ պարսից լեզուի դաստու մըն է:

Բերդաթաղի վարժատան մէջ շատ երկարաւու եղած է մանաւանդ Ղազար Վարդապետ-Վարժապետի պաշտօնավարութիւնը աւելի քան քսան տարի (1823—1843): Այս վարդաթաղի աշակերտներն էին Մանուէլ Եղիար, Գրի-

գոր Մանուէլեան, Գրիգոր Եղիազարեան, Յարութիւն, Յովսէփ Քահանայ Տէր Յովսէփեան, Ալէքսան, Գէորգ Աֆթանդիլեան, Յարութիւն Համբարձումեան, Ծատո ը խան Սէթխանեան, Կարապետ Մանուէլեան, Յովսէփ, Մկրտիչ Խոսութիւն, Մովսէս, Մարգարէ, Սիմոն, Դանիէլ Մելքոնեան, Զաքարիա Առաքելեան ևայլք:

Ապա կը յիշուի, ոմն Մանուէլ Վարժապետ, որ յայտնի չէ թէ քանի տարի պաշտօնավարած է: Փաստեր կան, որ ինչպէս Թաղիաղեանն ու հայկարան Պողոս Վարդապետը աղմուկով և դժգոհութեամբ հեռացան Թաւրիզէն, այնպէս ալ Ղազար Վարդապետն ու Մանուէլ Վարժապետը Այս վարժապետներու դէմ պայքարողները և դաւեր լարողները եղած են զիսաւորապէս Բերդաթաղի քահանաները, որոնց մեծ մասը ագէտ կամ կիսագրագէտ անձեր ըլլալով հանդերձ կ'ուզէին վարժատան գործերը իրենց ձեռքն առնել ոչ թէ հայ մանուկներուն ուսում և գրաճանաչութիւն սորվեցնելու ցանկութեամբ, ոչ, այլ որպէս զի աշակերտներէն նիւթապէս օգտուեին:

Ատրպատականի Թեմական Առաջնորդ Նիկողոս Եպիսկոպոսն ալ քաշուած Ս. Թաղէի (Մակու) վանքը հազիւթէ կը հետաքրքրուէր Թաւրիզի վարժատան գործերով, վասնզի կրթամէր մարդ չէր:

Նիկողոս Եպիս.ը ամբողջ 17 տարի՝ 1833—1850, վարեց Ատրպատականի Հայոց առաջնորդութեան պաշտօնը և վախճանուեցաւ Մուժամբար գիւղի Տէր Յակոր Քահանայի տան մէջ՝ 1850-ի ամառը: Մարմինը թաղուցաւ գիւղի գերեզմանատան մէջ, ուր ցարդ կը մնայ գերեզմանը, որուն վրայ ձգուած է հասարակ տապանաքար մը անարձանագիր և մոռացուած:

Նիկողոս Եպիսկոպոսի մահէն յետոյ ներսէս Ե. Աշտարակեցի Կաթողիկոսը յատուկ կոնդակով Ատրպատականի Հայոց Առաջնորդ կը նշանակէ Մահակ Եպիս. Սաթունեանը, Էջմիածնի միաբան, եռանդուն և կրթամէր յայտնի դէմք մը:

## ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱԹՈՒՆԵԱՆ

### ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ

Էջմիածնին մօտիկ, Աշտարակ գիւղին մէջ ծնած է Սահակ Եպիս. Սաթունեանը 1791ին: Մեծ գերդաստանի և հարուստ ընտանիքի զաւակ էր: Հայրը կ'ուխտէ կուսակրօն զարձնել իր այս զաւակը, որ 1807ին կը տարուի Էջմիածնին և Եփրեմ Կաթողիկոսի հրամանով կ'աշակերտէ Բաղդասար Արքեպ.ին:

Եփրեմ Կաթողիկոսի կոնդակով՝ Բաղդասար Արքեպ.ը 1811ին Էջմիածնէն կ'երթայ Վան քաղաքը ազգային կարեր գործերով: Սաթունեանը կը նշանակուի Բաղդասար Արքեպ.ի քարտուղարը: Հինգ տարի կը մնան Վան, ուր Սաթունեանը կը սորվի տաճկերէն լեզուն: Իբր քարտուղար կը միանայ նաև Մինաս Վարդապետին, որ 1818ին Էջմիածնէն Անգորա գնաց: Ստեփաննոս Եպիս. Ենովքեանի կողմէ վարդապետ ձեռնադրուեցաւ 1821-ին: Իբր նուիրահաւաք, քարոզիչ ևայլ պաշտօններով 1823ին շըրջագայութեան գացեր է Նախիջևան, Օրդուբադ, Փամբակ, Շիրակ, Ղազախ, Շամշադին: Նոյն գործերով 1824ին անցած է Սալմաստ և Ուրմիա, ամենուրեք վայելելով ժողովրդական համակրանք:

Եփրեմ Կաթողիկոսի հրամանով 1828ին նշանակուեցաւ Կաղզուանի Հայոց հոգեսոր հովիւ: Երզրում գնաց 1829ին և այնտեղի հայոց եկեղեցական թանգագին զգեստներն ու սպասները Էջմիածնին բերաւ: Մուս-տաճկական պատերազմի ատեն մօտ 300 հայ ընտանիքներ տեղաւո-

ըեց Երևանի և Շիրակի գաւառներու մէջ: Կարս քաղաքի առաջնորդական յաջորդ նշանակուեցաւ 1830ին: Յովհաննէս Բ. Կարբեցի կաթողիկոսի հրամանով 1832-ին վարեց Շիրակի՝ իսկ 1833-ին Երևանի առաջնորդական յաջորդի պաշտօնը: Էջմիածնի Սինոպի անդամ հաստատուեցաւ 1837 ին և վարեց մինչև 1847 թուականը:

Ներսէս Ե. Կաթողիկոսէն Սաթունեանը ձեռնադրուեցաւ եպիսկոպոս 1850ի Յուլիս 16ին:

Եփրեմ, Յովհաննէս և Ներսէս կաթողիկոսներէն վարձատրուած է լանջախաչով, ծաղկեայ փիլոնով, պանակէով և զանազան նուէրներով՝ ի քաջալերութիւն իւր եռանդուն, հաւատարիմ և ժողովրդանուէր գործունէութեան:

Իր 30 տարիներու (1820—1850) գործունէութեան ընթացքին Սաթունեանն ի յայտ եկած էր իրը ազգասէր և անկաշառ անձ մը, իսկական հովիւ քաջ, որ իւր կեանքը նուիրած էր յանուն ազգի և հայրենեաց:

Ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոսը՝ «Պաշտամն Հայրենեաց» և ազգասէր ու մեծագործ Հայրապետը՝ իր անսպառ գործունէութեամբ, իր աննման կրթասիրութեամբ, յամառ ու յարատե աշխատանքով դարձաւ օրինակ և ներշնչան ու ողեսրութեան աղբիւրը՝ ժամանակակից ժողովրդասէր և բանիմաց եկեղեցական գործիչներու համար:

Ազգանուէր Աշտարակեցին կը փնտուէր անկաշառ և աշխատելու եռանդ ունեցող հոգեսրականներ և զանոնք պաշտօնի կը լծէր:

Իր ուշած եկեղեցական գործիչներն էին Էջմիածնի միաբաններէն Թաղէսս Եպիս. Բէկնազարեանը՝ Երևանցի և Սահակ Եպիս. Սաթունեանը՝ Աշտարակեցի:

Պարսկաստանի Երկու նշանաւոր և ընդարձակ թեմերը 1850 թուականին առաջնորդ չ'ունէին: Թեմական գործերը մատցեր էին Երեսի վրայ: Այս հանգամանքը նկատի առնելով Ներսէս Ե. Կաթողիկոսը յատուկ կոնդակով Թա-

դէսս Եպիս. Բէկնազարեանին նշանակեց Պարսկա-Հնդկաստանի՝ իսկ Սահակ Եպիս. Սաթունեանին ալ Ատրպատականի Հայոց Առաջնորդ: Էջմիածնի միաբանութեան եռանդուն և ազգասէր այս Երկու եպիսկոպոսները 1851 թուականի Ապրիլ ծին ժամանեցին Թաւրիդ և տեղւոյն հայութեան կողմէ մեծաշուք ընդունելութեան արժանացան: Մինչև Սոֆիան գացեր էին հայ ձիաւորները: Երբ շքախումբը Աջի գետի կամուրջին մօտեցաւ՝ քահանաները եկեղեցական թափօրով ընդառաջեցին զոյգ եպիսկոպոսներուն: Ասոնք ձիերէն իջան, ժողովուրդը մօտեցաւ: Վաճառականներ, մեծաւորներ, պաշտօնեաներ ներկայացան և ծանօթացան: Ապա շքախումբը շարժուեցաւ դէպի առաջնորդարան: Եկեղեցիին բակն ալ լեցուած էր խուն բազմութեամբ:

Յաջորդ օրը պատարագի ատեն Թաղէսս Եպիս.ը ազգաշունչ ըովանդակութեամբ քարոզ մը կուտայ, յորդորելով որ ժողովուրդը սիրէ իր ազգն ու եկեղեցին, սիրէ ուսում և կրթութիւնը: Քարոզը խոր տպաւորութիւն կը թողու ժողովուրդին վրայ:

Երկու եպիսկոպոսներն ալ արտաքինով տպաւորիչ էին—պարթևահասակ, թիկնաւէտ և լրջաղէմ:

Աւելի յանդուգն մարդ էր Թաղէսս Եպիս.ը, որ նշանաւոր քարոզիչի համբաւ ունէր, ճարտարախօս էր, զարդացած և դիւնազէտ:

Սահակ Եպիս.ը լրակեաց էր, համեստ, բայց եռանդուն և յամառ աշխատող, ժողովրդանուէր:

Երկուսն ալ տարուած էին Ներսէս Ե. Կաթողիկոսի կրթական գործունէութեամբ և կը ցանկանային այդ ուղղութեամբ անուն թողուլ իրենց թեմերուն մէջ: Եւ իսկապէս Երկուքն ալ դարձան ոչ միայն բազմարդիւն առաջնորդներ, այլև կրթական գործի առաքեալներ՝ Ատրպատականի հայութեան 1850 Դեկտեմբեր 31ին գրած իր

կոնդակի մէջ Աշտարակեցի Կաթողիկոսը կ'ըսէ.

« . . . Պատուիրեսք ձեզ ամ ենեցուն հոգեւորականաց եւ մարմնանորականաց ընկալեու զնա արժանաւոր սիրով լինիլ նմա հարազա խորհրդակից եւ հաւատարիմ զործակից եւ ո՛չ պակասեցուցանել նմա, ոչ զիսրիուր ձեր եւ ոչ զաշխատութիւն վասն կարօդանալոյ նորա առանց ի զուր դժուարակրութեան վայելչացուցանելոյ զպարտառութիւն իւր առաջնորդական» եւալեն:

Ատրպատականի թագաժառանգին ալ զոյդ եպիսկոպոսներու մասին ներսէս Ե. Կաթողիկոսը հետեւեալ յարգալիք գրութիւնը կ'ուղղէ.

#### Գերաստիճան Ազիզ Խան

Երախտիք և բարերարութիւնք ցուցեալք՝ ի հանգուցեալ Սրաս Միրզայէ առ Սր. Աթոռն էջմիածին և յատկապէս առ մեզ, ոչ ելանեն երբէք ի մտացս, և պարտաւոր համարիմ զանձն իմ մինիլ առ նա և առ յիտագայս նորա միշտ երախտագէտ, և յուսամք իսկ զի և նորին Արքայական Բարձրութիւնն ներկայ Վեհափառ Շահն թոռն Սրաս Միրզայի հետեւեալ շաւզացն նախնոյն իւրոյ ոչ արասցէ անպակաս ի մէնջ զքաղցր շնորհ իւր:

«Առաքեցի առ Գերաստիճանութիւն Զեր զՄահակ եպիսկոպոսն Աղիբրէժանի և զԹաղդէսս Եպիսկոպոս Ասպահանու առ ի ներկայանալ Զերում Գերաստիճանութեան և ծանօթանալ ընդ Զեր որք պարտին զնալ ի Պարսս ՚ի նշանակեալ տեղիս, և վայեւել զշնորհ Զեր և այլոց մեծամեծաց գրանն Վեհափառ Շահին»:

Կաթողիկոս Ամ. Հայոց ՆԵՐՍՒԾ

Ի 10 Հոկտեմբեր 1850 ամի  
ի Սր. էջմիածին



ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

#### ՀԱՅՈՑ ԹԱՒՐԻՉԻ

Ինչպէս վերյիշեցի Սահակ Եպիս. Սաթունեանը Թաւրիզ մտաւ 1851-ի Ապրիլ 5-ին և արժանացաւ մեծաշուք ընդունելութեան:

Անոր առաջին գործն եղաւ քաղաքի երևելիներէն և ազդեցիկ անձերէն կազմել «Ծերակուտ Խորհրդարան» մը, որ աջակից և օգնական դառնար իր գործունէութեան: Մինչի նոյն թուի Մայիս ամսու վերջերը Սաթունեանի անունը տարածուեցաւ ամբողջ Ատրպատականի Հայութեան մէջ: Գաւառներէն քահանաներ և ժողովրդական պատգամաւորներ տեսութեան եկան Առաջնորդ Սրբազնին, որուն անունն արգէն յայտնի էր և ժողովրդականութիւն կը վայելէր: Գաւառացի ժողովուրդը Սաթունով անունով կը ճանչնար նորեկ Առաջնորդը:

Այս եռանդուն, ուսումնասէր և ժողովրդանուէր Առաջնորդի մտահոգութեան առաջին գործն եղաւ Թաւրիզի մէջ հիմնել դպրոցական յարմար շէնք մը և զարկ տալ կրթական գործի կանոնաւորման:

«Ծերակուտ Խորհրդարան» իր նպատակն ու մտագրութիւնը յայտնիէ և անոնց համաձայնութիւնն առնելէ յետոյ, 1851 թուի Մայիսի սկիզբէն Սաթունեանը գործի ձեռնարկեց: Բերդաթաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ընդարձակ բակը Հայոց գերեզմանատունն էր, որուն մէկ մասը պիտի մաքրուէր, ուղղուէր, որպէսզի հոն կառուցուէր դպրոցական շէնքը: Ամենէն առաջ որոշ տարածութեան վրայ գտնուած գերեզմանաքարերը հաւաքեց:

Ննջեցելոց ոսկոլներն ալ լեցնել տուաւ եկեղեցոյ ետեր փորուած յատուկ հորի մը մէջ:

Այս երկոյթը շատ ծանը տպաւորութիւն թողուց Թաւրիզի Հայութեան վրայ: «Ծերակուտ Խորհրդարան»ի անդամներէն մէկն անդամ— Յովսէփ Խան Մովսիսեանը ամբոխի բողոքներուն կողմակից եղաւ և սկսաւ Սաթունեանի դէմ պայքարել, դպրոցական շէնքի կառուցման գործը խանդարելու համար: Շատ վրդովուած էին մանաւանդ մեռելատէրերը, որոնք Առաջնորդի արարքը ոճիր ու սրբապղծութիւն համարելով անմիջապէս լնդարձակ և զրպարտիչ բողոքագիր մըն ալ գրեցին ներսէս Ե. Կաթողիկոսին, բայց սա անպատասխան թողուց և քաջալերեց Սաթունեանի ազգօգուտ ձեռնարկը:

Սաթունեանը Թաւրիզի ժամանակակից ռուսական հիւպատոս Նիկոլայ Անդրէիչ Անիչկովի պաշտպանութեան և իր տոկուն կամքին ապաւինած՝ շարունակեց մաքրել ու հարթել այն տարածութըւնը, ուր պիտի կառուցուէր դպրոցական շէնքը: Հակառակորդները պարտուած էին, ամբոխի վայնասունն ու հայհոյանքները լոեցին, Յովսէփ Խան Մովսիսեանը գաղտնի միջոցներով կը ջանար արգիլել դպրոցի շէնքի կառուցման գործը: Այս մասին կան նաև կարգ մը ժողովրդական զրոյցներ, թէ ինչպէս դըպրոցի շէնքի բացուած հիմքերը հակառակորդներու կողմէ կը քանդուէին, բայց Առաջնորդը նորէն շինել կուտար և այլն:

Իրական փաստն այն է, որ 1851 թուականի Յունիս 30ին կատարուեցաւ Թաւրիզի Հայոց դպրոցական անդրանիկ շէնքի պաշտօնական հիմնարկութեան մեծաշուք հանդէսը: Այս մասին ձեռքիս տակ ունիմ շատ լաւ պահուած պաշտօնական փաստաթուղթ մը, որ առաջին անդամ ըլլալով լոյս կ'ընծայեմ իբր պատմական թանկագին նիւթ: Այս փաստաթուղթը 21×27 սանթիմեթը մեծութեամբ, դեղին և մաքուր թուղթ է, դիւրընթեռնելի զրով, ու թա-

նաքով զրուած: Կ'արտագրեմ նոյնութեամբ, բանալով միայն պատիւները.

Հանգամանի գործառնութեանց նորող վիճակաւոր Առաջնորդին Հայոց Ատրպատականի Տեառն իսահակայ Մրազան Արքապիսկոպոսի Սադունեանց.

Ի մտանել նորին Բարձր Սրբազն Խսահակ Եպիսկոպոսին Սադունեանց՝ 'ի Դաւրէժ քաղաք յԱռաջնորդութիւն և ՚ի հովութիւն ժողորդեանս հայազգեաց, կանխագոյն քան զամենայն գործառնութիւնս իւրումն հոգեորական պաշտամանց վերաբերեալս 'ի գործ յեկեղեցական և 'ի քաղաքական, նորին Բարձր Սրբազնութիւն իւրն արիաջան և ազգասիրական հետազօտութեամբ, ձեռնարկեալ է նորոգ հոյակապ և հոչակաւոր վարժարանի հիմնարկութեան ՚ի Գանձակ Շահաստան Դաւրէժ քաղաքիս, արժանաւորն ասեմ լինել համբաւոյ և գովանին յիշատակաց, որոյ ահա հանդէս օրհնութիւն և հիմնարկութեան շենքաշուք փառօք, կատարեցաւ ի ՅՈ Յունիս ամսոյ, յորում ընթերցաւ օրհնութեան և քաջալերական ճառ, 'ի Տեառնէ վասն ամենաբարեպաշտ հզօր Կայսերն Ամենայն Ռուսաց Նիկոլայ. Պաւլօվիչի և ողորմած և Վսեմափայլ Նասրատին Շահին Պարսից լնդ նոսին և բոլոր վեհազնեայց, ազնուականաց, և իշխանաւորաց, իւրաքանչիւրոց ցեղից: Անդ էր տեսանել ի հանդիսին բազմաւոր անձինս, թէ յեկաց և թէ բնակաց, ընդ նոսին և հիւպատոսն ուսւաց իւրական աստիճանաւորօք և մի ոմն յերկելեացն Պարսից, 'ի կողմանէ Պայծառափայլ Համզա Միրզայ Շահաստային, այլև վեհազնեայք և իշխանաւորք բազումք ի Քրիստոնէից: Գոհութիւն արարչին յաւիտենից, որպէս ցանկայր հայազգի բընակիչքս 'ի Դաւրէժ մեծաւ փափագանօք, 'ի վաղուց խաւարի կացեալքս, սպասեալ մնալով լուսաւորութեան, 'ի Տեառնէ պարգևեցաւ հօտիս նորին Բարձր Սրբազնութիւն, որոյ շնորհիւ և անխոնջ ջանիւ, յուսամք զի կատարիցի վայելչապէս Աստուածահաճոյ շինուածս կառուցման վար-

ժարանի, որոյ և պէտս շինութեան, մինչև ցարդ լրացեալ է ստորագրութեամբ ութուն անձանց, մինչ հինգ հարիւր թուման դրամոց, որոնց անուանք մնայ յայլում ժամանակի հրատարակել. այսուհետև սպասեալ մնայ ժողով հասարակաց յարտաքին եղեալ հայոց բարեպաշտօն Քրիստոնէից, օգնութեան Աստուծանուէր արդեանց և ողորմութեանց, կարկառմամբ խնամարկելոյ, ’ի պէտս և ’ի ծախս թերի մնացեալ շինութեանց Ազգասիրական Վարժարանին հայոց Թարգիզու, ’ի փառաւորութիւն հայկազնեաց տանս, և ’ի պարծանս ընդհանուր ազգիս հայոց Քրիստոնէից:

Ի ներքոյ հիման վարժարանին՝ եղաւ փորագրեալ յարձճեայ առաջարկի այսպիսի նշանագրութեան արձան իմ։ ’ի 1851 ամի Փետրին, Յունիսի 30, թիւ Հայոց ՌՅ: Թիւ Պարսից 177.

1. Ողորմութեամբն Ասուծոյ հիմնարկեցաւ վարժարանս հայոց Դաւթիծու, ’ի ժամանակս Կայսերն նիկօլայ Պալլօվիչի ամենայն Ռուսաց։

2. Եւ ’ի Տէրութեան Անգղիացւոց Վիքորեայ Վեհափառ Թագուհոյն։

3. ’ի Թագաւորութեան Նաստադին Շահին Պարսից։

4. ’ի Հայրապետութեան Տեառն ներսիսի Ե. Կարուդիկոսին Ամենայն Հայոց։


5. Յիշխանութեան Համզա Միրզայ Շահզադային բաղադիս։

6. ’ի կօնսուլութեան ռուսաց նիկօլայ Անդրէիչ Անիշկովին։

7. ’ի կօնսուլութեան Անգղիացւոց Մատր Ստեֆենսին։

8. Աշխատախրութեամբ Տեառն Խամակայ Եպիսկոպոսի Սագունեանց վիճակաւոր Առաջնորդի Թադէոսի Առաքելոյն։

9. Ամիր Քեաբիր Աքարաքը Ազամ Միրզայ Թաղի Վազիր Իրան։



ՊԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ ԱՐԱԿԵԱՆ ԳՐԱՄՄԱԿ ՇՐԱՄԱԿ ՇԽԱՔ, ՀԻՄՆԱԼ 1851 ԹՈՒԻՆ  
Ա.ՏՐԱՎԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՐԱԿԵԱՆ ԳՐԱՄՄԱԿ ՄԱՀԱՆԱԿ ԵՊԻԿԱՆ Ա.ԹԻՄՈՒՆԵԱՆԻ ՀԱԲԵՐՆԱ:

յառաւ մովքացը և պատճենագործ մաս ու  
ներզարդություն պահպանի առաջակա մաս իրավունք  
ու բաժարաբերություն պահպանագործ մաս առաջակա մաս  
ուղարկություն ու առաջակա մաս առաջակա մաս

## ԹԱՐԻԶԻ ԿԱՅՈՑ ՆԵՐՍԻՄԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԻ ԶԱՆՔԵՐՆ ՈՒ ՃԻԳԵՐԸ

Թաւրիզի Հայոց ազգային վարժարանի հիմնադրու-  
թեան պաշտօնական հանդէսէն յետոյ, Առաջնորդ Սահակ  
եպիս.ը յատուկ գրութեամբ մը — «Յորդորակ ծանուցո-  
կան», կը յայտնէ, որ դպրոցը յանուն Ներսիսի Շնոր-  
հալւոյ պիտի կոչուի «ՆերՍիՍեԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ», յետոյ  
կ'առաջարկէ կազմել «Ազգային Միաբանական Ընկերու-  
թիւն» մը, որմէ ընկերել «Ժողով մի, զի եղիցին նոքա հա-  
մակամ խորհրդարան ի գործ տնտեսական կառավարու-  
թեան և գործակալութեան վարժարանին, միանգամայն և  
ազգային ընկերութեան, զի հոգասցեն յամենայն վերա-  
բերեալ գործս նորա անհապաղ հետազոտութեամբ իւրա-  
քանչիւր ոք ըստ իւրում աստիճանի գործավարութեան,  
բայց մեծ և առաջինն ՚ի նոսա լինիցի հոգաբարձուն, յոր-  
մէ ընդհանուր վերատեսչութեանց և գործոց բարեկար-  
գութեան վարժարանին կախեալ կայ, և ստորագրեալքն  
իցեն կառավարիչ և գործակալք կատարել զպակասութիւն  
թերութեանց վարժարանին գիտել զեկամուտ և զծախս,  
յորդել զաղբիւրս արդիւնաւորութեանց, հաւաքել զարդիւն  
ընկերութեան և ժողովել յառանձին յարկեղ, և զայլ ա-  
մենայն պիտոյս պահանճեալս ՚ի յառաջադիմութիւն նորա  
անշուշտ հոգալ, և ընդ յայս իսկ համաձայն ժողով խոր-  
հրդականութեան կառավարչաց և գործակալաց վարժա-  
տան և ազգային ընկերութեան մի՝ լինիցի երբեք աղմուկ  
և խոռվութիւն, այլ խաղաղութիւն, բարեսրտութիւն և  
Աստուածահաճոյ կամս, լուցեալ զջան հայրենասիրութեան

օր քան զօր, ազգային շուք և վայելչութիւն առաւել դատելով քան անձին փառս: ... Վասն ոյր բարեկարգեմ՝ ի հաստատութիւն վարժարանին զնոյն խորհրդական ժողով ութից անձանց՝ ի ներքոյ:

Ա. Հոգաբարձու նոյն ինքն ես Վիճակաւոր Եպիսկոպոս Հայոց Աւրպատականի:

Բ. Տէր Գարըիէլ Աւագ Քահանայ, ստորադրեալ օգնական հոգաբարձուի:

Գ. Յովսէփ Խան Գ. Մովսիսեան, կառավարիչ և գործակալ ընդ նմին և ներքոյ գրեցեալ անձինք.

Դ. Աղա Առաքել Մելիք Մինասեան

Ե. Մօսիօ Թօմաս Ճելալեան

Զ. Յարդի պարօն Հայրապետ Բաղրեան  
Է. Աղայ Աւետիս Մհատի Անանեան

Ը. Յարդի Մհատի Խաչատուր Մհատի Պետրոսեան»:

Այս «Յորդորակ Ծանուցողական» մեծադիր, երկթերթ գրութեան վրայ վերոգրեալ ութ անձերը պիտի ստորագրէին հետեւեալ ծանօթութեան տակ.

«Ստորագրեալ անձինքս համաձայն հաճութեամբ ընդունիմք բարեկարգեալ հաստատութիւն՝ ի Զերում Սըրբագնութենէ զոր ամենայօժար սրտիւ բարեհաճեալ մեր խոստանամք անթերի՝ ի կատարումն ածել ամենայն վերոգրեցեալքն պահանճեալ պարագայիւք,՝ ի պարծանս ազգին և՝ ի պայծառութիւն ներսիսեան Վարժարանի Դաւրէժ քաղաքի, ուստի ստորագրեմք»:

Բայց ստորագրած են միայն երեք հոգի:

Խաչակիր Տէր Գարըիէլ Աւագ Քահանայ

Յովսէփ Գ. Մօսիսէով

Մհատի Խաչայտուր Մհատի Պետրոսեան»

Յայտնի չէ թէ ինչու միւսները ստորագրած չեն: Ուշագրաւ է, որ երեք ստորագրողներէն մէկն է Յովսէփ Խան Մովսիսեանը: Այս ազգեցիկ անձը, որ ուստաց հիւպատոսարանի թարգմանն էր, նախ դարձաւ Սաթունեանի կա-

տաղի հակառակորդն ու ամբոխավարը՝ դպրոցի կառուցումը խանգարելու համար: Սաթունեանը այս մարդու մասին հետեւեալ տողերը կը գրէ ներսէս Ե. Աշտարակեցի Կաթողիկոսին.

«... Վասն Յովսէփի Խանին արդէն բազմօք առաւելեալ լինեն նորին չարագործութիւնք և որոց ակն չունէաք տեսանել և լսել: ... Ուստի առաջի առնեմ Զերում Բարձրագոյն Օծութեան, զի սա որ յաննշան ազգէ սերեալ՝ հարստացեալ շնորհիւ երանալ կօնսուլին ուստաց զպատիւ և կամ մասնաւոր ինչ յառաջադիմութիւն կամի անդրէն զնշանաւորս և զպատուելիս քաղաքիս կոխան առնել և օր աւուր յարացուցանել զխոռվութիւն ամբոխից, և որպէս պատմեն հասարակ միաբանութիւնք, յօրէ անտի որ սա յեցեալ ունի յիշանութիւն, աղմուկ և վէճ չէ դադարեալ քաղաքիս երբեմն ի հոգեորականս խառնեալ և երբեմն ի մարմնաւորականս, խախտէ զկարգ և զբարեկարգութիւն ազգային տնօրինութեան»:

Կ'ենթադրեմ, որ Սաթունեանի այս գրութիւնը ստանալէ յետոյ Աշտարակեցի Հայրապետը կը գրէ Թաւրիզի ուստական հիւպատոսին և ասոր միջոցով կը զսպէ Յովսէփի Խանի սանձարձակութիւնները: Դպրոցի հիմնարկութեան հանդէսէն յետոյ, ինչպէս տեսանք, Յովսէփ Խանն ալ Առաջնորդի կողմէ նշանակուեցաւ զպրոցի «Խորհրդական Ժողով»ի անդամ: Այսուհետեւ Յովսէփ Խանը դադրեցուց իւր պայքարը, բարեկամացաւ Սաթունեանի հետ, դարձաւ անոր հրու կամակատարներէն մէկը և մինչեւ իր մահը կապուած մնաց Առաջնորդարանի և զպրոցի գործերուն հետ:

Առաջնորդի, «Խորհրդական Ժողով»ի և Շահարակ ժողովրդեան» ցանկութեամբ և «յատկապէս խնդրանօք նոցա» դպրոցի շինութեան ընդհանուր վերակացու և ծախսարար նշանակուեցաւ «արիաջան» և «հաւատարիմ» Աւագ Վարդանեանը, որուն Սաթունեանը կը գրէ հետեւեալը.

«... Կացուցանել զքեզ լիակատար վերահասութիւն

շինութեան վարժարանին, առ ի իշխել անդրէն ամենայն առից, տրից, ելից և մտից, պահանջութեանց և ծախանց նորա գիտելով զամենայն հարկաւորութիւն և զպակասութիւն իւրաքանչիւր ժամանակի տալ և հատուցանել պիտոյից ուր հարկն է, և ընդունիլ յորոց պարտն է ըստ ժամանակին հաշուարարութեամբ նորա մատուցանել մի ըստ միոջէ յայտնապէս ժողովրդեանն քաղաքիս, որք ունին յայնժամ միաբանութիւն գոհունակութեան առնել զջէնջ մեծաւ երախտապարտութեամբ»:

Շինութեան գործը այսպէս կարգադրելէ յետոյ, հաշիւ ըրին, որ հաւաքուած հինգ հարիւր թումանը ծախքերու համար քիչ պիտի գայ:

Սաթունեանը գիմեց նաև արտասահմանի հայոց օգնութեան: Նամակներ զբեց կ. Պոլիս Հայ Ամիրաններուն և բարերարներուն, իչպէս նաև Մոսկուա և Պետերբուրգ՝ Լազարեան գերգաստանի բարեգործ և ուսումնասէր անձերուն, խնդրելով որ նիւթական օգնութիւն ցոյց տան դպրոցի շէնքը վերջացնելու համար: Նամակ կը գրէ նաև Թագէոս Խան Պահլաւունեանցին՝ «Առաջին Ասպետի Պարսից Տէրութեան» խնդրելով յօդնութիւն և ձեռնտուութիւն փութալոյ ազգասիրական վարժարանիս»:

Սաթունեանը «Պայծառափայլ Ստեփաննոս Խան Մելք Մինասեանցին» կը գրէ «Զամենայն ջանս ջանամք ի հաստատութիւն նորոգ հոյակապ և հոչակաւոր վարժարանի կառուցման, արժանաւոր Զերում հայրենեաց և ազգասիրութեան և ի փառաւորութիւն և ի պարծանս ընդհանուր Ազգիս հայոց, վասնզի տեսաք միանգամայն ի սմա անշրջութիւն և անվարզութիւն հոգեկան լուսաւորութեան հայկագնեայ մանկանց ոյլ վասն հոգ կալաք կանխագոյն քան զամենայն և պարտաւորութիւն մեր վարկաք առաջին, խնդրել տանս արամազնէից լուսաւորութիւն և պայծառութիւնք»:

Ապա կը խնդրէ, որ ոչ միայն ինքը՝ Ստեփան Խանը

դրամապէս օժանդակէ, այլև յորդորէ որ ուրիշներն ալ մասնակցեն հանգանակութեան, որպէսզի դպրոցի կառուցման աշխատանքները արագութեամբ առաջ տարուին:

Սաթունեանի այս անձնուէր և եռանդուն աշխատանքը, գէպի ազգային դպրոցն ունեցած սէրը՝ հիացմունքի և յաւէտ յիշատակութեան արժանի է:

Մինչև Սեպտեմբերի վերջը՝ 1852, արդէն պատրաստէին նորակառոյց վարժարանի երեք դասարանները, այսինքն արդի Առաջնորդարանի ամբողջ ներքնայարկը, (այժմ ուսուցչանոց, դասարան-գրադարան և հիւսակողմի մէկ անգործածելի տախտակամած դասարանը, ինչպէս նաև ծառայի տեղն ու փայտանոցը):

Սաթունեանը և «Խորհրդական Ժողովը» կը կազմեն նաև դպրոցի կանոնադրութիւնը՝ 1851ի աշնան:

Կանոնադրութեան Բ. յօդուածը կը պարզէ նորակառոյց դպրոցի նպատակը.

«Նպատակ վարժարանիս լինելոց է կրթել և հրահանգել զմանկունս Հայոց Ատրպատականի հաւատարմութեամբ ծառայել մեծ տէրութեան Պարսից և՝ յերիս լեզուս՝ Պարսից, Հայոց և նոյնպէս՝ կամ Գաղղիացւոց և կամ Ծուսաց, որոնց վարժապետն ժամանակաւ նախ դիւրին իցէ ի ձեռս բերել չափաւոր ոռճկաւ»:

Հիմնադրութեան աշխատանքին զուգընթաց կը թանուէր Սաթունեանը իր նախագահութեամբ կազմած էր նաև դպրոցի Հոգաբարձութիւնը՝ «Խորհրդական Ժողովը»: Ասոր պիտի աջտկցէր նաև, «Ծերակուտ Խորհրդարան»ը, որուն անդամներն էին Թաւրիզի վաճառականներն ու երկելիները՝ թուով ութ հոգի: «Խորհրդական Ժողովի իւրաքանչիւր անդամն ունէր իւր պարտականութիւն, սակայն ընդհանուր գործը պիտի տարուէր հաշտ ու համերաշխ: Կանոնադրութեան համաձայն հոգաբարձութեան առաջին անդամի պարտականութիւնն էր «հայթայթել ի ձեռս բերել զհրովարտակը և զհրամանագիրս վասն ամե-

նայնի, որ վերաբերի ի բարեկարգութիւն Վարժատան՝ և կալուածոց նորաս Նա պարտի վասն շահուց Վարժատան խօսիլ ի դրունս մեծամեծաց բարձր տէրութեանն Պարսից թէ հարկաւորեցիւ։ Ժ. յօդուածի հիման վրայ «Խորհրդական ժողով»ի անդամները պարտաւոր էին դպրոցի համար գտնել անշարժ կալուածներ, ճրիավարժ աշակերտներ ընդունել ևայլն։

Ներսիսեան Ազգ. Վարժարանը կանոնադրութեան համաձայն պիտի ունենար 4 դասարան։ Դպրոցի ծրագիրն ալ նախատեսուած էր կանոնադրութեան մէջ։

Դպրոցի համար գնուեցան գրասեղաններ, գրենական պիտոյքներ, վառելափայտ ևայլն, Իրր տեսուչ հրաւիրուեցաւ Տէր Յովսէփ Քահանայ Տէր Յովսէփեանը, (որ 1847ին ձեռնադրուած էր քահանան)։ Սա պիտի աւանդէր կրօն և հայոց լեզու, Վարձուեցաւ նաև «Մանկավարժ» Պանդուխտ Յակոր Վարժապետ Եղիազարեանը, որ պիտի աւանդէր կրօն, հայոց լեզու, եկեղեցականան ձայնագրութիւն, հայոց պատմութիւն և թուաբանութիւն։ Յայտնի չէ թէ ով եղաւ պարսից լեզուի դասատուն, կամ Քրանսերէնի և ուսւերէնի դասերը առաջին տարուընէ աւանդուեցան, այս լեզուներուն համար ուսուցիչներ գտան։

Դպրոցի բացումն ալ կատարուեցաւ հանդէսով՝ Առաջնորդ Սահակ Եպիս.ի նախագահութեամբ և հայերու խուռն բազմութեան ներկայութեան։ Արձանագրուած աշակերտներու թիւը 60ի հասաւ, որոնց մեծ մասը ճրի էին, իսկ շատ քչերն ալ աննշան թոշակ պիտի վճարէին։ Դպրոցի բացման հանդէսի կրօնական արարողութենէն \*) յետոյ,

\*) Իր տեղին մոռացանք յիշել, որ Ներսիսեան դպրոցի հիմնադրութեան հանդէսին պաշտօնական հիւրերը ներկայ եղան և շատ գոհ մնացին, Սահակ Եպիս.ը Եպիսկոպոսական պատարագիչի հանդերձներով զգեստաւորեալ, ինչպէս նաև քահանայից դասը և դպիրները, նախ կրօնական արարողութեամբ սկիզբ դրաւ հիմարկութեան հանդէսին։ Սաթուն-

Սաթունեանը յաւուր պատշաճի քարոզ խօսեցաւ, յորդորելով որ ժողովուրդը սիրով և սրտանց կապուի դպրոցին, և բոլորն ալ աշխատեն որ, այդ կրթական նորակառոյց տաճարը մտաւոր լոյս տայ հայ մանուկներուն և պատանիներուն։

Այս բոլորէն յետոյ 1852 թուի Սեպտեմբերի կէսերուն Թաւրիզի Հայոց նորակառոյց Ներսիսեան Վարժարանի դասաւանդութիւնները սկիզբ առին, իսկ Սաթունեանն ալ հոգով սրտով ուրախ և գոհ՝ կը հետեւէր դպրոցի կրթական և դրամական գործերու կանոնադրման։ Առաջնորդը նամակներ գրեց իր բարեկամներուն և բարերարու կրթասէր անձանց՝ նոր Զուղա, Կալկաթա, Պետերբուրգ, Մոսկուա, Թիֆլիս և Էջմիածին՝ խնդրելով, որ դպրոցի համար դասագրքեր ուղարկեն։ Միաժամանակ հետամուտ էր, որ աւելի ուսումնական, փորձառու և հմուտ ուսուցիչներ գտնէր։ Այս մասին ալ նամակներ գրեց Կովկաս և Վան անհամբեր սպասելով դրական պատասխանի։ Անոր ամբողջ մտահոգութիւնն էր գտնել ուսուցիչ մը «արժանի ուսմամբ և գիտութեամբ»։

Թաւրիզի ազգային և դպրոցական գործերը կարգադրելէ յետոյ Սաթունեանը պատրաստութիւն տեսաւ Թեմական այցելութեան երթալու։ Դպրոցի ղեկավարութիւնը յանձնեց Տէր Յովսէփ Քահանայ Տէր Յովսէփեանին հրահանգելով «Ճանադիր լեր վասն պաշտպանութեան վարժարանին»։ «Հոգևորական գործառնութիւնս» յանձնեց «Աւագ Քահանայ Տէր Գաբրիէլին, և Երեցփոխ պարոն Աւագին Մելիք-Արքահամեան (Աւագ Դայի անունով յայտնի)»

Եան Սրբազնը դրաւ առաջին քարը, ապա անոր օրինակին հետեւեցան Պարսից Թագաժառանգի ներկայացուցիչը, ուսուաց և անգլիական հիւպատոսները, քահանաներ, քաղաքի երեւելիները և բազմաթիւ բարձրաստիճան հրաւիրեալները։

ընդ տեսչութեամբ Գերամեծար Աղայ Առաքելին Մէլիք  
Միհասեանց՝ մինչև ցվերադառնալս իմ»:

Եւ 1851ի Հոկտեմբերի վերջերը Սաթունիանը իր  
թեմի ժողովուրդին այցելութեան գնաց, Անցաւ Խոյ,  
Մակու, Ս. Թաղէսո Առաքեալի վանքը, ներկայացաւ Մա-  
կուի Սարդար Ալի Խանին Ապա անցաւ Սալմաստ, ուրկից  
1852ի Փետրուար 24ին նամակ մը կը գրէ Աղաշկերտի Ս.  
Յովհաննէս վանքի (Իշխիլիսէ) միաբան Կարնեցի Կարա-  
պետ ուսումնական վարդապետին, խնդրելով որ կամ ինքը  
գայ և կամ հմուտ վարժապետ մը զրկէ Թաւրիզ՝ նորա-  
րաց դպրոցին համար: Ատրպատականի Հայոց Թեմը 1850-  
ական թուականներուն ունէր 129 գիւղ և քաղաք: Սահակ  
Եպիսկ կազմել կուտայ իւր թեմի Հայութեան ընդհանուր  
շնչագրութիւնը ինչպէս նաև բազմատեսակ հարցեր կ'ու-  
սումնասիրէ այդ շրջագայութեանց ընթացքին՝ ժողովուր-  
դի վիճակը բարելաւելու համար: Սալմաստի քանի մը մեծ  
գիւղերու մէջ՝ Հաֆթուան, Փայաջուկ և Ղալասարը կը  
կանոնաւորէ դպրոցական գործերը Թեմական վիճակագը-  
րութեան ժամանակ նկատի առած են իւրաքանչիւր քա-  
ղաքի և գաւառի մէջ ապրող հայերու տուներու (ընտա-  
նիք) ինչպէս նաև արական և իգական անձանց թիւը՝  
«թողեալ անորոշ մի միայն զարուս և զէս նշանակել Ղա-  
րադաղու, յորոց բացի տնահամարէ անհնար գտաւ իմա-  
նալ զորքանութիւն անձանց նոցա վասն գեղջկական ան-  
կիրթ վարուց իւրեանց չյօժարեցան տալոյ տեղեկութիւն»:

Առաջնորդի բացակայութեան ատեն, 1852ի գարնան  
Թաւրիզի Հայոց մէջ անհամ վէճեր և խոռովութիւններ  
կային: Սաթունեանը սիրալիր նամակ մը կը գրէ «Բար-  
ձըրաստիճան, բարեծնունդ Յովսէփ Խան Մովսէսեանին»  
խնդրելով, որ սա ըլլայ իր «վէքիլը» և հանդարտութեամբ  
քննելով գործերը վերջ տայ խոռովութիւններուն, որոնց  
վլսաւոր դերակատարն էր Լախլուխի Գրիգորը: Այս խոռո-  
վարար և անպիտան մարդը քիթը կը կոխէր նաև դպրոցի

գործերուն մէջ՝ դրամ ուտելու ախորժակով: Յովսէփ Խա-  
նը կրցաւ ուուսաց հիւպատոսի միջոցով գսպել Լախլուխի  
Գրիգորի սանձարձակութիւնները: Սաթունեանին և դպրո-  
ցին թշնամի և հակառակորդ Յովսէփ Խանը դարձած էր  
Առաջնորդի բարեկամն ու դպրոցի պաշտպանը և ամէն  
կերպով կաշխատէր հաճելի դառնալ ժողովուրդին:

Թեմական շրջագայութեան ընթացքին իսկ Սաթուն-  
եանը՝ հեռու է հեռու կը ղեկավարէր դպրոցի շնութեան  
աշխատանքները:

«Գերամեծար Աղա Պարոն Աւագ Վարդանեանին» Առաջ-  
նորդը 1852ի Ապրիլ 14 ին կը գրէ.

«Որպէս և յագաջագոյն գրեալ էիր ինձ, վասն վար-  
ժարանի փայտից, իմացիր այս տեղւոջ չեկն ի գլուխ,  
անաջողութեամբ: Բայց վասնզի գուք գրեալ էիք թէ ես  
հոգացեալ եմ, վասնորոյ գրեմ հարազատութեան Զերոյ  
յայդ տեղւոջ հոգ կալեալ արժանաւոր փայտից, զորս առ-  
եալ պատրաստեսջիք նոյնպէս և ամենայն պարագայից,  
որ Աստուծով զկնի 15 աւուրց դիմեցից առ Զեզ, և ըստ  
հրամանի Վեհափառ Կաթուղիկոսին, որ գրեալ է մեզ և  
յուսադրեալ ի գալս մեր պատրաստ լինեցի շնորհիւն Աս-  
տուծոյ ի կատար հասուցուք զամենայն պարագայս Ճեմա-  
րանիս այսը օգնականութեամբ ազգասէր Ժողովրդականաց  
մերոց բարեպաշտից»:

Զմիւնիոյ «Արշալոյս Արարատեան» թերթի իսլբագիր  
Ղուկաս Գրիգորեան Պալտազարեանին Սաթունեանը Սալ-  
մաստէն նամակ մը կը գրէ 1852 Փետրուար 28 ին՝ ինդ-  
րելով «Առաքել վասն վարժարանի քաղաքիս զոմն վարժա-  
պետ, որ ունիցի բաւական գիտութիւն պատմական ար-  
հեստից, քերականութեան և ճարտասանութեան, թուաբա-  
նութեան, զոր ունիմ ըստ արժանոյն շահել և ինսամարկել,  
և կրկն խնդրեմ մինչ ի 1 ին Մայիս ամսոյ աստանօր  
պատրաստ գտանել»:

Աղա Պետրոս Ներսիսեանցը դպրոցին կը նուիրէ

Երկու հարիւր «սահար դռան», խոստանալով ամէն տարի տալ այդ գումարը:

Սաթունեանը կը խնդրէ Յովիաննէս և Խաչատուր Լազարեաններէն, որ Լազարեան Ճեմարանի որդեգիր սաներէն երեանցի Ոսկան Տէր Գէորգեան Յովիաննիսեանցը գայ Թաւրիզ և պաշտօնավարէ Ներսիսեան Վարժարանի մէջ: Յայտնի չէ թէ Լազարեանները ի՞նչ ընթացք տուին այդ խնդրանքին: Ի վերջոյ Տէր Գէորգեանը Թաւրիզ չեկաւ:

Սալմաստէն հեռանալէ առաջ Սաթունեանը կը յորդորէ Փայաջուկի երելիններուն՝ Բուղաղ Յովիաննէսեան, Միրզա Յակոբեան և Աւետիք Ղուկասեան, որ աշխատեն «վասն շինութեան արժանաւոր վարժարանին, և ապա հոգալ ի յընտրութիւն վարժապետի և դաստիարակի»:

Սաթունեանը 1852ի Մայիս 12ին վերադարձաւ Թաւրիզ մեծ ուրախութիւն պատճառելով ժողովուրդին, որ անհամբեր անոր գալուն կը սպասէր:

Նասրադդին Շահը 1852ի Օգոստոս 3ին Թէհրանի մէջ ծանր արկածէ մը ապահով ազատեցաւ: Այս առթիւ Թաւրիզի մէջն ալ ժողովրդական խրախճանքներ տեղի ունեցան, հրավառութիւն կատարուեցաւ: Սաթունեանի հրահանգով Թաւրիզի ամբողջ հայութիւնը կը հաւաքուի Մարալան թաղամասի մէջ գտնուող Յ. Աստուածածին ուխտատեղին, ուր Առաջնորդի նախագահութեամբ կը կատարուի Կայսերական հանդիսաւոր մաղթանք և ապա տեղի կ'ունենան ժողովրդական ուրախութիւններ:

Սաթունեանի առաջնորդութեամբ ժողովրդական խուռներամ թափօրը կ'ուղղուի դէպի Թագաժառանգ Համզա Միրզայի պալատը: Առաջնորդը և քահանաներն ու հայերելինները կը ներկայանան Թագաժառանգին և իրենց խնդակցութիւնը կը յայտնեն: Թագաժառանգ խորապէս կ'ազդուի, մինչ Հայոց Առաջնորդը բազկատարած կ'աղօթէ և քահանաները կ'երգեն «Հրաշափառ Աստուած» շարականը: Ապա Առաջնորդը օրհնութեան և բարեմաղթու-

թեան աղօթքներ կ'ըսէ: Թագաժառանգը այս բոլորէն շատ գոհ կը մնայ, կը պատուասիրէ Առաջնորդն ու շքախումբը և կը հարցնէ թէ:

— Ի՞նչ վիճակի մէջ է հայոց դպրոցի կառուցման գործը, կը շարունակուի՞ թէ կանգ առած է:

Առաջնորդը կը պատասխանէ թէ դրամի չգոյութեան պատճառով կառուցման գործը կիսատ մնացեր է:

Այս ատեն Համզա Միրզա Թագաժառանգը՝ ի գնահատութիւն հայոց ցոյց տուած հաւատարմութեան և ռւրախութեանց զգացումներուն՝ կը խոստանայ, իբր օժանդակութիւն գումար մը նուիրել յօգուտ դպրոցի շենութեան:

Ուշագրաւ է նաև այն փաստը, որ Թաւրիզի ոռւսաց հիւպատուը հարցապնդման ենթարկած էր Հայոց Առաջնորդին, թէ ինչու ոռւսաց հիւպատոսարանի համաձայնութիւնն ու արտօնութիւնը առնուած չէր դպրոցի հիմնարկութիւնը կատարելէ առաջ:

Սահակ Եպիստիւ. Սաթունեանը 1853ի գարնան նամակ կը գրէ Վան՝ Վասպուրականի Առաջնորդ Գաբրիէլ Արքեպ. Շիրոյեանին, խնդրելով, որ Թաւրիզի Ներսիսեան Վարժարանի համար ուսումնական և բանիքուն վարժապետ մը գտնեն և ուղարկեն: Սաթունեանի ցանկութիւնը կը կատարուի: Գաբրիէլ Արքեպ. ի հրամանով Մարտիրոս Վարժապետ Փափազեանը\*) ճամբայ կ'ելլէ դէպի Թաւրիզ: Փափազեանը իր անտիպ ձեռագիր յիշատակարանի մէջ հետևեալը կը գրէ այս մասին, 1853ի Յունիս 11ին.

« . . . Մարգարեանը պ. Միքայէլի \*\*) հետ ուղնորե-

\*) Ապա Մեսրոպ Թահանայ և յետոյ Վարդապետ Փափազեան, որուն որդիներն են Գրիգորիս, Յուսուբ, Վրթանէս՝ զրադէտ, Վահան - Կոմս՝ ազգային գործիչ, Ներսէս (յետոյ Մաշտոց Վարդապետ, նահատակ՝ 1915ին): Ասոնցմէ ողջ է միայն Վահանը:

\*\*) Գրական ծածկանունով Առանձանի հայոց դպրոցական և ազգային գործերու պատմութեան մէջ կ'անմահանայ իր արդիւնաւոր աշխատանքներով:

ցանք ի Թաւրիզ. ըստ որում տեղոյն առաջնորդ Սադուն-  
եան Սահակ Եպսն. վարժապետ խնդրած էր Վանայ. երբ  
որ հասայ անդ կարգեց զիս նոյն տեղի Ս. Ներսիսեան  
Վարժարանի ուսուցիչ. մի քանի ամսից յետոյ Ժրաջան  
աշխատութեամբս կարողացայ մի հանդիսաւոր քննութիւն  
ներկայացնել ի տես բազմամբոխ ժողովրդոց. սակայն նոյն  
տեղի Տէր Յովսէփ Քահանայի ծածուկ մեքենայագործու-  
թեամբ առաջնորդն սկսեց խեթիւ հայիլ յին. և եռ հրա-  
ժարականս տալով վերտարձայ Փէյէճիւկը (1854. Մարտ  
10) ուր մի ժամանակ ուսուցչական պաշտօն վարեցի տեղ-  
ոյն մի քանի մարդկանց նուիրատվութեամբ»:

Մարտիրոս Վարժապետ Փափաղեանը սակայն հազիւ  
ութ ամիս (1853 Յուլիս—1854 Մարտ) պաշտօնավարեց  
Ներսիսեան Վարժարանի մէջ, ուր աշքի ընկաւ իր եռան-  
դուն աշխատանքով և հմտութեամբ, որոնց շնորհիւ հա-  
մարձակեցաւ իւր աշակերտները հրապարակային ռեան-  
դիսաւոր քննութեամբ ներկայացնել բազմամբոխ ժողո-  
վըրդոց»: Սակայն հետագային Փափաղեանը իւր արդիւ-  
նաւոր գործունէութեամբ դարձաւ Թաւրիզի հայոց կրթա-  
կան, թատերական և ազգային նշանաւոր դէմքերէն մէկը:  
Այս մասին յետոյ:

Ներսէս Ե. Կաթողիկոսը ի քաջալերութիւն Սաթուն-  
եանի ժողովրդանուէր և կրթասէր գործունէութեան, 1853ի  
Հոկտեմբեր 21ին, Թիֆլիսէն գրեց կոնդակ մը, որմէ կար-  
տագրեմ հետեւալ տողերը.

« . . . Վասն յառաջադիմութեանց ձերով առաջնորդական հո-  
գունակութեամբ սկզբնաւորեալ շինութեանց և կահաւորութեանց  
ուսումնարանին Հայոց ի Դավթէժ քաղաքի. ընդ որում ընկալեալ  
և զգրութիւնս հարազատից որբոյ Մայր Եկեղեցւոյն իւրեանց  
Կաթուղիէ Եջմիածնի և մեր մեծարու Աղայ Առաքել Մելիք Մի-  
նասեան և եղբօր նորա բարձրագահ Ստեփան Խանի բազում ու-  
րախութեամբ սրտի իւրեանց վասն սկզբնաւորութեանց այնմ ու-  
սումնարանի, և առաւել ջատագովութեամբ վասն ձեր առաջնոր-  
դական յատկացեալ պարտաւորութեամբ հոգունակութեանց վասն

ուսումնարանի մանկանց ժողովրդեան հօտին հաւատացելոց ձե-  
րում առաջնորդութեանց բազում մխիթարութեամբ հոգւոյ մերոյ  
մատուցանեմք և մեք ձերում սրբազնութեան զմեծ գոհունակու-  
թիւն մեր յաղագս կարգելոյ Աստուածահրաման առաջնորդական  
բարեջանութեամբ ջատագով ձեզ զիշխանսն և զհասարակութիւն  
ժողովրդեան որդւոց Սրբոյ Առաքելական եկեղեցւոյ Հայոց:

« Փառք Տեառն Աստուածոյ մերոյ, որ արժանի արար զմեզ  
լսել զայսպիսի շնորհապարտութիւն ժողովրդեան յաղագս իւ-  
րեանց վիճակաւորի քան զոր առաւել մխիթարութիւն ոչ կարէ  
լինիլ մերում սրտի, գուցէ և ամենից եկեղեցական ծայրագոյն  
տեսչութեանց: Արժանաւորեսցէ Տէր զայսպիսի ջատագովութիւն  
ձերում բարեջան առաջնորդութեանց յարածել ընդ ձերում  
պատուական կենաց՝ ի փառ Տեառն Աստուածոյ և ի մխիթա-  
րութիւն սրտից բազմավիշտ աղգի հայրենեաց»:

Այս կոնդակը կարգացուեցաւ Թաւրիզի Ս. Աստուա-  
ծածին մայր եկեղեցոյ մէջ, հանդիսաւոր պատարագի ըն-  
թացքին և խուռներամ՝ ժողովրդեան ներկայութեան:

Ինչպէս վերյիշեցի նորակառոյց Ներսիսեան Վարժա-  
րանը պաշտօնապէս բացուեցաւ և դասաւանդութիւնները  
սկսան 1852ի Սեպտեմբերին: Արձանագրուած էին 60 ա-  
շակերտներ, որոնք տեղաւորուած էին երկու դասարան-  
ներու մէջ: Նոյն թուականի ամառը դպրոցական այս շէն-  
քի վրայ (վերնայարկ) Սաթունեանը շինել տուաւ Ատր-  
պատականի Հայոց Առաջնորդարանը\*), (դահլիճ, ընդունա-  
րան, ննջարան և խոհանոց): Սաթունեանի և Շիորհիդա-  
կան ժանքի ջանքերու շնորհիւ, 1853ի գարնան դպրոցի  
շէնքի դիմաց շինուեցան երկու դասարաններ)\*\*) ևս հետզ-  
հետէ ջատացող աշակերտները տեղաւորելու համար:

\* ) Առաջնորդարանի հին շէնքը, ցած, խոնաւ և միայարկ՝ կը  
գտնուի Ս. Աստուածածին եկեղեցոյ բակին մէջ, դպրատան կող-  
քը: Այդ շէնքը 1889 թուականէն սկսեալ կը գործածուի իբր Ա-  
տրպատականի Հայոց Թեմական տպարան:

\*\*) ) Այս երկու դասարանները կանգուն էին մինչև 1926ի Մա-  
յիսը, երբ դպրոցի ժամանակակից հոգաբարձութիւնը քանդել  
տուաւ և տեղը հարթեց՝ զրօսավայր-բակը մեծցնելով: Հ. Ա.

Ժողովուրդը սիրով ու ոգերութեամբ կը դիմէր վարժարանի արագ յառաջազիմութիւնը և ամէն կերպով կը նպաստէր անոր բարելաւման գործերուն,

Աշակերտներու թիւը 1854ի Մարտին հարիւցի կը հասնէր Դպրոցի բացման երկու տարին չը լրացած 200 թուման պարտք գոյացեր էր. Սաթունեանը 1854ի Մարտի 9ին կը դիմէր ներսէս ե. Կաթողիկոսի օգնութեան.

« . . . Զբաղեալ լինելով մեր 'ի գործ հաստատութեան նորոգ վարժարանի մայրաքաղաքի վիճակին մերոյ, զոր հազիւ երբեք անդուլ աշխատութեամբ մերով և բազմատանջ հայթհայթանօք մինչ ցայս վայր դադարեցուցաք, նուիրատուութեամբ քաղաքացւոց վաճառականաց եղելսց, այսրէն, յորում ուսանեն այժմ մանկունք հայկազնեայց մերձ մին հարիւր հոգին հայոց և պարսից լեզուի ընթերցանութեամբ և դասառութեամբ, յորոց վերայ և յաղագս անբաւականութեան ծախուց փոխարինաբար թողեալ զպարտս աւելի քան երկու հարիւր պարսից թուման, զոր թէ ուստի ունիցեմք վճարումն ազատութեամն պարտուց մերոց, մնամք ապաստան և շնորհս գթառատ խնամոց Զերոց քաղցրացուցանել զսիրտ մերազնէից և եթ յորդորական կոնդակագրութեամբ Զերով ի հատուցումն պարտքաց մերոց օգնութեամբ և ձեռնառուութեամբ միմեանց»:

Ուսումնագէտ և գիտակից ուսուցիչներ չգտնելով Սաթունեանը անելի մատնուած էր: Առաջնորդը կը խընդուէր կաթողիկոսէն, որ անպայման գտնեն և թաւրիդ ուղարկեն «զոք ուսումնական և բարեբարոյ անձն՝ գիտակ միանգամայն հայոց և ոռուաց և գաղղիացւոց լեզուաց»՝ խոստանալով լիուլի վարձատրեր:

Երեք տարի շարունակ Սաթունեանը բազմաթիւ դիմումներ կատարեց բայց չկրցաւ իր ուզած ուսուցիչը գտնելի Ուրեմն ներսինեան Վարժարանի ուսուցիչները նորէն հին ախպի տէրտէր, տիրացուներ և կամ համեստ վարժապետներ էին: Ասոնց մէջն էր Յակոբ Եղիազարեան

Վարժապետ, որ յաճախ կռուի ու վէճի կը բռնուէր Տէր Յովսէփի Քահանայ Տէր Յովսէփեանի (որ տեսուչն էր) և կամ աշակերտներու ծնողներուն հետո:

Թաւրիկեցի հանգուցեալ Տէր Եղնիկ Քահանայ Օհանեանը կը պատմէր, որ հին թաւրիկեցիները շատ զուարձակի միջադէպեր կը պատմէին Տէր Յովսէփ Աւագ Քահանայ Տէր Յովսէփեանի և յիշեալ Յակոբ Վարժապետ Եղիազարեանի մասին:

Օր մը Տէր Յովսէփը զայրացած կ'ըսէ Յակոբ Վարժապետին.

— Ես ծառայ Աստուծոյ և եկեղեցւոյ, դու ով ես, ինչացն ես:

— Ես ծառայ ազգի և վարժարանի, — կը պատասխանէ վարժապետը:

— Թող քանդուի այն վարժարանը, որի վարժապետը դու ես:

— Թող քանդուի այն եկեղեցին, որի քահանան դու ես:

Վէճը կը փոխուի կռուի, խնդիրը կը հասնի Առաջնորդին, որ հարցը քննելէ յետոյ կուտայ հետեւեալ պատասխանը.

— Ելեղեցին և վարժարանը յաւիտեանս յաւիտենից անսասան և կանգուն պիտի մնան. դուք էք, որ պիտի մեռնէք: Վերջ տուէք այդ վէճին և հաշտուեցէք:

Սակայն քահանան և վարժապետը անհաջտ մնացին: Տէր Յովսէփը յարգուած և ազգեցիկ մարդ էր, վարժապետը պանդուխտ և անծանօթ: Այս միջադէպի պատճառով աշակերտներու ծնողներէն ումանք թշնամացան Յակոբ Վարժապետի հետ և զանազան ստոր միջոցներու կը դիմէին, որ վարժապետը օր առաջ հեռանար զպրոցէն:

Հակառակ իր յամառ ջանքերուն Սաթունեանը վարժարանի համար չը կրցաւ իր ուզած արժանաւոր և ուսումնական վարժապետը պտնել: Ուստի և ստիպուած ե-

դաւ պատահաբար թաւրիզ եկած յիշեալ Յակոբ Վարժապետը վարձել Սակայն այս վարժապետն ալ հալածանքի և անարգանքի կ'ենթարկուէր: Յակոբ Վարժապետը Սաթունեանին գրեց ընդարձակ նամակը մը (թուականն անյայտ) որմէ քաղուածաբար կը ներկայացնեմ հետաքրքիր մասերը՝ իբր պատմական փաստեր և երեսյթներ՝ հայ հին դպրոցի և ուսուցչի մասին:

Բարձր Սրբազն Հայր

Ամենախնամածու Տէ՛ր

Զեր Սրբազնութեան սուրբ հոգին ինքնին իսկ վկայեալ լինի ձեզ, զի մեր ակնկալութեան յոյսն զոր միշտ հաստատ ունեցաք մինչ ցարդ և հոգւով չափ աշխատեալ մաքառեցաք ընդդէմ ամենայն խոչնդուտից՝ ի սակս ոչինչ իրաց չէր, այլ միայն զի կատարեալ ցուցցի հարազատ ծառայութիւն մեր ձերդ Սրբազնութեան մինչ՝ ի ձեռս բերել ձերդ Սրբազնութեան զարժանաւոր վարժապետս, բայց սակայն այս յոյս այժմոյս իսպառ հատեալ ի դերեւ ել, համբերել՝ և տանիլ կամ դիմանալ ընդ առաջ ելեալ դժուարութեանց զոր ոմանք գոգոնեալ ՚ի նախանձուէ և կուրացեալ յանուղիդ դատողութեան յատելութենէ յարուցանելով զիսը սովութիւն կան հակառակ:

Առանց խնդրանացն մեր՝ Սրբազնութիւն ձեր տեղեակ է ընդամենայն... վարժարանի կարգադրութեանց, և վարժապետաց վերաբերեալ պաշտօնին, որ չէ աւելի պարտաւորութիւն վարժապետի քան զսահմանեալ ժամուց դասաւանդութիւն կամ թէ՝ ի նոյն դասասացութեան ժամու՝ ՚ի վարժարանի անդ՝ եթէ պատահի կամ օրական վերակացուն յայտնեսցէ ոմանց ստահակ աշակերտաց անպարկեցութեան ինչ գործս, վերահսութիւն գործել և պատժել կամ խրատել որպէս ցուցանէ նորոգ կարգադրութիւն: Այնոքիկ իրաւացի ինչ փասթ չեն դատապարտութեան դաստիարակի, զոր արտաքոյ վարժարանին պատմի... աշակերտք, զորս անգամ ևս յականջս Սրբազնութեան ձեր: Եւ ևս են ոմանք սոպու և բիրտ անձինք սովորութիւն արարեալ յանդնութեամբ լրփառը յարձակեալ դան՝ ՚ի վարժարան որ միանգամայն ընդդէմ է ամենայն վարժարանաց կարգին և ձերդ Բարձր Սրբազնութեան հրամանին ըմբռնել զուլիցն մեր թէ՝ այսօր եմ տղին ինչի՞ ես

ծեծեր, հիմա գլուխդ կը ջնջինմ, և մաղերդ բոլոր կը փիտեմ, կամ թէ այսօր աշակերտներ եմ տղին այսպէս են ասեր: Կամ թէ երէկ ՞ր պաղն է գնացեր թուրքերի հետ: Եւ կամ թէ զատ այ վեր առեր և իմ ջիպից փող այ գողանում և այլ այսպիսի զղուելի հազարաւոր պատճառք, որոց յոյժ՝ ՚ի դէպէ զոր պատասխանեմք թէ՝ Հայր զինչ գործէ որդին նմանի նմին: ուստի յայտնի երեկ զի այսպիսի անկարգութեամբ մնալ վարժարանին... դժուարին չէ ի ձեռն այսպիսեաց զմի դատապարտութեան յանցաւարութիւն ի վերայ մեր զնել միում և խայտառակել ընդունայն որպէս արարակալ են առ ժամանակաւ Ղազար Վարդապետին, Պօղոս Վարդապետին, Մանուէլին, Մեսրովին և այլ բազմոց... և մնացեալն լոեմ սոյն բարբարոսական երկպառակութիւն, որ արմատացեալ գտանի սստ ի միջի սոցա զոր բնաւին ոչ ոք չէ տեսել ՚ի միում տեղւոջ զի մրդ կարելի է դիմանալ ումեք. ուրիմ մի օր յառաջ հեռացեալքն պարզերեսութեամբ մեծ պատիւ և հանճարեղութիւն համարեալ են ինքեանց:

Սյլէ անտանելի և առաւելապէս ցաւ այս է զոր բամբասեալ ասեն. թէ՝ տասնեհինգ հազարտեանի (15 ըիալ ամսական ոռճիկ. Հ. Ա.) վարժապետքն զինչ պարտին լինիլ որ չունին արժանաւորութիւն վարձատրելոյ մինչեւ անգամ հաւասար այրի կանաց ոմանց, որք են դահեակ կամ աղախին և ստանան յամսեանն տասն և հինգ հազարտեան կամ երկու թուման ոռճիկ, և ևս հաց տարեկան զմի կամ երկու ձեռք օրինաւոր հագուստ. այս անվարձատրութեամբ սոցա մնալ զինչ է եթէ ոչ տգիտութիւն իւրեանց, որով և մեր գիտնաւոր վարժապետաց հացին և պատույն ևս լեալ են արգելք. և արդ՝ ըստ դատելոյ նոցա մեք զտգիտութիւն մեր միշտ խոստովանեալ եմք և խոստովանիմք. բայց այն գիտնական վարժապետքն մրք իցեն զի մինչեւ ցայսօր պահեն ընդ զրուանաւ զիմաստութիւնս իւրեանց որ ոչ երկեցուցեալ են զըպտուզս առ նոսա բնաւին, ընդ այս վստահ եմք յոյժ, չէ ինչ, թող մի անգամ ՚ի յատենի ձերդ Բարձր Սրբազնութեան հրապարակաւ առաջի երկուց կամ երից գրագէտ անձանց զիրաւունս արդարութեան ի կշեռ եղեալ քննեսցի սոյն փոքր միջոցի աշակերտաց դասասութեան և գրութեան աշխատութիւն մեր. նաև ամենայն կերպիւ բաղդատեսցի մեր ևս ընդ իմաստութեան գիտնականց նոցին և ապա՝ ՚ի բերան առեալ ի յանկեանսն խոռվեցանեն զմելիս բազմաց պարզամտաց բամբասմամբ:

Եւ ի վերայ այսօր ամենայնի մեք որ պանդուխտ և անտե-

բունջ անկեալ կամք աստ զկնի այսչափ նախատանաց և բամբասանաց կը երելոյն, ձերդ հասարակախնամ հայրութեան արդարադատ խղճմտանաց նեռի է այլս թողուլ զմեղ յայսմ զառնութեան վիճակի՝ թէ շատ և թէ սակաւ որչափ եկեղեցւոյն ծառայութիւն արարաք ձրիաբար Աստուած ի փառ իւր համարեսցէ՝ թէ ընդդէմ էր սուրբ կանոնի նորին. . . Որչափ կարն մեր ներեաց չխնայեցաք ծառայելոյ վարժարանին, զոր ինչ փոխանակ աշխատանացս շնորհեալ է Սրբազնութիւն ձեր՝ առանց տրտնջանաց մեծաւ շնորհակալութեամբ ընկալեալ զմասնաւոր պիտոյս մեր հոգացեալ կառավարեցեալ եմք մինչև ցայսօր թէ լայնութեամբ և թէ նեղութեամբ ըստ այսմ երբէք չունիմք անգոհունակութիւն ի Սրբազնութենէ ձերմէ, զի զիտեմք զեկամուտս վարժարանին. և եթէ առ անգամ մի կամիցի Սրբազնութիւն ձեր վերահասութիւն առնել կառավարութեան մերոյ գիտէ թէ որքան խղճութեամբ անցանին և անցեալ են աւուրք մեր. ուստի որդիաբար խնդրեմք Գերապատիւ Տէր Յովսէփ (ծանօթ Աւագ Քահանան է սա. Հ. Ա.) որ կարող է ևս առաւել պաշտօն մեր ևս վարել եթէ բարեհաճիք գթացեալ սիրով և օրհնութեամբ ճանապարհորդեցիք զմեղ և վերջին պսակն մեր՝ ի պատիւ անուան ձերոյ զայս համարեսցիք հրամայել Միրզայ Արբասին զի մի բլէթ առնուլ և տալ մեղ, որ արգելեալ կայ մեր չկարողացաք առնուլ խնդրելով ի Սրբազնութենէ ձերմէ երկտող գրութեամբ լիցի հրաման.

Ձերդ Բարձր Սրբազնութեան նուաստ ծառայ

Մանկավարժ ՅԱԿՈԲ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

Սյս պատմական փաստաթուղթը ցոյց կուտայ հայ ուսուցչի կրած բարոյական և նիւթական զրկանքները, անոր անմիսիթար կեանքը, անվարձ աշխատանքը և հասարակութեան կողմէ ցոյց տրուած ապերախտ վերաբերմանքը:

Սաթունեանը 1854ի Յուլիս 20ին կը գրէ Շուշի՝ «Պատուարժան Օհանջան Աղային» որ յօգուտ թաւրիզի Ներսիսեան Վարժարանի ժապաւինեալ մատեանով հանգանակութիւն կատարեն. Աղա Վարդան Արշակունեանցը դրամական նուէր կուտայ գլորոցին. Աղա Պետրոս Ներսիսեանին՝ Սաթունեանը հետեւեալ տեղեկութիւնները կը

յայտնէ դպրոցի մասին՝ 1854ի Հոկտեմբեր 6ին:

« . . . Բացի նախկին կառուցելոց, որ հիմնեցաւ տակաւին ի կողմն արեելեան, գերազանց քան զառաջինն, որով լրացաւ կատարելապէս չորս դասատունք վասն դասառութեան մանկանց, ընդմին և արժանաւոր Առաջնորդարան»: Ապա կը յայտնէ թէ դպրոցի աշակերտաց թիւը 70ի կը հասնի, յայսմանէ են բազումք որք ձրիաբար ընթեռնուն, զտաս քահանայորդիք, յորոց չէ հարկ ստանալ վարժարանին ինչ վարձս: Եւ ոմանք աղքատք, յորոց չը զօրէ իրաւունք և խիղճ մտաց մերոյ պահանջել ամսական և են ոմանք պակասաւորք որք յանկարսն են ի հատուցումն վարձուց որդւոց իւրեանց, և այլք ևս ուշիմ և խոհմք ջանացողք լուսաւորութեան, բայց անձեռնուուք տարեկան վարձուց, զորս թոյլատրեմք անարգել գալ և ուսանիլ»: Ստացուած թոշակները հազիւ կը բաւականանային «չորից հայսպգի վարժապետաց և մանկավարժից» և պարսից լեզուի դասատուին՝ ոռձիկներ տալու և դպրոցական այլ ծախսեր հոգալու:

Ի Պետերբուրգ բնակող Լազարեան եղբայրները յարգելով Սաթունեանի խնդրը՝ Թաւրիզի Ներսիսեան Վարժարանին կը նուիրեն 363 կտոր ժամանակակից դասագիրքերը: — «Ընափիր հատուածք ժողովեալ ի գրոց հախնի և արդի մատենագրաց Հայոց», «Ծաղկաքաղ յառակացն Քոիլովի» կայլն. Մագիստրոս Մսկը Մսկեանցը կը նուիրէ իր հստարակութիւններէն:

Իբր կը նուուսոյց և հայոց լեզուի ու պատմութեան դասատու կը հրաւիրուի երկանէն, Տէր Յովսէփ Քահանան 1856ին, բայց սա չ'ուզեր երեք տարի պայման կապեւ այլ մէկ տարով և բաւական շատ ոռճիկով: Ներսէս Եղտարակեցի Հայրապետն ալ մտահոգուած էր, որ թաւրիզի Ներսիսեան Վարժարանն ունենար «զուսուցիչ գէթ ըստ լեզուի Հայոց և ոռւսաց»: Սակայն Կաթողիկոսն ալ չը կըցաւ յարմար մէկը գտնել:

« . . . Կառուցանելոյ վասն մանկանց Հայոց զամենահարկաւոր ուսումնարան՝ առաւել յոյժ գուարձարար եղե մերում սրտի. այն զի իսկապէս պարտաւորութիւն առաջնորդական այն իսկ է զի ուսումնարան պահանջէ զուսուցիչ արժանաւոր՝ ուսեալ և բարութեամբ հոգւոյ վայելչացեալ՝ ինքնայտ է, թէ է հարկաւորագոյն. բայց զի գտանելն ուսուցիչ այսպիսի ըստ երից լեզուաց Հայոց, Թուսաց և Գաղղիացւոց բաւականութեամբ չափ կրթեալ՝ ըստ կարգի անհնարիցն է յայսմիկ մերում սահմանի, հարկն պահանջէ աստիճան առ աստիճան ունիլ ի մտի յառաջանալ ոչ միանգամ, այլ ըստ յաջողելոյ Աստուծոյ ժամանակ առ ժամանակ! . . . Վասն երկու հարիւր թուման պարտուցն յաղագս շինութեան ուսումնարանի ի յայտնելն ձեր մեզ ձեօք արժան զատեցեալ եղանակի հատուցմանց ոչ խնայեցուք զամենայն զկարելիսն մեզ և բանիւ և գործով!»

Սաթունեանը երկրորդ անգամ ըլլալով կազմել կուտայ Ատրպատականի Հայութեան ընդհանուր վիճակագրութիւնը, որուն արգիւնքը 1856ի Հոկտեմբերին 15,000 շունչի կը հասնէր, (2500 տուն կամ ծուխ):

Բերգաթաղի հայոց աղայական և խանական կամայականութեանց և հակառակութեանց պատճառով՝ Սաթունեանի դէմ դաւեր կը լարէին և կը պայքարէին: Սակայն ժողովրդաւունքը և ամբերութեամբ տոկաց, առիթ չը տուաւ, որ դպրոցի գործերը չը խանգարուէին: Սաթունեանը չուզեց հակամարտութիւնները խորացնել, որպէսզի արդէն իսկ կանոնաւորուած դպրոցը չը տուժէր և չենթարկուէր իր հակառակորդներու քմահաճոյքին: Ի վերջոյ նա որոշեց Թաւրիզէն անցնել Սալմաստ թեմական շրջագայութեան, որպէսզի իր բացակայութեան թերես հակամարտութիւնները վերջանային: Մեկնելէ առաջ Սաթունեանն իր մօտ կանչեց Յովսէփ Աւագ Քահանայ Տէր Յովսէփեան, Աղա Առաքել Մելիք Մինասեան և Ար-

այն զավանային յաջու մասն հաջորդ չմուշակ առանձին որ պայմանավ մինչամ դաշտ . . . ա մայնաւոր մաս ըմարադր մայմանցամ մերք է միամ այս մասն պատասխար սույ սպայցաւուած առցանց իրաց

## ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱԹՈՒՆԵԱՆԻ

### ՎԵՐՃԻՆ ՏԱՐԻՆ ԵՒ ՄԱՀԸ

Սաթունեանի գլխաւոր գործերէն մէկն ալ Թաւրիզի հայոց ազգային գերեզմանատան համար յատուկ տեղ ու հող գնելն եղաւ: Քաղաքի հարաւակողմը, Ուռուլուղը կոչուած այգիներու հիւսիսը, բարձրագիր և ընդարձակ հողամաս մը գնեց Սահակ եպիսկոպութիւն հանգանակուած դրամով: Գերեզմանատան ընդարձակ հողը գընուեցաւ 1856ի գարնան և անմիջապէս ձեռնարկուեցաւ պատերու շինութեան, դարձեալ ժողովրդական հանգանակութեամբ: Այսպիսով եկեղեցոյ բակը գերեզմանատուն ըլլալէ դատրեցաւ:

Սաթունեանը ներսիսեան վարժարանի ռորհրդական ժողովի անդամներէն ոմանց հետ ընդհարուեցաւ՝ դրացական գործերու շուրջ: Խանական և աղայական քմահաճոյքներուն և յամառութիւններուն Սաթունեանը տեղի չը տուաւ: Կովկասէն Թաւրիզ եկած հաստատուած հայ վաճառականները և իրենց պետը՝ նշանաւոր Աղա Գալուստ Շերմազանեան Թիֆլիսին, որ Թաջիրբաշին էր, Սաթունեանի պաշտպանները դարձան: Բերդաթաղի ընիկ հայ խաներն ու աղաները խուլ կերպով կը պայքարէին: Սաթունեանի գործերուն դէմ: Այսպէս ըլլալով հանդերձ ժողովրդանուէր Առաջնորդը կը շարունակէր իր աշխատանքները և անձամբ կը հսկէր դպրոցի գործերուն վրայ: Միաժամանակ իր բազմապիսի գործունէութեան մասին գրաւոր զեկուցում կուտար ներսէս Ե. Կաթողիկոսին, որ իր 1856ի Յունիս 5 կոնդակով հետեւեալ տողերը կը գըէ:

դուման Մարտիրոսեանը, որոնց նշանակեց իր կտակակատարները և կարգաց կտակը, որուն մէջ գրած էր նաև հետեւեալը—«... Եթէ մահն իմ Թավրէզ հանդիպեսցի, հանգիստն իմ եղիցի յԱյգին Աստուածածնայ»; Իսկ իր ունեցած սեփական դրամի մասին կտակի մէջ յիշած էր.— «... Դրամական արդիւնք իմ՝ որքան և գտցին յարկեղոն իմ յատկացուցեալ լինին յանուն վարժարանին Դավրէժ քաղաքի, որոյ կառուցման և հաստատութեան իսկապէս լեալ եմ պատճառ, զոր անկորուստ շահեցուցանելով, ոմն հաւատարիմ ի յաւելուածոյ նորա տացի ի վարձ վարժապետացն ի յիշատակ իմ. ընդ նմին և որքան գրեանք ունիմ Հայոց՝ ևս լիցի յիշատակ վարժարանին»;

Կտակը գրեց 1856ի Հոկտեմբերին և 20ին ճամբայ ելաւ դէպի Սալմաստ: Նոյեմբերի 4ին հասաւ Փայտաջուկ և իջաւ Մելիք Մելիք Յակոբեանենց (Բաֆֆիի հօր) տունը:

Նոյեմբեր 22ին ընդարձակ նամակ մը կը գրէ Վան՝ Առաջնորդ Գաբրիէլ Արքեպիսկոպոս Շիրոյեանին խնդրելով հետեւեալը.

«... Մեր աշխատութիւն վարժարանին Դաւրիժու և լուսաւորեցելոյ զմանկունս Հայոց եկեղեցւոյ. վասն որոյ և կարօտեմք արժանաւոր ուսուցչի. արդ թէ իցեն առձեզ գտանիցեալ երկու յուսալի անձն վարժեալ արհեստի քերականութեան, և հմուտ ժամակարգութեան, զնոսա առաքել առ մեզ: Որոց պարտաւոր լինիմ լիալիր վարժատրութեամբ ամըստ ամի մինչև յ40—և 50 թուման. միայն եթէ իցեն արժանաւորք»:

Իր վերջին խնդրանքնէր այս, որ դարձեալ անկատար մնաց: Դառնացած Թաւրիզի իր բարեկամներէն և գործակիցներէն նստած էր Սալմաստ և հիւանդագին վիճակով անգամ ամբողջ օր ժողովուրդի առօրեայ գործերով զբաղուած էր:

Աղա Գալուստ Շերմազանեանը Թաւրիզէն տեղեկու-

թիւններ կը գրէր ազգային և գպրոցական գործերու մասին: Ըստ երեղյթին Շերմազանեանի համար հաճելի էր, որ Առաջնորդի յարաբերութիւնները լարուած էին Թաւրիզի բնիկ երկելիներուն հետ, որոնց վրայ Շերմազանեանը կ'ուզէր ազգեցութիւն բանեցնել և իբր թէ հաշտարարի գեր կատարել Առաջնորդի այս ու այն հաւատարիմ բարեկամներու մասին Շերմազանեանը աննպաստ տեղեկութիւններ կը հաղորդէր, ինչպէս Աւագ Վարդանեանի, որ Սաթունեանի լաւագոյն գործակիցներէն մէկը եղաւ Վարժարանի կառուցման աշխատանքներու ընթացքին:

Հիւանդ և վշտացած Սաթունեանը 1857ի Յունուարին Աղա Գալուստ Շերմազանեանին գրեց հետեւեալը.

«Եթէ բարեպաշտ քրիստոնեայք տեղւոյդ լուիցեն չարխորհ անձանց, ահա ծանուցանեմ: ՚Ի տեղս ոչինչ վշտակրութիւն թէ՛ ինձ և թէ՛ ժողովրդոց ոչ զոյ բայց՝ այդը երկի զլուն ուղար են շինեալ: Եթէ աշխատանս՝ և ջանացողութիւնս վասն պայծառութեան ազգի, որպէս ականատես էք գուք, և ամենայն անձինք եւ եթէ իմ աշխատանքն ՚ի զնւր կորնչելոց են՝ ես ևս ՚ի Թաւրիզու յագեալ եմ: Եւ եթէ զիտեն պիտակացու և օգտակար իցեմ յաղակս իւրեանց թող խնդրանօք աղերսեցեն յինէն զի եկից ես առնոսա ամենայն իւրեանց լիցի՝ Վարժարանն և Առաջնորդարան: Որ և երեք հարիւր թուման կայս ունիմ յԱռաջնորդարանումն: ՞ ոք ցանկացող իցէ թող վայելեսցէ ի նոսա: Աշխարհս վասն իմ լայն ընդարձակ է, և Բարգովիմէոսի վանքն ընդ իշխանութեամբ իմով է, ըստ հրամանի Վեհափառ Կաթողիկոսին: ... ես՝ որ ոչ բնաւ ինչ խօսիմ, այլք զինչ իրաւունս ունին ի վերայ իմ խօսելոյ. զի ամենայն գործառնութիւնք իմ գրաւոր են և զգուշութեամբ կառավարիմ ամենեսեան: ՚Ի հարկէ չարակամ անձինք՝ զոր ինչ կամին կարող են խօսիր Դատ արասցէ Աստուած ընդ իս և ընդ այնոսիկ, որք թողեալ զբարին զչարն խորհին»:

Այսպէս ուրեմն Թաւրիզի հայ ժողովուրդէն հոգով

սրտով դառնացած Սահակ Եպիս. Սաթունեանը 1857ի Մարտ 18ին կեանքի վերջին օրերը կ'ապրէր: Մարտ 22ին իրեն իբր գաւազանակիր ընկերացող Մուժամբարցի Տէր Յակոր Քահանայ Տէր Կարապետեանի ձեռքով հաղորդուեցաւ և ըսաւ իր վերջին խօսքը — «Ինձ տարէք Թարվէզ Աստուածածնայ եկեղեցւոյն մօտն թաղեցէք. ես իմ սիահին չկարացի գրել. և ինչ որ կայք ունիմ երեելի է»: Այնտեղ էր նաև Մելիք Միրզա Մելիք Յակորեանը և ասոր ծառայ Բարլօ Մարտիրոսեանը: Հանգիստ ու խաղաղ՝ Սաթունեանը փակեց աչքերը և հոգին աւանդեց 1857ի Մարտ 22ին: Յայտնի չէ թէ ինչու հանգուցեալի մարմինը չը փոխադրեցին Թաւրիզ և ըստ իր ցանկութեան չը թաղեցին «յայգին Աստուածածնայ», Փոխադրութեան համար դժուարութիւններ կային, թէ՝ չկամութիւն ցոյց տուին: Այս հարցերը մութ կը մնան: Մահուան տխուր լուրն անմիջապէս տարածուեցաւ Սալմաստի մէջ: Գիւղերէն խուռներամ ժողովուրդ հաւաքուեցաւ Փայաջուկ՝ թաղման ներկայ ըլլալու համար: Աղբակի Ս. Թարդողիմէոս վանքի վանահայր Եղիազար Վարդապետն ու գիւղական բազմաթիւ քահանաները կատարեցին յուղարկաւորութեան և թաղման կարգը: Մարմինը թաղեցին Փայաջուկ, Ս. Գէորգ եկեղեցոյ դրան արևմտակողմը, ուր և կը մնայ իր գերեզմանը այս պարզ արձանագրութեամբ:

Ի ԴԱՄԲԱՐԱՆԻ ՆՆԶԻ  
ԻՍՊԱԿ ԱՐՔԵՊՈ. ՍԱԴՈՒՆԵԱՆ  
ԵՐԱԽՏԱԽՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ  
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅԿԱԶԵԱՆ  
Ի 1857 ԱՄԻ, ՄԱՐՏԻ 22ԻՆ

Ի յիշատակ հանգուցեալ Առաջնորդի և Ներսիսեան Վարժարանի հիմնադիր-բարերարի՝ Թաւրիզի մէջ կատարուեցաւ հոգեհանգիստ, որուն ներկայ էին պետական բարձրաստիճան պաշտօնեաներ, հիւպատոսներ և ամբողջ հայութիւնը: Հանգուցեալի հակառակորդներն անգամ խոնար-

հեցան անոր յիշատակի առջև: Տէր Յովսէփ Աւագ Քահանան, որ պատարագիչն էր, յուղիչ դամբանական խօսեցաւ: Ժողովուրդէն շատերը կուլային: Դպրոցի աշակերտութիւնը կարգով շրջապատեր էր սգասեղանը: Առաջնորդարանի և դպրոցի գոներուն վրայ ի նշան սգոյ՝ սև պաստառներ կախած էին: Դպրոցը երեք օր փակ մնաց: Ատպատականի ամբողջ հայութիւնը խոր ցաւ զգաց Սաթունեանի մահուան համար: Ամենուրեք կատարուեցան հոգեհանգստի արարողութիւններ և յարգանքի արտայայտութիւններ:

Սահակ Եպիսկոպոս Սաթունեանը իր վեց տարիներու (1851 Ապրիլ—1857 Մարտ) ժողովրդանուէր և դպրոցանուէր գործունէութեամբ կրցաւ անսահման ժողովրդականութեան արժանանալ:

Իբր Թաւրիզի Հայոց Ներսիսեան (հետագային Արամեան) դպրոցի հիմնադիր, բարերար և հովանաւոր Սաթունեանը իր անձնուէր գործունէութեամբ, իր անկաշառ և ազգասիրական աշխատանքներով յաւերժօրէն կանմահանայ Ատրպատականի Հայութեան և մասնաւորապէս Արամեան դպրոցի պատմութեան մէջ:

Թաւրիզի Հայոց դպրատան - վարժատան, Ներսիսեան Վարժարանի հիմնարկութեան, Սաթունեանի կեանքի, ապա հետագայ քանի մը տարիներու աշխատանքներու մասին մանրամասն խօսեցայ՝ փաստաթուղթերով և վաւերական տեղեկութիւններով, վասն զի Արամեան դպրոցի սկզբնական այդ խիստ կարեւոր շրջանի դէպքերու և դէմքերու մասին ցարդ գրեթէ չկային հարկ եղած փաստերն ու ծանօթութիւնները: Ասկէ յետոյ նոյն ձեռք և հանգամանօրէն չը պիտի խօսիմ Սաթունեանի յաջորդներու և Արամեան դպրոցի նորագոյն շրջանի իրադարձութեանց մասին, թողնելով այդ իմ մէկ ընդարձակ և անտիպ աշխատութեան մէջ — «Պատմութիւն Հայոց Ատրպատականի»:



## ԱՐԱՄԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՊԲՈՑ

Երջանկայիշատակ Սահակ Եպիսկոպոս Սաթունեանին յաջորդեց՝ իբր Առաջնորդ Հայոց Աստրապատականի՝ 40 տարեկան երիտասարդ, եռանդուն և կրթասէր Յակոբ Շայրազոյն Վարդապետ Շահպատեանը, որ 1857ի Յունիսին էջմիածնէն հասաւ Թաւրիզ և գործի անցաւ։ Առաջին առուիւ իսկ ձեռք առաւ Ներսիսեան Վարժարանի հովանաւորութիւնը։ Տէր Յովսէփ Աւագ Քահանան առագ վարժապետն» էր, որուն տարեկան ոռօճիկն էր 30 թուման։ Հայոց լեզուի, կրօնի և պատմութեան վարժապետը կըստանար տարեկան՝ 18 թուման, Պարսից լեզուի վարժապետը՝ 30 թուման, իսկ վարժարանի ծառային կը վճարէին տարեկան 84 զռան։

Յակոբ վարդապետը 1857ի Նոյեմբեր 10-ին պաշտօնական գրութեամբ մը (թիւ 84) կը յայտնէ «Նորին Գերաստիճանութեան թարգմանի գեսպանատան Կայորութեանն Ռուսաց որ ՚ի Դաւրէժ քաղաքի Յովսէփ Խանի Մովսիսեանց» ինչպէս նաև «Գլխաւորի վաճառականաց Կայսրութեանն Ռուսաց Աղայ Գալուստի Շերմազանեանց», որ ինքը Նոյեմբեր 14-ին թեմական այցելութեան պիտի երթայ Ասրպատականի գաւառները, հետեւաբար Ներսիսեան Վարժարանի «Վերատեսչութեան պաշտօն ի վերայ վարժապետաց, աշակերտաց, ուսանելի գիտութեանց և կանոնադրութեանց ըստ ամենայն մասին վերաբերելոց ըստ Ներելոյ միջոցի և հանգամանաց... և զլիակատար կառավարութիւն տնտեսական մասին վերաբերեալս առնոյն վարժարան» պիտի ստանձնեն Յովսէփ Խանն ու Աղա Գալուստ Շերմազանեանը։

Դպրոցն ունէր նաև սեփական գրավաճառանոց, որ աշակերտներուն կը հայթայթէր դասագրքեր և գրենական պիտոյքներ, Աղքատ որդեգիրները դասագիրք, թուղթ,

տետրակ և այլն ձրի կըստան այլն դպրոցէն։ Դպրոցն ամէն տեսակ զիւրութիւն կ'ընծայէր ծնողներուն, որպէս զի անոնք իրենց զաւակները դաստիարակութեան տային։

Կարճատե եղաւ Յակոբ Վարդապետ Շահպատեանի առաջնորդական պաշտօնավարութիւնը։ Նա վախճանեցաւ Թաւրիզի մէջ 1859ի Ապրիլ 19ին և թաղուեցաւ Ս. Աստուածածին ուխտատեղին, ուր և կայ գերեզմանը պատշաճ արձանագրութեամբ, որ գրել տուած է հանգուցեալի եղբայրն Արրահամը։

Յակոբ Վարդապետի առաջնորդութեան ատեն Ներսիսեան Վարժարանի «Խորհրդական Ժողով» անդամներն էին— Աղա Գալուստ Շերմազանեան, Յովսէփ Խան Մովսիսեան, Ստեփան Սիմոնեան, Աւետիք Մահտեսի Անանեան, Աղա Առաքել Մելիք Մինասեան, Բժիշկ Աստուածատուր Ենոքեան, Աւագ Մելիք Արրահամեան և Մահտեսի Խաչատուր Մահտեսի Պետրոսեան։ «Աւագ վարժապետ» Տէր Յովսէփ Աւագ Քահանան հաշտուած էր «կրտսեր վարժապետ» Յակոբ Եղիազարեանի հետ, որ այնքան յուսահատ և դժգոհ՝ բողոքագիր մը ներկայացուց Սաթունեանին, բայց սա չընդունեց անոր հրաժարականը։ Յիշատակութեան արժանի է, որ Աղա Գալուստ Շերմազանեանը Թաւրիզի Հայոց ազգային կեանքի և ամէն տեսակ հանրային ձեռնարկներու տիրական դէմքը հանդիսացաւ, շընորիւ իբ ունեցած ազգեցութեան և բարձր գիրքի։ Շերմազանեանը կրթասէր, ազատամիտ մարդ էր, պատմական տեղեկագրական, ուղեգրական յօդուածներով կ'աշխատակցէր Մարկոս Աղաբէկեանի «Կոունկ Հայոց Աշխարհի» ամսաթերթին։ Նամակագրութիւն ունէր ժամանակակից ազգային ու գրական յայտնի դէմքերու հետ։ Թաւրիզի մէջ յարգուած անձ մըն էր, իբր վաճառականապետ՝ ուսահապատակ հայերու։ Ներսիսեան Վարժարանի թէ կրթական և թէ տնտեսական գործերու մէջ Շերմազանեանը գլխաւոր գերակատարն էր։

էջմիածնի միաբան և ժամանակակից յայտնի եկեղեցական դէմք մըն էր Արէլ Արքեպ. Միփարեանը, որ ունի գրական երկասիրութիւններ: Գրաբարագիր էր և հայկաբան, դէմ էր հայ աշխարհաբարի տարածման և դպրոցական աշխարհիկ դաստիարակութեան ողին վտանգաւոր կը համարէր: Արէլ Արքեպ.ը 1860ի Մարտին Թաւրիզ եկաւ իրը Ատրպատականի Հայոց Առաջնորդ, որ Ներսիսեան Վարժարանի վերին հսկողութիւնն իր ձեռքն առաւ և առաջին առթիւ իսկ սկսաւ կրօնական-եկեղեցական ողին և դաստիարակութիւնը խորացնել: Այսպէս ըլլալով հանդերձ չը կրցաւ դպրոցի յառաջադիմութեան (կրթական կամ տընտեսական) զարկ տար: Աւելի շատ զբաղեցաւ թեմական հասոյթները կանոնաւորելու գործերով: Բնաւորութեամբ զայրացկոտ և դիւրագրիգիո մարդ ըլլալով Արէլ Արքեպ.ը յաճախ կ'ընդհարուէր «Խորհրդական Ժողով»ի անդամներու և վարժապետներու հետ,

Արէլ Արքեպ.ը հազիւ 15 ամիս վարեց Ատրպատականի թեմի առաջնորդութիւնը: Ազգային և դպրոցական հարցերու շուրջ ընդհարուեցաւ Թաւրիզի երեկի հայերու հետ և 1861ի Մայիսին ճամբայ ելաւ դէպի էջմիածին:

Անոր յաջորդեց Գէորգ Արքեպիսկոպոս Վեհապետեանը, բարձրահասակ, փառաւոր արտաքինով, լուրջ և խոհուն դէմքով, խորագէտ և հպարտ նշանաւոր եկեղեցական գործիչ մը, որ Թաւրիզ հասաւ 1861ի Յունիսին: Վեհապետեանը կրցաւ իր շուրջը հաւաքել Թաւրիզի Հայ երեկիներն ու վաճառականները: Թէկ սա չունէր Արէլ Արքեպ.ի զարգացումը և գրական հմտութիւնը, բայց չափազանց ուսումնասէր մարդ էր և կ'ուզէր անպայման իր անունը մնայուն յիշատակով մը կապել Ներսիսեան Վարժարանի հետ: Արէլ և Գէորգ Արքեպիսկոպոսներու ժամանակ դպրոցի հոգաբարձութեան և Թաւրիզի ազգային այլ գործերու մէջ մասնակցութիւն ունեցած են հետեւալ անձերը — Յովսէփ Խան Մովսիսեան (վախճ. 1864 Զանջան,

թաղուած Թաւրիզ) Շատուր Խան Սէթիանեան, Եղկար Մելիք Մինասեան, Մահտեսի Աստուածատուր Առաքելեան, Արզուման Նազարբէկեան, Մահտեսի Գրիգոր Միքայէլեան, Սարգիս Տէր Յովսանեան, Մահտեսի Ալէքսան Մահտեսի Պետրոսեան, Գէորգ Աֆթանդիկեան, Պետրոս Բէկ Ներսիսեան, Այզէկ Գրինֆիլդ, Գալուստ Աֆթանդիլեան, Թաղէս Մահտեսի Սարգսեան, Կարապետ Մելիք Զոհրաբեան, Յակոբ Մահտեսի Սիմոնեան, Աւետիս Մահտեսի Անանեան, Ասրի Մելիք Բաղդասարեան, Դանիէլ Շահրամեան, Թաղէս Սահրամեան, Աստուածատուր Ղարաբէկեան, Աւագ Մելիք Աբրահամեան, Յարութիւն Բայխանեան, Յովսէփ Աֆթանդիկեան, Ասրի Բէկ Պետրոսեան (Միքայէլեան), Գասպար Շահնազարեան, Աբրահամ Վարդանեան, Խաչատուր Տէր Զաքարեան, Մահտեսի Յարութիւն Թումանեան, Ստեփան Ներսիսեան, Սոլոմոն Խան Մագինեան և դեռ շատեր:

Գէորգ Արքեպ. Վեհապետեանը կրցաւ դպրոցի պարտքը փակել Թաւրիզ հասնելէ յետոյ միակ ցանկութիւնն էր երթալ Թէհրան, ներկայանալ Նասրադղին Շահին և արքայական հրովարտակով պետական մշտական նպաստ ապահովել Ներսիսեան Վարժարանի համար: Այս նպատակով ալ նա 1865ի աշնան գնաց Թէհրան և ոռւսաց դեսպանի միջնորդութեամբ ներկայացաւ Նասրադղին Շահին, որ սիրով ընդունեց և հաճոյքով ու հետաքրաքրութեամբ խօսեցաւ Հայոց Առաջնորդի հետ: Ոռւսաց դեսպանը կը յայտնէ, որ Թաւրիզի հայոց դպրոցը պատրաստում է Պարսից տէրութեան համար կրթուած և հաւատարեմ հպատակներ՝ ըստ հիմնական կանոնադրութեան դպրոցի հիմնադրի»:

Նասրադղին Շահը կատարեց Հայոց Առաջնորդի խընդրանքը և տուաւ արքայական հրովարտակ մը, որով տարեկան 250 թուման պետական նպաստ կը չնորհուէր Թաւրիզի Հայոց Ներսիսեան դպրոցին: Ա. Ծննդեան Զրօրհնէքի արարողութիւնը (1866) Թէհրանի մէջ կատարեց Գէորգ

Արքեպ.ը. Շահը ներկայ եղաւ հանդէսին և շատ լաւ աըպաւութիւն ստացաւ:

Գէորգ Արքեպ.ը. իր անձնական դրամէն՝ 6000 ըուրլի (աւելի քան քսան հազար ըիալ) ծախսեց Թաւրիդ - Թէհարան երթևեկի և ապրուստի համար, Թէհրանէն Թաւրիդ վերադարձին արժանացաւ մեծաշուք ընդունելութեան։ Մայրաքաղաքէն վերադառնալէն յետոյ Վեհապետեանը սկսաւ կարենըութիւն չտալ Թաւրիդի հայ երևելիներուն, Կը գործէր ինքնագլուխ, ըստ կամս, դպրոցի գործերը կը ղեկավարէր իր ուզած ձեռվ, Այս բոլորը դարձան առիթ, որ նա ընդհարուեցաւ ազգային գործերով զբաղուող հայ երևելիներու և մասնաւորապէս Աղա Աստուածատուր Առաքելեանի հետ և հեռացաւ Թաւրիդէն։ Այսու հանդերձ Գէորգ Արքեպ, Վեհապետեանը Արամեան դպրոցի երախտաւոր պաշտպանն ու հովանաւորը հանդիսացաւ և իր եօթնամեայ առաջնորդական պաշտօնավարութեամբ արժանի տեղ գրաւեց Արամեան դպրոցի պատմութեան մէջ, Վեհապետեանի օրով էր, որ յայտնի Սամուել Գիւղադեանը Թաւրիդ հրաւիրուեցաւ իբր ուսուցիչ Ներսիսեան Վարժարանի:

Գէորգ Դ. Կաթողիկոսի կոնդակով 1869ին Ատրպատականի Հայոց Առաջնորդ նշանակուեցաւ Գրիգոր Արքեպիսկոպոս Յովլեանց, որ պարզ և հանգիստ մարդ էր, ուսումնագէտ չէր, բայց շատ կրթասէր և ազատամիտ մարդ էր, Գրիգոր Արքեպ.ը. դպրոցական հաշիւները դրաւ ապահով և կանոնաւոր հիմքերու վրայ, Թեմական եկամուտներէն մաս հանեց Թաւրիդի Ներսիսեան Վարժարանին, որ 1872ին ունէր 24,734 թուման դրամ, Այս պատկառելի գումարը կը գտնուէր ժամանակակից հոգաբարձութեան մօտ, որուն անդամներն էին Աստուածատուր Առաքելեան, Մատուր Խան Սէթիսանեան, Արգուման Նազարեէլեան, Աստուածատուր Ղարաբէկեան, Մահտեսի Սիմոն Թումանեան և Յովակիմ Աղա Ֆէնէրձեան։

«Գր. Յովլեան Եպիս.ի գլխաւոր ջանքն էր Թուսաց կառավարութիւնից ևս նպաստ ստանալ և շահել ոռւսաց կառավարութեան հովանաւորութիւնն ու բարեցակամութիւնը դէպի Արամեան դպրոցը։ Այս նպատակով արժանայիշատակ Յովլեան եպու.ը 1872ի Հունիս 28ին № 53 մի պաշտօնական գրութեամբ խնդրում է ոռւսաց Թաւրիդի հիւպատոս պ. Բեզարբազովի աջակցութիւնը այս հարցում։ Հիւպատոսը 1873ին Յունիս 20 թիւ և № 41 գրութեամբ յայտնում է առաջնորդին, որ այդ առթիւ ինքը խնդրել է Մեծ Խլսան Միխայէլ փոխարքայի ստատուս սեկրետար Բարոն Նիկոլայի միջնորդութիւնը Կայսերական կառավարութեան առաջ և ուրախ է յայտնելու, որ փոխարքան իւր իսկ սեպհական միջոցներից ոռւսաց լիզուի Արամեան դպրոցում դասաւանդելու համար յատկացրել է 300 ըուրլի։ Թէ ինչպէս այդ երեք հարիւր ըուրլին 550ի է վերածուել՝ չգիտենք, միայն 550 ըուրլին ամենայն կանոնաւորութեամբ ուղարկուել է Անդրէաս Եպիս.ի, Բարդուղիմէոս Վարդապետ յաջորդի, Սուքիաս Արքեպ.ի և սրա յաջորդների օրով, մինչև Խլսան Կալիցինի դադրեցնելը, երբ նորէն ստացւում է 1909-1911 շրջանի հոգաբարձութեան դիմումի ճիման վրայ»\*):

Յովլեան Արքեպ.ի կատարած աշխատանքը յօգուտ դպրոցի գնահատութեան արժանի է։ Սակայն ասոր օրով ալ դպրոցի ուսուցչական կազմը թոյլ էր. չկային նոր և պատրաստուած ուսուցիչներ։ Յովլեանի հետ Թաւրիդ եկած էր. Յովլեանէս Վարդապետ Երեմեանը, որ Առաջնորդի կողմէ նշանակուած էր իբր երկրորդական տեսուչ։ Սա կ'աւանդէր հայերէն, կրօն, քերականութիւն և եկեղեցական պատմութիւն։

Ամէն մէկ առաջնորդը իր գիտցած ձեռվ, իր ունե-

\*) Ա. Տէր Վարդանեան - «Համառոտ պատմութիւն Թաւրիդի Արամեան Դպրոցի 60-ամեայ գոյութեան», Թաւրիդ, 1913, էջ՝ 11-12.

ցած զարգացման համաձայն կը մօտենար դպրոցի կրթական գործերուն և ըստ այնմ ալ կը ղեկավարէր։ Տեսուչի պարտականութիւնը առաջնորդները կը կատարէին՝ անպատճախանատու և ինքնակամ կերպով։ Այս էր բուն պատճառը, որ 20 տարիներու ընթացքին դպրոցը չ'ունեցաւ հմուտ տեսուչներ կամ գիտակից ուսուցիչներ։

Գրիգոր Արքեպ. Յովքեանը յաջողեցաւ դպրոցական գըագարան մըն ալ կազմել մօտ 100 կտոր գիրքերով։ Սակայն Յովքեանն ալ ի վերջոյ, իր նախորդներու նման, ընդհարուեցաւ հոգաբարձութեան ազդեցիկ անդամներու, մասնաւորապէս Աստուածատուր Ղարաբէկեանի հետ և ըստիպուած եղաւ հեռանալ Թաւրիզէն՝ 1874ի Մարտին։ Սակայն Թաւրիզի հայութեան մէջ Յովքեանը թողուց անմոռաց տպաւորութիւն՝ իւր պարզ ու համեստ բնաւորութեամբ և կրթասիրական աշխատանքներով։

Գէորգ Դ. Կաթողիկոսի 1874 Մայիս 29-ի կոնդակով Ատրպատականի Հայոց Առաջնորդ նշանակուեցաւ Էջմիածնի միաբաններէն և Շամախիի թեմի նախկին Առաջնորդ Անդրէաս Արքեպ. Յովհաննիսեանը, որ Թաւրիզ հասաւ նոյն թուրի Յունիս 13ին՝ արժանանալով մեծաշուրջ ընդունելութեան՝ թէ պետական հիմնարկութեանց և թէ հայութեան կողմէ։ Զուլֆայէն մինչև Թաւրիզ պետական պատուոյ ձիաւոր պահակախումբի առաջնորդութեամբ Անդրէաս Արքեպ.ը մտաւ Թաւրիզ և յաջորդ օրն իսկ այցելութեան գնաց թագաժառանգին և պետական բարձրաստիճան անձանց, ամենուրեք վայելելով սիրալիր ընդունելութիւն։ Ասոր առաջին գործն եղաւ հրահանգել Արդարիլի հայութեան, որ եկեղեցի և ապա դպրոց շինեն, Սալմաստի հոգեոր գործակալ Յակոբ Վարդապետ Եղիազարեանին,\* ) որ գիւղերու մէջ դպրոցներ բանալ տայ և գեղ-

\*) Այս յայտնի Յակոբ Վարդապետն էր, որ Գէորգ Արքեպ. էն Վարդապետ ձեռնադրուեցաւ և դարձաւ Սալմաստի հոգեոր գործակալը։

ջուկ մանուկներու դրագիտութեան նախանձախնդիր ըլլայ և այլն։

Անդրէաս Արքեպ.ը 1874 Յուլիս 5-ին Առաջնորդարանի մէջ գումարել տուաւ Թաւրիզի Հայոց ընդհանուր ժողովը, որուն կը մասնակցէին 144 հոգի՝ թէ Բերդաթաղէն և թէ Լիլաւայէն։ Ժողովի նպատակն էր ընտրել Ազգային Հոգաբարձութիւն, որ պիտի վարէր Թաւրիզի Հայոց «ազգային, մտաւորական, նիւթական և տնտեսական գործերն» երեք տարի ժամանակով և Առաջնորդի նախագահութեամբ։ Միաձայն ընտրուեցան՝ Արգուման Նազարբէկեան, Աստուածատուր Առաքելեան, Աստուածատուր Ղարաբէկեան, Ծատուր Խան Սեթիսանեան, Յովակիմ Ֆէնէրձեան և Մահտեսի Սիմոն Թումանեան։

Ժողովին մասնակցողներու անուններէն յիշատակութեան համար կըներկայացնեմ հետևեալները— Տէր Յովսէփ Աւագ Քահանայ Տէր Յովսէփեան, Աստուածատուր Քահանայ Տէր Զաքարեան, Արքահամ Քահանայ Միքայէլեան, Սոլոման Խան Սագինեան, Գալուստ Շերմազանեան, Արքահամ Վարդանեան, Եղիկար Մելիք Մինասեան, Յարութիւն Գորոյեան, Գասպար Շահնազարեան, Սարգիս Տէր Օհանեան, Ահարոն Զարդարեան, Համբարձում Տէր Յովսէփեան, Սարգիս Յունանեան, Մելիք Թագէսու Մահտեսի Անանեան, Յարութիւն Նազարբէկեան, Գէորգ Աֆթանդիլեան, Ասլան Եավար Էնակոլովիեան, Մկրտում Առաքելեան Պատմագրեան, Աւագ Մելիք Արքահամեան, Մկրտիչ Բըժիշկեան, Ասրի բէկ Միքայէլեան, Օհան Տէր Զաքարեան, Դանիէլ Շահրազեան, Դաւիթ Ապրեսեան, Յովհաննէս Միրզայշան, Գրիգոր Եղիազարեան, Զաքարիա Ղարիբեան, Աբգար Գալստեան, Բարսեղ Աղազարեան, Համբարձում Մեսրոպեան, Ալէքսան Բժիշկեան, Մահտեսի Միխթար Միխթարեան, Յովհաննէս Վասիլեան, Բաղդասար Յարութիւնեան, Մնացական Սարգսեան, Թովմաս Մանկասարեան, Սարգիս Շահրազեան, Աւագ Աւագեան, Մահտեսի

Գրիգոր Յարութիւնեան, Յովհաննէս Նանաջանեան, Նիկոլոս Բարաջանեան, Գրիգոր Աբգարեան, Յակոբ Թամիրեան, Անանիա Ներսիսեան, Դանիէլ Աքթանդիլեան, Դաւիթ Ստեփանեան, Կարապետ Յակոբեան և դեռ շատեր, որոնք առտեղեաւ կատարուած հանգանակութեան ալ մասնակցեցն՝ ի նպաստ դպրոցին: Հանգանակութիւնը յետոյ ալ շարունակուեցաւ և ընդհանուր գումարը հասաւ 3227 թումանի: Այս գումարով Առաջնորդն ու նորընտիր Հոգաբարձութիւնը պիտի բարւոքէին դպրոցի նիւթական վիճակը և հրաւիրէին տեսուչ և ուսուցչական կանոնաւոր խումբ մը: Նորընտիր Հոգաբարձութեան պարտականութիւնն էր «առնուլ ընդ իրաւամբ Հոգաբարձութեան զմասնաւոր դպրոցն եկեղեցւոյն լիլաւայ թաղի քաղաքիս և բարեկարգել գայն որպէս արժանն է»: Առաջնորդը կարգադրեց, որ Թաւրիզի զոյգ եկեղեցիներու դրամական մուտքերն ալ յատկացուին «երկուց ուսումնարանաց Գավրիֆու»: Կը մատածէին հանգանակուած գումարով դպրոցներու համար անշարժ և հասութաբեր կալուածներ գներ:

Անդրէաս Արքեպի և Հոգաբարձութեան այս եռանդուն աշխատանքներու մասին կրթաուէր և Մեծագործ Գէորգ Դ. Կաթողիկոսը (որ 1874ին էջմիածնի մէջ հիմնեց Գևորգեան ձեմարանը) հետևեալ տողերը կը դրէ՝ 1874ի Սեպտեմբեր 25ին.

«... Գովեմք զջանս Զեր և մեծապատիւ հոգաբարձուաց» որ «յաղագս յապահովելոյ զդրամական վիճակ ապացին դպրոցի տեղուոյդ՝ պասկեալ լիուլի յաջողութեամբ ընդ եռանդալից գործակցութեան նորընտիր հոգաբարձուաց՝ ըստ բաւականին արդիւնաւորեալ է զտնտեսական մասն նորա յապագային... Գլխաւոր ջանք մեր յօրէ անտի ամբանալոյ յԱթոռն Հայրապետութեան Ազգի Հայոց եղեալ է յաճեցուցանել զթիւ ազդային դպրոցաց՝ գիտելով քաջ զի անխափան ուսումն մայրենի լեզուի և կրօնի հաստատուն խարսխեալ զմեզ յանկորուստ ազգայնութեան ան-

սասան պահեսցէ ի բազմատեսակ վտանգից »:

Հոգաբարձութիւնը 1874ի Յուլիսին Բերդաթաղի դըպրոցին իբր տեսուչ կը հրաւիրէ Սամուէլ Գիւլգագեանը\*), Առաջնորդն ու Հոգաբարձութիւնը՝ միասնաբար և տեսչի խորհուրդով կը կազմեն ուսուցչական խումբը: Մոսկուայէն կուգայ թուաբանագէտ Համբարձում կարապետեան, Թիֆլիսէն՝ Մուշեղ Մուշեղեան, Դպրոցի մէջ կ'աւանդուէին—հայերէն, պարսկերէն, ոռւսերէն և Փրանսերէն լեզուները, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, Հայոց պատմութիւն, կրօն, Հոգաբարձութիւնը կ'որոշէ բանալ Դ. գասարան: Ագուլիսէն իբր ուսուցիչ կը հրաւիրուի Մեսրոպ Քահանայ Փափագեանը, որ 1875ի Յուլիսի վերջերը կը հասնի Թաւրիզի Թիֆլիսէն կը հրաւիրուի Բաֆֆին—Յակոբ Մելիք Յակոբեանը, որ Թաւրիզի մէջ Յակոբ Վարձապէս կոչումով կը ճանչցուէր: Բաֆֆին 1875 Օգոստոս 15էն պիտի պաշտօնավարէր մինչև 1876ի Օգոստոս 15ը, լիւ տարի մը և պիտի ստանար իբր վարձք վեց հարիւր ըուելի (մօտ 2000 ըիալ), դպրոցի մէջ շաբաթական պիտի աւանդէր 27 դաս հայերէն, Հայոց պատմութիւն և աշխարհագրութիւն, ամէն մէկ դաս 60 բոպէ հաշուելով: Պարսից լեզուի համար վարձուեցաւ պարսիկ ուսուցիչ մը: Ուսուցչական պաշտօնի հրաւիրուած էր նաև Աւագ Ափթանդիլեանը, Թաւրիզեցի: Միրզա Թափէոսը աշակերտնեներուն շաբականներ և ժամանակագրութիւնը կը սովորեցնէր: Բաֆֆին հրաւիրուեցաւ Մուշեղ Մուշեղեանի տեղ, որ մէկ տարի պաշտօնավարելէ յետոյ արձակուեցաւ դպրոցէն: Թաւրիզի Հայոց զոյգ դպրոցներու աշակերտներու տա-

\*) Նոր Զուղայեցի, հեղինակ յայտնի «Ոլոր մոլոր կուրն է դալիս» տարածուած երգին: Շուշիի մէջ 1894ին լոյս լնծայեց առանձին հատորներով Ֆերգուսիի «Շահնամէ»էն քանի մը կարեոր հատուածներ, որոնք բնագրէն հայերէնի թարգմանեց: Քաջ զիտէր հայերէն, պարսկերէն և Փրանսերէն լեզուները: Յարգուած դաստիարակի և ազդեցիկ տեսուչի անուն հանած էր ամենուրեք:

բեկան քննութիւնները տեղի ունեցան 1875 թուլիս 1—13 ի ներկայութեան հայ և օտարազգի հանդիսականաց Թնհնութեանց ներկայ եղաւ նաև «Նայիբվուզուրայն որ մատոյց ՚ի նպաստ ուսումնարանական դրամոց հարիւր թուման»:

Սաթունեանի հիմնած Ներսիսեան Վարժարան կոչումը երբ փոխուեցաւ Առամեան դպրոց կոչման՝ յայտնի չէ: Այս մասին ցարդ ունէ փաստաթուղթ չեմ գտած: Պարզ է միայն, որ Առաջնորդ Անդրէաս Արքեպի ատենօք այդ կոչումը պաշտօնապէս ընդունեցաւ: Այդ անուանափոխութեան մէջ հարկաւ որոշ միտք ու նպատակ եղած է: Փաստաթուղթերու մէջ 1875 թուականէն սկսեալ կ'երեւ ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՅՑ կոչումը, որ կը պահուի ցարդ: Պիտի յիշեմ նաև, որ երջանկայիշատակ Սահակ Եպիս. Սաթունեանը իր հիմնած դպրոցի դրան ճակատին դնելու համար պատրաստած էր մարմարեայ քար մը, որուն վրայ պիտի ըլլար պատշաճ արձանագրութիւն՝ հայերէն և պարսկերէն: Պաշտօնական հանդէս մը կատարուեցաւ 1875ի Օգոստոսի Յին Արամեան դպրոցի մէջ և մարմարիոն քարը դրուեցաւ դրան ճակատին՝ հետևեալ արձանագրութեամբ

ՇինեթԱհ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՍ ի 4 ՅՈՒԼԻՍԻ 1851 ԱՄԻ Ի ԹԱԳԱԽՈՐՈՒԵՆ ԱՍՍՐԵԴԴԻՆ ՇԱՀԻ. ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏՆ ՆԵՐՍԻՍԻ Ե. ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՆՄԲ ԲԱՐԵՁԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՅՐՊԱՏԱԿԱՆԻ ԽՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍԱԴՈՒՆԵԱՆՑ ԱՐԴԵԱՄԲՔ ԲԱՐԵՊԱՇՏ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ:

ի. թ. չ. 103

ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՅՑ իր հիմնարկութեան սկզբէն չէր ունեցած Սամուէլ Գիւլզադեանի նման տեսուչ և 1875-76 ուսումնական տարեշրջանի ուսուցչական խմբի նմանութեղ խումբ: Թէ Առաջնորդ, թէ Հոգաբարձութիւն և թէ ուսուցչական խումբը հաշտ համերաշխ կը գործէին է զըպրոցը մէկ տարուան մէջ արտակարդ յառաջադիմութիւն ունեցաւ: Աշակերտներու թիւը 80ի կը հասնէր էջմիածնի Ճեմարանի տեսուչ Գաբրիէլ Արքեպ. Այվագեանը 1875

Դեկտեմբեր 13ին Անդրէաս Արքեպի կը գրէ, որ Սրամեան դպրոցի տեսուչ Սամուէլ Գիւլզադեանը տեղափոխուի էջմիածնին՝ իբր Ճեմարանի տեսչի օգնական: Սակայն Անդրէաս Արքեպի կը պատասխանէ որ Գիւլզադեանը երեք տարի պայմանաւորուած ըլլալով չը պիտի կրնայ գար Արամեան դպրոցի համար 1876ի Օգոստոսին իբր ուսուցիչները վարձուեցան Յովհաննէս Զաքարեան Խիզանցեան և Յարութիւն Սարկաւագ (յետոյ քահանայ) Արգարեանը: Դպրոցական աշխատանքները եռանդով առաջ կ'երթային: Սակայն խանական և աղայական կամայականութիւնները նորէն ծայր առին: Յետաղէմ և պահպանողական տարբերը ծառացան Առաջնորդ Անդրէաս Արքեպի դէմ: Ի՞նչն էր պատճառը:

Առաջնորդն ու Մեսրոպ Փահանայ Փափազեանը մտադրած էին իգական սեռի գաստիարակութեան համար դպրոց բանալ ուր իբր վարժուհի պիտի պաշտօնավարէր օր. Աշխէն Փափազեանը (քահանայի աղջիկ): Ժողովուրդի մեծ մասը համամիտ էր, որ աղջկանց համար դպրոց բացուիր Սակայն կարգ մը խաւարամիտ տարբերը հակառակ էին: Հոգաբարձութեան անդամներէն մէկ քանիներն ալ դէմ էին աղջկանց դպրոցի բացման ծրագրին: Ասոնք Առաջնորդի հետ վէճի մտան, ծանր խօսքեր փոխանակուեցան, հարցը այնքան սուր կերպարանք առաւ, որ Անդրէաս Արքեպի հրաժարեցաւ և 1876ի Սեպտ. 27ին Թաւրիդէն ճամբայ ելաւ դէպի էջմիածնին, ուրկից նոյն թուի Հոկտեմբերին Թաւրիդ հասաւ երիտասարդ Բարդողիմէոս Վարդապետ Ճուղութեանը իբր Առաջնորդական փոխանորդ և Արամեան դպրոցի տեսուչ, վասնզի Սամուէլ Գիւլզադեանը Առաջնորդի բացակայութեանը չուզեց վարել տեսչական պաշտօն՝ Հոգաբարձութեան հետ ընդհարուելու մտավախութեամբ:

## ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑՆ ՈՒ ՌԱՖՓԻՆ

Աղջկանց կրթութեան անհրաժեշտութեան մասին 1877ի Մարտին Բաֆթին «Մշակաբ» մէջ յօդուած մը կը գրէ Թաւրիզէն ու քննադատական կծու և խիստ խօսքեր կ'ուղղէ նաև այն անձերուն, (որոնց մէջ կային նաև հոգաբարձուներ) որոնք դէմ էին իգական սեռի դաստիարակութեան Խաւարամիտներն ու դաւազիրները (որոնց մէջն էր նաև նշանաւոր Յովսէփ Աւագ Քահանան) կը գրգուին, մինչև իսկ կառավարութեան գաղտնի լուր կուտան թէ Բաֆֆին վտանգաւոր մարդէ, իր «Հարէմը» պատմուածքով գաղտնիքներ յայտնագործած է հայլն հայլն, կատաղած կրքերը այն աստիճանի կը հասնին, որ օր մըն ալ 1877 Ապրիլի սկիզբները՝ խաւարամիտներէն 30 հոգի՝ ղեկավարութեամբ Անտոն Խան Մատֆէեան-Երուանդեանի Արամեան դպրոց կը թափուին, Բաֆֆին Դ. բաժանմունքի մէջ զբաղած էր դասաւութեամբ\*), Խոռվարաները դասարանի՝ դուռը կը բանան և կը պահանջեն, որ Բաֆֆին դուրս գայ և դպրոցէն հեռանայ:

Բաֆֆին յանկարծակի եկած կը հարցնէ.

- Ի՞նչ էք կամենում, պարոններ;
- Մենք պահանջում ենք, որ դուք այսօրուանից դպրոցից դուրս գնաք, շնուր:

- Ինչու դպրոցից դուրս գնամ, դուք ով էք;
- Այսպէս էլի, մենք չենք ուզում որ դուք դպրոցում լինէք, աւելորդ տեղ մի խօսէք;
- Բայց ես ձեզ չեմ ձանաչում, ինձ հոգաբարձու-

\* ) Ուրիշ վկայութեան մը համաձայն Բաֆֆին Բ. բաժանմունքի մէջ Հայոց պատմութիւն կ'աւանդէր երբ խոռվարաներն եկան:

թիւն է վարձել, ապա ուրեմն և միայն նա կարող է ինձ հեռացնել դպրոցից:

— Հոգաբարձուներին էլ մեն ենք ընտրել

— Ուրեմն գուք իմ մասին կարող էք խօսել հոգաբարձութեան հետ:

— Ո՛չ, մենք պահանջում ենք որ դուք դպրոցից հեռանաք, եթէ ոչ մենք ձեզ ուժով դուրս կը հանենք:

— Դուք չէք համարձակուի այդ քայլն առնել, կը պատասխանէ Բաֆֆին:

Հանգուցեալ Աւագ Խան Ափթանդիլեանը\*) պատմած է իր որդի Սուրէնին, որ խոռվարաները սկսան աղմկել վայնասուն բարձրացնել և առաջ քշեցին Անտոն Խան Երուանդեանին կանչելով.

— Խան քաշիր... (այսինքն Բաֆֆիի թեէն բռնելով, քաշելով դասարանէն դուրս տար):

— Դուք քաշէք, որ ես էլ քաշեմ, կը պատասխանէ սարսափած Անտոն Խանը և ետ ետ կ'երթայ երբ աշակերտներն ալ կ'աղմկեն և կը սպառնան:

— Խան քաշիր... մի վախենայ, կը կրկնեն խանի արբանեակները:

Ըստ Աբրահամ Մելիք Աբրահամեանի վկայութեան, այդ իրաւանցումի ժամանակ Բաֆֆին կը յաջողի դասարանէն դուրս ելնել, մանել ուսուցչանոցը և ապաստանել Նասրագին Շահի նկարի տակ (բաստ մանել):

Խոռվարաները դարձեալ կ'աղմկեն, կը կանչեն, բայց

\*) Թիհրանի «Ալիք» թիրթի թիւ 170ի մէջ, (16 Ապրիլ 1936), Այգուն ստորագրութեամբ փոքրիկ յօդուած մը կայ, ուր յօդուածագիրը Արամեան դպրոցի 1877ի հոգաբարձութեան անդամ յիշած է նաև Աւագ Խան Ափթանդիլեանը, որ այդ թուին ոչ թէ Արամեան դպրոցի հոգաբարձուներէն էր, այլ Բաֆֆիի պաշտօնակիցն ու վաղեմի բարեկամը Բաֆֆին և Աւագ Խանը մինչև մահ հաւատարիմ և անկեղծ բարեկամներ մնացին. Այգունի յիշած Խանը Անտոն Խանն է, ոչ թէ Աւագ Խանը:

չեն համարձակեր Բաֆֆիին մօտենալ և թեէն քաշել, Անոնք կը հայհոյեն, դպրոցի խաղաղութիւնը կը վրգովեն ու կը հեռանան: Նոյն օրը՝ երեկոյեան Թումանեանենց տան մէջ կը կայանայ Հոգաբարձութեան ժողովը, որուն ներկայ կըլլայ նաև Բաֆֆին: Դէպքի մանրամասնութիւնները կը քննեն, Բաֆֆիի բացատրութիւնները կը լսեն և կ'որոշեն որ Յակոբ Վարժապետը, նոյն գիշերն իսկ պէտք է հեռանայ Թաւրիզէն, որպէսզի նոր խոռվութիւններ առաջ չը գան: Եւ իսկապէս, ըստ Աղա Վարդան Թումանեանի վկայութեան, նոյն գիշերն իսկ Բաֆֆին ձի կը նստէ և «Ճարվարդարնի մառաջնորդութեամբ կ'երթայ Զուլֆա, ապա Թիֆլիս և յետոյ Ագուլիս՝ իբր ուսուցիչ»:

Բաֆֆին Ագուլիսէն 1877ի նոյեմբեր 3ին Աւագ Խան Աֆթանդիլեանին կը զրէ լնդարձակ նամակ\*) մը, որմէ կը քաղեմ հետեւեալ տողերը՝ Արամեան դպրոցի խոռվութեանց մասին:

### Աղնիւ բարեկամ!

. . . Աշխատեցէք, եղբայր, խնամք տանել դպրոցի բարւոքմանը, ոչ միայն իբրև վարժապետ, այլ որպէս ազնիւ հայ, որ ճանաչում է թէ ինչ կարևորութիւն ունի ազգային դաստիարակութիւնը: Խաւարասէրների խոչընդուներն թող չը վճատեցնեն Ձեզ, — խաւարասէրն ամէն տեղ լուսոյ դէմ պատերազմում է, բայց ճշմարիտ ազգասէրի եռանդը թուլացնել չէ կարողանում...

Չը գիտեմ, ինչպէս վերջացան ինձանից յետոյ տեղւոյդ խոռվութիւններն. մի քանի տեղեկութիւններ ինձ գրած էին, բայց լիակատար բաւականութիւն չը տուցին իմ հարցասիրութեանը: Կը ցանկանայի, որ խոռվարալներն մինչեւ այժմ հան-

\*) Այս, ինչպէս նաև Բաֆֆիի բազմաթիւ անտիպ նամակները, որոնք ինձ մօտ են, լոյս պիտի տեսնեն Բաֆֆիի մասին գրածն ընդարձակ ուսումնասիրութեան մէջ: Այս հատորը կը բռվանդակէ Բաֆֆիի մանրամասն կենսագրութիւն, բազմաթիւ փաստաթուղթերով, անտիպ լուանկարներով և նորանոր տեղեկութիւններով հարստացած:

գըստացած լինէին իրենց չար կրքերից, որ պատիւ չի բերում Թաւրիզի հասարակութեանը. և մանաւանդ կործանման անդունդ է բացում ամենի առջեն...

Ես ներում եմ, և աշխատում եմ մոռանալ այն բոլոր անիրաւութիւնք որով վարուեցան ինձ հետ իմ թշնամիքը, և քրիստոնէական անյիշաչարութեամբ ցանկանում եմ, որ Աստուած հեռու պահէր այդ ողորմելիներին իրանց մոլորութիւնից.... Յուղան յաւիտենական դատապարտութիւնը վարձ ստացաւ իւր գործի համար,— այսպէս են բոլոր մատնիչներն...

Ողջունեցէք իմ կողմից Բարդուղիմէս հայր սուրբին և Տէր Մեսրոպ հօրը. մի մոռացէք և իմ խոնարհութիւնը յիշել Աղայ Երեմիային, Աղայ Ներսէսին և Մեծապատիւ Սօլօմօն Խանին:

### Զեր Յ. Մելիք ՅԱԿՈԲԵԱՆ

Արամեապէս դպրոցի մասին Բաֆֆին նաև հետեւեալը գըրած է («Պարսկական Պատկերներ» էջ 510 - 12):

«Սաթունեանը շինեց դպրոցը, առաջնորդարանը և այլ ազգօգուտ հիմնարկութիւններ, — բոլորը իւր փողով, այսինքն այն փողով, որ նա ստանում էր վիճակից որպէս «հոգեոր պտուղ»: Բայց նա ժողովրդից ստացածը կըկին ժողովրդին յետ դարձեց, իւրեան չը սեպհականացրեց.... Սաթունեանն ինքը ժողովրդական մարդ էր. նա ոչինչ առիթ չունէր իւր դպրոցը կնքել «հոգեոր» անունով.... Այս դպրոցը բոլորովին ժողովրդական էր, բայց նորան Եկեղեցականացրին, մեոցրին.... Ժողովուրդն այս հասկացաւ, բայց հասկացաւ խիստ ուշ... նա ազատեց առաջնորդի ձեռքից դպրոցի միայն կմախքը... նորան պէտք էր նորից շունչ տալ, — այդ վերջինը կարօտ էր դրամի.... Բարերար անձանց նուերներն հասան մինչեւ մի նշանաւոր գումարի, որի տոկոսով դպրոցը կարողացաւ ունենալ առաջուայ տիրացու վարժապետների տեղ՝ մի տեսուչ և եօթն վարժապետներ: Դպրոցի մէջ մտան երկրի պահանջներին համեմատ, բացի հայերէնից, Փրանսերէն, ոռւսերէն, պարսկերէն լեզուներ, և գիտութիւնից՝ զանազան առարկաներ: Դպրոցն ունեցաւ հինգ դասատուն, և բաւա-

կանին բարեկարգ ձեի մէջ մտաւ: Նորա կառավարութիւնը յանձնուեցաւ ժողովրդից ընտրուած հոգաբարձութեան, որոց եռանդուն գործունէութիւնը առաջին տարուայ ընթացքում ցոյց տուեց իւր պատուղները: Յիշեալ վերանորոգութիւններից յետոյ Դավրիժոյ ազգային դրաբոցը թէկ տակաւին ունի իւր ինչ ինչ թերութիւնները, բայց երկրի դրութեանը նայելով նա կարողացել է դրաբոցների կատարելատիպը համարուիլ:

Արամեան դպրոցն ունեցաւ նաև իր գրադարան-ընթերցարանը, որուն տեսուչը կ. Պոլսեցի Յ. Հաճիեանը անունով թաւրիզաբնակ երիտասարդ մըն էր, ըլլալով նաև գրադարանի հիմնադիրներէն մէկը: Այս երիտասարդի ջանքերով գրադարանն ունեցաւ 700 կտոր զանազան գրքեր: Գրադարանի մասին Բաֆֆին կը գրէ.

«Ենորհակալութիւն կ. Պոլսեցի ազգայիններին, որոնք ցոյց տուին խիստ ազնիւ համակրութիւն դէպի աղքատ Դավրիժի ընթերցարանը, ուղարկելով նորան, որպէս ընծայ 470 հատոր զանազան լեզուներով գրքեր: Իսկ մեր Թուսաստանի հայերից չը գտնուեցաւ և ոչ մէկը, որ մի հատոր գիրք ուղարկած լինէր»:

Մեսրոպ Քահանայ Փափազեանը իր յիշատակարանի մէջ կը գրէ, 1877ի Յունիս 29ին.

«Սկսեցաւ Դավրիժու ուսումնարանաց հարցաքննութիւնները խիստ տարտամ կերպով, որովհետև մեծ խոռվութիւն պատահած էր հայոց մէջ Տէր Յովսէփ Քահանայի շնորհիւ»:

Ակնարկը Բաֆֆիի հետ պատահած դէպքի մասին է, որուն լուրը երբ էջմիածին հասաւ, Կաթողիկոսի հրամանով Անդրէաս Արքեպ. 1877ի Յուլիս 4-ին Թաւրիզ հասաւ և առաջին առթիւ իսկ Առաջնորդգարանի մէջ գումարեց 127 հոգիանոց բազմամարդ ժողով մը՝ հոգաբարձական ընտրութիւն կայացնելու համար: Գրեթէ վերընտըրուեցան նոյն մարդիկ և գործի լծուեցան՝ 1877ի Օգոս-

տոսէն, բացառութեամբ Ծատուր Խան Սեթխանեանի, որուն յաջորդեց Անտոն Խան Երուանդեանը: Անդրէաս Արքեպ. 1878ի Յունիս 14-ին Թաւրիզէն գնաց Էջմիածին՝ Բարդողիմէոս Վարդապետը նշանակելով առաջնորդական փոխանորդ և Արամեան դպրոցի տեսուչ, սակայն Թաւրիզի դպրոցական, ազգային և թատերական գործերու մէջ իր բարեխիզմ և եռանդագին աշխատանքով կը մարդկան մէջ իր բարեխիզմ և եռանդագին աշխատանքով կը մարդկան մէջ մեծ վրան մը զարկած ներկայացումներ կը կազմակերպէր: Թաւրիզի Հայոց թատրոնի հիմնադիրը նոյն ինքն Մեսրոպ Քահանայ Փափազեանն է: Վերջապէս այս քահանան էր, որ իր յամառ ջանքերուն շնորհիւ յաջողեցաւ աղջկանց դպրոցի հարցն ի գլուխ բերել: Ահա թէ ինչ կը գրէ Փափազեանն այդ մասին:

«Մի քանի ուսումնասէր եռանդու երիտասարդներէ մեր խորհրդով մի ընկերութիւն կազմեցի Օրիորդաց Վարժարանի բացման համար: և մեր Աշխէնին (իր աղջիկը) ընտրեցին վարժուհի և զիս իբրև դասատու և տեսուչ նոյն վարժարանին»:

Այսպէս ուրեմն Բաֆֆին մամուլի միջոցով կ'արծարձէր Թաւրիզի հայ իգական սեռի համար յատուկ դպրոց ունենալու հարցը, որ այնքան խոռվութեանց տեղի տըռաւ, իսկ ինքն ալ քշուեցաւ Թաւրիզէն:

Մեսրոպ Քահանայ Փափազեանն իրականացուց Բաֆֆիի ցանկութիւնը: Զարմանալի է, որ Բարդողիմէոս Վարդապետը հակառակեցաւ աղջկանց դպրոց բանալու ձեռնարկին, ընդհարուեցաւ հոգաբարձութեան հետ և ըստ Փափազեանի «անպատիւ կերպով Դավրիժից դուրս եկաւ և գնաց Էջմիածին, և Առաջնորդգարան մնաց ամայի»:

Աղջկանց դպրոցի բացման հանդէսի մասին Փափազեանը կ'արծանագրէ 1879ի Օգոստոս 12ին.

«Օրիորդական վարժարանի բացման հանդէսի համար հրաւիրուեցան Աւարայրեան Ընկերութեան Գործադիր ժո-

դովից երևելի հայեր, ուր կտուարուեցաւ նախ կրօնական հանդէս, և յետոյ ազգային հանդէս վարժարանի բակի մէջ ազգային երգերով. խօսուեցան խորհրդաւոր ճառեր, և յետոյ ես ատենախօսեցի. թէյ, միրդ խմելից և ուտելից յետոյ մեկնեցան լի յոյսով և ուրախութեամբ».

Հայրն ու աղջիկը (օր. Աշխէն) 1879ի Օգոստոս 14ին Թաւրիզի Հայոց աղջկանց անդրանիկ դպրոցի մէջ կըսկսեն դասեր տալ 20 աղջիկներուտ.

Աղջկանց համար դպրոցական յատուկ շէնք շինեցին յայտնի վաճառական և ազգային բարերար Թումանեանները ի յիշատակ հանդուցեալ Աննա Թումանեանի, որ կինն էր Մահամեսի Յարութիւն Թումանեանի. Այդ դպրոցի շէնքն ալ շինուեցաւ Բերդաթաղի Ս. Աստուածածին եկեղեցոյ բակին մէջ, Առաջնորդարանի դիմաց և կից Արամեան դպրոցին. Լիլաւայի Ս. Ասրդիս եկեղեցոյ բակին մէջն ալ 1879 Հոկտ. 7ին բացուեցաւ աղջկանց յատուկ վարժարանը. Պաշտօնական հանդէս եղաւ, իսկ զիշերը ներկայացում, որուն կը մասնակցէր պետական նուազախումբը.

Զեռքիս տակ ունիմ հազուազիւտ լուսանկար մը, որ կը ներկայացնէ Բերդաթաղի աղջկանց դպրոցի աշակերտութեան և ուսուցչութեան խմբանկարը. Նկարի վրայ կ'երեին երեք տղամարդ ուսուցիչներ, որոնց դէմքերը չնշուած են. Դէմքերէն մէկուն մօրուքէն պարզ կը յայտնուի որ դպրոցի տեսուչ Փափազեանի նկարն է. Թաւրիզի Հայ մշակոյթի պատմութեան մէջ Փափազեան Քահանան պատուաւոր տեղ կը գրաւէ իւր բազմարդիւն գործունէութեամբ. Փափազեանի ամբողջ կեանքն ու գործը՝ այլ առթիւ.

Էջմիածնէն Գէորգ Դ. Կաթողիկոսի կոնդակով 1879ի Հոկտեմբեր 17ին Թաւրիզ հասաւ Ատրպատականի Առաջնորդ Գրիգոր Արքեպ. Մուսեղիսանը, որուն ընդունելութիւնը շատ փառաւոր եղաւ. Արամեան դպրոցի ուսուցիչներն ու աշակերտներն ալ դիմաւորութեան գնացին. Առաջնորդարանի դահլիճի մէջ Փափազեան Քահանան բարի

գալուստի ճառը խօսեցաւ իսկ Գրիգոր Արքեպ. Մուշեղիսանը ազգասիրական զգացումներով զեղուն քարոզ մը տուաւ ներկաներուն, յորդորելով որ ժողովուրդի ղեկավարները հաշտ ու համերաշխ ըլլան, զարկ տան դպրոցի յառաջադիմութեան, անձնական կիրքերն ու հաշիւները չը խառնեն դպրոցի գործերուն, ազգային հիմնարկութիւնները պայքարի և հակամարտութեան առարկայ չը դարձնեն և այն,

Արամեան դպրոցին իրը տնօրէն հրաւիրուած էր Նազար Գորոյեանը, որուն դէմ ուսուցչական խումբը գայրոյթով լի բողոք մը ներկայացուց նորեկ Առաջնորդին պահանջելով, որ հեռանայ դպրոցէն, մանաւանդ որ Գորոյեանն ալ երկու ամսէ ի վեր թէհրան գացեր էր. Արամեան դպրոցի տնօրէն ընտրուեցաւ Առաջնորդը, իսկ տեսուչը Փափազեան Քահանան. Ի վերջո՝ 1880ի Մարտէն Գորոյեանը նրաժամարեցաւ դպրոցի տեսչութենէն:

Արամեան դպրոցի Գործադիր Ժողովի կազմը 1879ի Նոյեմբերին հետեւեալն էր Նախագահ՝ Գրիգոր Արքեպ., Ատենակալ խորհրդականք՝ Ծատուր Խան Սեթխանեան և Աբրահամ Վարդանեան, Օգնականներ՝ Մահտեսի Սիմոն Թումանեան, Յովհաննէս Նազարեան, Գանձապետ, Ասրի Միքայէլեան, Երեցգոյն՝ Ղազար Մելիք Բարաջանեան, Ատենադպիր՝ Խաչատուր Տէր Զաքարեան, Այս Գործադիր Ժողովը Թաւրիզի Հայոց ամեն տեսակ ազգային գործերու բարձր և պատասխանատու մարմինն էր, որուն կ'ենթարկուէին ամէնքն անխտիր:

Արամեան դպրոցի այս տարիներու ուսուցիչներն եղած են՝ Մեսրոպ Քահանայ Փափազեան, Յովհաննէս Խիզանցեան, Աւագ Աֆթանդիլեան, Յարութիւն Սարկաւագ Արգարեան, Միքաղ Արահամ Փանուէլեան, Միքաղ Մահմադ Ալի՝ պարսկերէնի դասատու Ասոնցմէ հինգ հոգի կը ստանային տարեկան 120ական թուման, պարսից Միքաղն՝ 72 թուման իսկ վերակացու Կարապետ Տէր Կարապետեանը 27 թուման:

Արամեան դպրոցի և Թաւրիզի Հայոց կրթական պատմութեան ոսկեդարը 1870—1880 թուականները պիտի համարել Առաջնորդներէն սկսեալ մինչեւ ուսուցիչներն ու հոգաբարձուները անօրինակ եռանդով գործի լծուած էին և խոր գիտակցութեամբ ու նուիրուածութեամբ կը ջանային բարձրացնել դպրոցի բարոյական ու կրթական մակարդակը։ Ո՞ւրքան յսւզիչ, օրինակելի և յիշատակալից են այս տասնամեակի մէջ թափուած ջանքերն ու ճիգերը, անգամ մղուած պայքարներն ու կատարուած դէպքերը, որոնք զանազան ուղղութեամբ կ'ընթանան դէպի դպրոցն ու ազգային գործերը լաւագոյնս տնօրինելու կէտնպատակը։ Եւ այս ոգին, այս ըմբռնումն ու պայքարը աւելի գոյն ու կերպարանք առած շարունակուեցան նաև հետագայ տասնամեակներու ընթացքին, մինչեւ մեր օրերը։

Արամեան դպրոցի հիմնարկութենէն յետոյ էր, որ Թարիզի մէջ յառաջացաւ նաև Հայ մշակութային շարժումը, որուն այնքան նպաստեցին Գալուստ Շերմազանեան, Մեսրոպ Քահանայ Փափաղեան և Աւագ Խան Աֆթանդիլեանը՝ 1850—1880ական թուականներուն, Ռուսաստանէն, Կովկասէն և Կ. Պոլսէն կըստացուէին ժամանակակից հայ հրատարակութիւններն ու պարբերականները, Մկրտիչ Վրդպ. Խրիմեանի «Արծուի Վասպուրական» ամսաթերթը՝ «Թոռուցեալ հայրենի թեոք յԱրծունի մենաստանէն Վարագայ»՝ բազմաթիւ բաժանորդներ ունէր Թաւրիզի մէջ, Աւագ Խան Աֆթանդիլեանը Հայ պարբերականներու գործակալ և աշխատակիցն էր։ Ազգային ոգին, ուսման սէրն ու ընթերցասիրութիւնը, թատրոնն ու բարեգործական ձեռնարկները բոլորն ալ դպրոցի շուրջ կ'անդրադառնային, կրթական, մշակութային շարժումը Թաւրիզէն տարածուեցաւ նաև գաւառներու մէջ։ Սալմաստի Հայութիւնը սիրով և շուտով ընդառաջեց դպրոցական շարժման։



## ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԵՐՃԻՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ

Արամեան դպրոցի վերջին յիսնամեակի պատմութիւնը պիտի տամ թուուցիկ ակնարկով և պարզ ուրուագծով մը, վասնզի կ'աճապարեմ այս գիրքը յոբելենական հանդէսի օրէն (31 Մայիս 1936) գէթ շաբաթ մ'առաջ հրապարակ հանել։ Այս վերջին յիսնամեակի պատմութիւնը միշտ հնարաւոր է աւելի ընդարձակ և հանգամանօրէն ներկայացնել քանի որ պահուած են փաստաթուղթերն ու արձանագրութիւնները։

Գործադիր Ժողովը կամ Հոգաբարձութիւնը մշակած էր ներքին կանոնագրութիւն մը, որ կը գծէր «Պարտաւորութիւնք Գործադիր Ժողովոյ, Տնօրէնի կամ տեսչի, ուսուցիչների, ուսումնարանի և աշակերտների»։ Այս կանոնագրութիւնը փոխադարձ իրաւունքներու և պարտականութեանց շատ գեղեցիկ ու մշակուած օրինագիծ մըն է, որ 1880ի Յուլիս 25ի նիստին մէջ հաստատուեցաւ և սկսաւ գործադրուիլ։

Կարեոր է արձանագրել նաև, որ առաջին անգամ ըլլալով Վարդանանց տօնը Թաւրիզի մէջ պաշտօնագէս կատարուեցաւ 1880ի Փետրուար 28ին։ Արամեան դպրոցի սրահը լեցուած էր խուռն բազմութեամբ։ Աշակերտները երգեցին «Նորահրաշ» շարականը և ազգային երգեր՝ երգեցողութեան ուսուցիչ պատանի Վոթանէս Փափաղեանի դեկավարութեամբ։ Բանախօսեցին Առաջնորդը, Փափաղեան Քահանան և Ներսէս Ներսիսեանը։

Արամեան դպրոցը 1880-ի գարնան ունէր վեց դասրան և ուսումնական յատուկ ծրագիր, բաւական արդիական ոգիով։ Շուշիէն հրաւիրուեցաւ Սամուէլ Գիւլգաղեանը, բայց մերժեց, չեկաւ։ Տեսուչ վարձուեցաւ Յովեսի Գասպարեանը 3 տարի պայմանագամով և 750 թու-

ման ռոճիկով (Յ տարուան համար): Հոգաբարձութիւնը 1880ի Սեպտեմբեր 5ին կ'որոշէ աւելացնել ուսուցիչներու ռոճիկները՝ նկատի ունենալով տիրող թանկութիւնը: Աւագ Աֆթանդիկեանը պիտի ստանար տարեկան 150 թուման, Միբզա Արգար Սարգսեան՝ 150 և Տիրացու Թաղէսուը (Միրզա Թաղոս անունով յայտնի) 24 թուման:

Փափազեան Քահանայի առաջարկով 1880ի Ապրիլ 5ին Առաջնորդարանի մէջ կայացաւ խորհրդակցական բազմամարդ ժողով մը՝ Վասպուրականի սովելոց օգտին հանգանակութիւն կատարելու: Փափազեանի ղեկավարութեամբ և նախաձեռնութեամբ տեղի ունեցան նաև քանի մը ներկայացումներ, որոնց արդիւնքը յատկացուեցաւ նոյն նրապատակին, թէև այս առթիւ ալ վէճեր ծագեցան:

Աշակերտներն իբր թոշակ կը վճարէին տարեկան 10-18 դուման: Աղքատները կուսանէին ձրի: Դպրոցն ասոնց կուտար գրենական պիտոյքներ, հագուստ և կօշիկ:

Կարդանք Մեսրոպ Քահանայ Փափազեանի յիշատակարանը (էջ 54).

«Մինչդեռ մենք պատրաստում էինք տան կարասիքը վաճառելու և գերդաստանով Սալմաստ գնալու, ահա ինձ անակնկալ կերպով կանչեցին Աւարայրեան Ընկերութեան նշանաւոր անդամներից Տէր Յարութիւնենց տուն և շատ սրտառուչ խօսքերով թախանձելից լետոյ, վերջապէս համոզեցին, որ մի տարի մնանք և օրիորդաց վարժարանի մէջ մեր պաշտօնը շարունակենք, մի որոշեալ պայմանով, որպէս զի մեր պատճառաւ վարժարանը չըխանգարուի: Որեկիցէ զիջողութեամբ յանձնառու եղանք մեր Աշխէն դստեր հետ մի տարի ևս շարունակել մեր տեսչութեան միանգամայն և դասաւութեան պաշտօնները և վարժարանի տնօրէն կարգեցաւ պ. Յովհաննէս Նազարեանց մի Գործադիր Ժողովի Հոգաբարձութեամբ»:

Հոգաբարձութիւնը 1881ի Յունիս 19ի նիստին մէջ տուաւ հետեւալ որոշումը.

«Օրիորդաց դպրոցը անհրաժեշտ համարելով մեր քաղաքի համար բարեխղճաբար քանիցս խորհուրդ կազմելով և այսօր միանգամայն վճռուեցաւ Գործադիր Ժողովից և այլ հրաւիրեալներից յիշեալ դպրոցը միացնել ազգային արական դպրոցի հետ, և Հոգաբարձութիւնը անխտիր պարտաւորութիւն համարելով միանուագ խնամք տանել երկսեռ դպրոցների վերայ, որպէս արական դպրոցի և նոյնպէս օրիորդական դպրոցի վերայ, հոգալով նոցա յառաջադիմութեան համար կարեոր կրթութիւնը և ուսումը, և նոյն նոցա վերաբերեալ ծախքերը, աշխատելով ի ձեռս բերել պարտ ու պատշաճ հասոյթները և նոր եկամտի աղբիւրները գտնել»:

Արամեան դպրոցի Հոգաբարձութեան անդամները 1881ին հետեւալներն էին՝ Արգուման Նազարբէկեան, Աբրահամ Վարդանեան, Ասրի Բէկ Միքայէլեան, Մահատեսի Սիմոն Թումանեան, Սարգիս Տէր Օհանեան, Խաչատուր Տէր Զաքարեան և Նազար Գորոյեան: Այս կազմի կողմէ իբր ուսուցիչ հրաւիրուեցաւ նաև Գալուստ Գ. Փիլոսեանը և ուրիշներ:

Դրիգոր Արքեպիս. Մուշեղեանը 1882ին յաջողեցաւ Շուշին Թաւրիզ բերել Սամուէլ Գիւղադեանը՝ իբր տեսուչ Արամեան դպրոցի: Հմուտ դաստիարակ, ծանրաբարոյ անձ և բարեխիղճ աշխատող էր Գիւղադեանը: Առաջնորդ Մուշեղեանը փորձեց Թիֆլիսէն Թաւրիզ հրաւիրել նաև Ռաֆֆին, բայց անոր հակառակորդները խանգարեցին: Դրիգոր Արքեպիս գովելի եռանդով կպած էր դպրոցական գործին: Երբ Սալմաստն անցաւ, 1882ին, կանոնաւորեց գիւղական դպրոցները, որոնց համար ստեղծեց նաև դրամական աղբիւրներ: Այս կրթասէր և արժանաւոր Առաջնորդը՝ թեմական այցելութեան ժամանակ հիւանդացաւ Սալմաստի Փայաջուկ գիւղին մէջ և անդ վախճանեցաւ ու թաղուեցաւ Ս. Գէորգ եկեղեցոյ գաւթին մէջ, երջանկայիշատակ Սահակ Եպիս. Սաթունեանի գերեզմանին առընթեր:

Էջմիածնէն Թաւրիդ եկաւ 1883ի ամբան՝ իրը Առաջնորդ Հայոց Ատրպատականի Թաղէոս Եպիսկոպոս Տէր-Գանիկեանի, որ հանդարտ մարդ ըլլալով ենթարկուեցաւ հայ ազաներու քաղաքականութեան, Թեմական այցելութեան երթալէ քանի մ'օր առաջ, 1883ի Նոյեմբեր 7ին Հոգաբարձութեան գրեց հետևեալը.

«Որպէս տեսանեմք զի դուք քաջ ճանաչելով զպարտիս Զեր բարի զգացմունքով և ազգասիրական հուանդով վերածեալ էք զյանձնեալ Զեզ դպրոցսն՝ ի ծաղկեալ և ի բարեկարգեալ դրութեան ի ձեռն արիաջան ընդուակ և հմուտ ուսուցչաց։ Ուստի պարտք համարեցաք զմեր առ՝ ի սրտէ խորին շնորհակալութիւն մատուցանել Զեզ բարեխիդ և ազգասէր Հոգաբարձուաց»։

Արամեան դպրոցի նորընտիր Հոգաբարձութեան կազմը (1883 Մայիս 20) հետևեալն էր — Աղա Յովակիմ Ֆէնէրձեան, Աբրահամ Վարդանեան, Մահասիր Սիմոն Թումբանեան, Ասրի Բէկ Միքայէլեան, Ալէքսան Տէր Օհանեան և Մարգիս Յունանեան (հետագային Թաւրիդի Հայոց վաճառականապետ, թաջիրբաշի Աղա Սասիկ անունով յայտնի)։ Այս Հոգաբարձութիւնը կ'որոշէ Թիֆլիսէն Թաւրիդ հրաւիրել Բաֆֆին՝ իրը ուսուցիչ կամ տեսուչ Արամեան դպրոցի, սակայն Բաֆֆին կը մերժէ հրաւէրը, քանի որ կ'աշխատէր «Մշակ»ի խմբագրութեան մէջ և իր գրական փառքի և գտած ժողովրդականութեան լաւագոյն շրջանի մէջ կ'ապրէր։ Իրը տեսուչ հրաւիրուեցաւ շուշեցի Սիմոն Հախումեանը, ուսուցիչներ վարձուեցան՝ Ներսէս Յակոբեան, Աբգար Տէր Եսայեան, Միքայ Աղաջան և Տիկ Կատարինէ Ներսիսեանը՝ տարեկան 130 — 170 թուման ոռմիկով։

Թաղէոս Եպիսկոպոսը հազիւ մէկ տարի վարեց Ատրպատականի առաջնորդութան պաշտօնը և յիշատակութեան արժանի որևէ գործ չըրած 1884ի Մայիսին գնաց էջմիածին։

Արամեան դպրոցի տեսուչ Սիմոն Հախումեանը 1883ի

Օգոստոսի վերջերը հասաւ Թաւրիդ և Նոյեմբեր 4ին Հոգաբարձութեան գրեց։

«...իմ դպրոց մտած օրս անբարեկարգ վիճակի մէջ գտայ — մանաւանդ Արամեան օրիորդական դպրոցը ... Կարեոր համարեցի յարգելի հոգաբարձութեան հետ յաճախ խորհրդակցութեամբ անմիջապէս ձեռնարկել Դավրիժու Արամեան դպրոցների արմատական բարեկարգութան, ամենից առաջ կազմելով դոցա համար մի ծրագիր, համաձայն այն ուղղութեան որն արդէն օգտակար է համարուած կովկասեան հայերի շատ յառաջադէմ դպրոցներում, ի հարկէ յարմարեցնելով այդ ծրագիրը տեղական հանգամանքներին, առանց նըանից ամենափոքր չափով անգամ ճնշուելու»։

Էջմիածնի Սինոգի կողմէ՝ 1884ի ամառը Ատրպատականի Հայոց Առաջնորդի պաշտօնով Թաւրիդ հասաւ Յովինենիս Վարդապէս ձերմակեանը, որ կաթողիկութենէ դարձած էր Հայ եկեղեցոյ գէրկը։ Սա զարգացած, հոետոր և լեզուագէտ մարդ էր։ Սակայն Թաւրիդի հայ աղաներն ու խաները յաճախ ընդհարուեցան այս մարդու հետ, յառաջացան վէճեր և խոռոշութիւններ։ Կամակոր աղաներն ու յամառ վարդապետը փոխադարձ մեղադրականներ և բողոքներ կը գրէին Մակար Ա. Կաթողիկոսին, որ ի վերջոյ ստիպուած եղաւ Ճերմակեանը կանչել էջմիածին։

Ժամանակաւորապէս Թաւրիդ եկած Համբարձում Առաքելեանի առաջարկով Սիմոն Հախումեանի ուսուցչական խումբը — Մ. Նաւասարդեան, Աւագ Աֆթանդիլեան, Ն. Յակոբեան, Աբգար Տէր Եսայեան և Նիկողոս Տէր Աւետիքեան — 1884ի Յունուար 31ին կ'որոշէ կազմակերպել ներկայացումներ «բարեգործական նպատակով»։ Սակայն ուսուցչական խմբի այս որոշումը Հոգաբարձութիւնը անուշադրութեան կը մատնէ, հակառակ Համբարձում Առաքելեանի միջամտութեան։

Արամեան դպրոցի պատմութեան տիտոր մէկ էջ կը

կազմէ Սիմոն Հախումեանի տեսչութիւնը, որ 8 ամիս տեսեց միայն Հոգաբարձութիւնը 1884ի Ապրիլ 24ի նիստի արձանագրութեան մէջ գրուած է հետևեալը.

«...Նորա գլխաւոր պարապմունքներն եղել են զանազան բժախնդրութիւններ, անդադար յարուցել է յուզմունք և խոռվութիւններ թէ ուսուցչաց և թէ հոգաբարձութեան մէջ, ...վասնորոյ արհամարհանօք մերժում ենք և հեռացնում ենք նորան Ազգային դպրոցի պաշտօններից»:

Իր Առաջնորդ Ատրպատականի Հայոց Թաւրիդ եկաւ 1885ի Մայիսին Մեսրոպ Ծայրազոյն Վարդապետը, որ Մայիսի 17ին Առաջնորդաբանի մէջ գումարել տուաւ Բերդադաղի հայերու ընդհանուր ժողովը և կայացուց Արամեան դպրոցի Հոգաբարձութեան, ընտրութիւնը, Միաձայնութեամբ ընտրուեցան — Մահտեսի Սիմոն Թումանեան, Սարգիս Յունանեան, Աստուածատուր Ղարաբէկեան, Խաչատուր Տէր Զաքարեան և Ս. Միքայէլեան, իսկ իր անձնափոխանորդ՝ Յովհաննէս Տէր Յովսէփեան և Նազար Գորոյեան:

Արամեան դպրոցի տեսուչն էր 1880ական թուականներուն կ. Պոլսեցի Տիգրան Գալֆայեանը որ զարգացած մարդ էր, լեզուագէտ, Թատրոնի և ներկայացումներու սիրահար էր, ինքն ալ գերասան էր, կը գրէր նաև թատերգութիւններ և կը բեմադրէր: Ասոր տեսչութեան օրով ուսուցչական պաշտօն կը վարէին Յակոբ Խօջամիրեան և Կոստանդին Տէր Աստուածատրեանը\*): Էջմիածնի Ճեմա-

\*) Սա մեռաւ ի Թաւրիդ և թաղուեցաւ ազգային գերեզմանատանը, ուր և կայ իր տապանաքարը հետևեալ պարզ արձանագրութեամբ.

Կոստանդին Տէր Աստուածատրեան

Եռւեցի

Հայ ուսուցիչ, վայ ուսուցիչ

† 1892 թ.

ըանէն պաշտօնի հրաւիրուեցաւ Թաւրիզեցի ուսանող Արեգնագով Ալէքսանեանը, որ 1886 Մարտ 30 թուակիր նամակով Հոգաբարձութեան կը գրէ.

«...Ուսուցչութիւն, որի խնամքին է յանձնուում մատադ սերնդի մտաւոր ու բարոյական կրթութիւնը, վսեմ պաշտօն է. միայն պէտք է որ յանձնառու եղողները խըզճամտանքով ու անձնուիրութեամբ յառաջ տանեն իրենց գործը, շատ անգամ գնահատութիւնը՝ միայն ապագայից և այն բարոյապէս սպասելով: Ցարդ այդ պաշտօնի համար պատրաստուելով և աւարտման հասնելով ուրախութեամբ եմ ընդունում Զեր հրաւէրը յաջորդ տարին (1886/7 ուսաւարեցրջանին) Արամեան դպրոցում Աստուծոյ յաջողութեամբ ուսուցչութիւն անելու»:

Արամեան դպրոցի մէջ պաշտօնավարելու համար 1886ի Մայիս 30ին դիմում կ'ընէ նաև երևանցի Սիմոն Գիւլամիրեանը, (յետոյ «Արաքս» հանդէսի խմբագիրը) բայց նպատակին չի հասներ ինչ ինչ պատճառներով:

Ատրպատականի Հայութեան ինդրանքին ընդառաջ երթալով, Մակար Ա. Կաթողիկոսը 1886ի գարնան Առաջնորդ կը նշանակէ Ստեփաննոս Եպիսկոպոս Մխիթարեանը, 42 տարեկան, անվախ, եռանդոտ, համարձակ և ազգեցիկ եկեղեցական մը, Արաբօ մականունով յայտնի: Սա Թաւրիզ հասաւ 1886ի Յունիս 15ին և մեծաշուք ընդունելութեան արժանացաւ՝ հայերու, պետութեան և հիւպատոսներու կողմէ: Ատրպատականի գիւղերու կամ Թաւրիզի մէջ ուսուցչական պաշտօն վարելու համար 1886ին դիմում ըրին նաև Տիգրան Ռաշմանեան, Գարեգին Խաժակնեան, Արշակ Զիլինկիրեան և Համազասպ Ստեփաննեանը, որոնք Ստեփաննոս Եպիսկոպոսի հետ նախապէս ալ խօսած էին այդ մասին:

Ստեփաննոս Եպիսկոպոսի Միիթարեանի Առաջնորդական ազգանուէր գործունէութիւնը շատ խոր և անջինջ յիշատակներ թողած է Թաւրիզի հայութեան մէջ: Նա կըցաւ

զպել հայ աղաներու և խաներու կամայականութիւնները և բոլորի վրայ ազգեցութիւն բանեցուց՝ դառնալով աիրական, ինքնավտահ և աչալուրջ դէմք մը, որ ի պատուի էր նաև կառավարութեան, պարսիկ հոգևորականութեան և օտարազգիներու մօտ, Ստեփաննոս Եպիս.ը զարկ տուաւ դպրոցական գործի յառաջադիմութեան իր օրով Թաւրիզի և գաւառներու մէջ հիմուեցան բազմաթիւ մշակութային և բարեգործական միութիւններ և կանոնաւորուեցան թեմական հասոյմները, Արամեան դպրոցին կից աղջկանց դպրոցի շէնքը շատ անյարմար էր: Այս հանգամանքը նըկատի առնելով Թումաննեան բարեգործ եղբայրները իրենց ծախսով դպրոցական յատուկ շէնք մը շինեցին Առաջնորդարանի բակին մէջ, դպրոցի դիմաց և նուիրեցին ազգին՝ շնորհիւ Ստեփաննոս Եպիս.ի աղգու միջամտութեան: Ահա և այդ շէնքի ճակատին հաստատուած մարմարեայ քարի վրայի արձանագրութիւնը.

1887 ամի Փրկչին—ՌՅԼԶ քուին Հայոց:

Օրիորդական դպրոց այս յանուն Սրբոյն Աննայի կառուցաւ արդեամբ բարեգործ եւ ազգասկր Եղբարց Թումաննեանց Սարգսի, Զաքարեայ, Մահեսի Սիմէօնի եւ Խաչատրոյ եւ Յուլիբեցաւ Ամենանշենաւոր սեփիականութիւն Եկեղեցւոյ եւ Ազգին Հայոց Դավթիծու, յաւերծ եւ Երախտագիտական անմահ յիշատակ բարեաց անուանց սիրեցեալ ծնողաց իւրեանց Մահեսի Աղա Յարութիւնի եւ Տիկին Աննայի Թումաննեանց:

Յաւուրս Առաջնորդութեան Աւրպատականի Հայոց Տ. Տ. Ստեփաննոս Արքի Եպիսկ.ի Միիթարեան Շիրակցւոյ:

Ստեփաննոս Եպիսկոպոսի առաջնորդութեան առաջին տարին Արամեան դպրոցն ունէր 2 պատրաստական և 3 հիմնական դասարաններ: Աշակերտութեան թիւը կը հասնէր 110—130ի, Դպրոցի տարեկան ծախսն էր 1400 թու-

ման: Աղջկանց դպրոցն ունէր 2 պատրաստական և 1 հիմնական դասարան՝ 20 աշակերտուհիներով: Միիթարեան Սրբազնը 1887ին կազմել տուաւ Ատրպատականի Հայութեան ընդհանուր վիճակագրութիւնը, որուն արդիւնք հետևեալն է—հայարանակ քաղաքներն ու գիւղերը՝ 118, 3700 տուն կամ ընտանիք, 20,000 շունչ, 92 եկեղեցի, 4 վանք, 71 քահանայ, 5 ծիրական և 52 գիւղական դպրոց:

Արքահամ Մելիք Արքահամեանի խորհրդով՝ Ստեփաննոս Եպիսկոպոսը 1888ի Յունուար 30ին նամակ մը կը գրէ ի Մոսկուա բնակեալ Կովկասանայ յայտնի հարուստ և բարեգործ Յովհ. Յովիաննեանին խնդրելով, որ տպագրական մամուլ մը նուիրէ Արամեան դպրոցին:

Ստեփաննոս Եպիսկոպոսը կը գրէ.

«...Մեր ամենազօրեղ միակ զէնքն պաշտպանութեան և երկրորդ ձեռնտու միջոց ևս վիճակիս Հայոց կրթութեան և գաստիարակութեան գործն յաջողութեամբ և ազատօրէն յառաջ տանելոյ համար պէտք է անշուշտ համարել մի նորագոյն մամլով և պատկանեալ պարագայիւք հանդերձ թեթև տպարան ունենալ Դավրիժումն, ընդ տեսչութեամբ Հոգեոր Առաջնորդութեան Հայոց հեռատեսն նպատակաւ: Ուր տպագրելով դպրոցական ամենատեսակ գրեանք տալ հայ մանկան ձեռն եթէ ոչ ձրի ըստ օտարաց, գրեթէ գիւրագնոյ: ...Իսկ Պարսից կառավարութիւնն առ այդպիսի մի օգտակար ձեռնարկ, հայոց վերաբերութեամբ միշտ բարեհաճ է»:

Բարեգործ Յովիաննեանը սիրով կը կատարէ Առաջնորդի խնդրանքը և 1888ի վերջերը Մոսկուայէն Թաւրիզ կը ճամրէ տպագրական պարզ մեքենայ մը, տառեր և տպարանի գանազան պարագաներ: Հին Առաջնորդարանի ուղղութեամբ Ստեփաննոս Եպիսկոպոս Միիթարեանը շինել կուտայ տպարանի յատուկ երկու սենեակներով շէնք մը, որուն ճակատին կը դնէ մարմարեայ քար մը հետեւալ արձանագրութեամբ.

1889 ամի Տոն – ՌՅԼ ք. Հայոց  
Կառուցան նիւսիսակողման  
Շինուածքն Առաջնորդարանի  
Ուր եւ զառաջին հաստատեցաւ  
Հայկական տպարան ընծայեցեալ  
Ազնուական Աղա Յովհաննիսէ Ս.  
Յովհաննեանց բնակչի Մոսկուա  
Քաղաքի. զանիւք եւ աշխատուք.  
Առաջնորդ վիճակին Հայոց  
Արտպատականի Տ. Ստեփանոսի  
Արի Եպիսկոպոսի Մխիթարեան  
Շիրակացւոյ

Արամեան գպրոցի ուսուցչական խումբի անդամները  
1888ին ասոնք են. Տիկին Շուշանիկ Մալինցեան, Բագրատ  
Եաղութեան, Ցակոր Կարապետեան, Ղուկաս Մալինցեան,  
Կոստանդին Տէր Աստուածատուրեան, Արեգնագով Ալէք-  
սանեան և ուրիշներ:

«Բողոք» վերնագրով, 16 փոքրադիր էջերով, վիմատիպ  
գրքոյկ մը տպուած է Թաւրիզի մէջ 1889ին, Եղբարք Գորո-  
եանց վիմագրատուն: «Բողոք» կը կըէ «Մի խումբ բո-  
ղոքողների կողմից» ստորագրութիւն: Գրութեան ձեռագիրը  
վարժ մարդու է, կ'ենթադրեմ որ Նազար Գորոյեանը գլ-  
րած է: Խմբագրողն ու ստորագրողը միևնոյն անձն է, որ  
քննադատական շատ սուր և հայհոյալից խօսքերով մուր  
կը քսէ Ստեփաննոս Եպիսկ և Արամեան գպրոցի վրայ:

Թաւրիզի Հայոց անդրանիկ ուսուցիչներէն և բազմ-  
ամեայ առաջնորդական փոխանորդ Տէր Յովսէփ Աւագ Քա-  
հանայ Տէր Յովսէփեանը վախճանեցաւ 1887ին և մար-  
մինը մեծաշուք յուղարկաւորութեամբ թաղուեցաւ Բեր-  
դաթաղի Ս. Աստուածածին Մայր եկեղեցոյ գաւիթի ձա-  
խակողմը, ուր և կը մնայ իր շիրմաքարը՝ հետեւել արձա-  
նագրութեամբ.

Տապան Յովսէփ Աւագ Քահանայի Տէր Յովսէփեանց 69  
տամաց հասակի վախճանեալ. Եւ 40 ամեայ Քահանայուե.  
իւրում 24 Մայիս 1887:

Արամեան գպրոցի հագաբարձական և ուսուցչական  
կազմը 1890ին նոյնը կը մնայ՝ Առաջնորդ Ստեփանոս Եպիսկ  
նախագահութեամբ: Համակ եռանդի, աշխատանքի և անձ-  
նութեամբ այս մարմնացումը՝ նոյնինքն Մխիթարեան  
Սրբազանն ամէն տեսակ ջանք ու ձիգ կը թափէ գպրոցի  
անունն ու վարկը բարձրացնելու և նիւթական նորանոր  
աղբիւրներ գտնելու: Հոգաբարձութիւնն ալ իր կարգին  
աջակից կը դառնայ Առաջնորդի ձեռնարկներուն: Դպրոցի  
տեսուչ Տիգրան Գալֆայեանը իր կոչման և պարտականու-  
թեան գիտակից անձ ըլլալով՝ հաշտ ու համերաշխ գործակ-  
ցութեամբ կը վարէ գպրոցը, որու օգտին յաճախ կը կազ-  
մակերպէ նաև ներկայացումներ:

Առաջնորդ Սրբազանի հրաւէրով 1891ի Փետր. 17ին  
գպրոցի սրահին մէջ կը կայանայ Բերդաթաղի ծխական-  
ներու ընդհանուր ժողովը, ուր կընարուի Հոգաբարձու-  
թեան նոր կազմը, որուն անդամներն էին – Ծատուր Խան  
Սեթխանեան, Աղա Յովսէփիմ Ֆէնէրճեան, Աղա Սարգիս  
Յունանեան, Աղա Զաքարիա Նազարբէկեան, Նազար Էֆէնտի  
Գորոյեան և Յովհաննէս Տէր Յովսէփեան:

Մխիթարեանը Սրբազանը 1891 Փետուար 21ին հե-  
տեւեալ դառն տողերը կը գրէ նորընտիր Հոգաբարձութեան.

«...Ահա մտած եմ Առաջնորդական պաշտօնավարու-  
թեանս հինգերորդ տարեցրջանն և շրունակաբար վարած  
եմ ու կը վարեմ անակնկալ յօժարակամութեամբ գպրո-  
ցաց տեսչութիւնն և երբեմն պաշտօն կրօնուսուցչի, հե-  
տեւաբար համբերատար հոգով տանելով աւուրն պատահեալ  
աներեկայելի ծանրութիւնն, սակայն՝ ի հանդէպ իմ այս  
հոգատար կամաւոր ծառայութեանցս՝ տեսի հատուցումն  
և փոխարինութիւնն, բայց միայն սոսկալի ապերախտ ու-  
թիւն: Զի եթէ անցելոյն և ներկայիս իսկ քօղարկութիւնն

1889 ամի Տոն— ՌՅԱԼ ք. Հայոց  
Կառուցան հիւսիսակողման  
Շինուածքն Առաջնորդարանի  
Ուր եւ զառաջին հաստատեցաւ  
Հայկական տպարան ընծայեցեալ  
Ազնուական Աղա Յովհաննիսէ Ս.  
Յովինանեանց բնակչի Մոսկուա  
Քաղաքի. ջանիւք եւ աշխատուք.  
Առաջնորդ վիճակին Հայոց  
Առպատականի Տ. Ստեփաննոսի  
Արիի Եպիսկոպոսի Մխիթարեան  
Շիրակացոյ

Արամեան դպրոցի ուսուցչական խումբի անդամները  
1888ին ասոնք են. Տիկին Շուշանիկ Մալինցեան, Բագրատ  
Եաղութեան, Ցակոր Կարապետեան, Ղուկաս Մալինցեան,  
Կոստանդին Տէր Աստուածատուրեան, Արեգնագով Ալէք-  
սանեան և ուրիշներ:

«Բողոք» վերնագրով, 16 փոքրադիր էջերով, վիմատիպ  
գրքոյկ մը տպուած է Թաւրիզի մէջ 1889ին, Եղբարք Գորո-  
եանց վիմագրատուն: «Բողոք»ը կը կրէ «Մի խումբ բո-  
ղոքողների կողմից» ստորագրութիւն. Գրութեան ձեռագիրը  
վարժ մարդու է, կ'ենթադրեմ որ Նազար Գորոյեանը գը-  
րած է: Խմբագրողն ու ստորագրողը միենոյն անձն է, որ  
քննադատական շատ սուր և հայնոյալից խօսքերով մուր  
կը քսէ Ստեփաննոս Եպիս.ի և Արամեան դպրոցի վրայ:

Թաւրիզի Հայոց անդրանիկ ուսուցիչներէն և բազմ-  
ամեայ առաջնորդական փոխանորդ Տէր Յովսէփ Աւագ Քա-  
հանայ Տէր Յովսէփեանը վախճանեցաւ 1887ին և մար-  
մինը մեծաշուք յուղարկաւորութեամբ թաղուեցաւ Բեր-  
դաթաղի Ս. Աստուածածին Մայր Եկեղեցոյ գաւիթի ձա-  
խակողմը, ուր և կը մնայ իր շիրմաքարը՝ հետևեալ արձա-  
նագրութեամբ.

Տապան Յովսէփ Աւագ Քահանայի Տէր Յովսէփեանց 69  
տամաց հասակի վախճանեալ. եւ 40 ամեայ Քահանայուե.  
իւրում 24 Մայիս 1887:

Արամեան դպրոցի հազարարձական և ուսուցչական  
կազմը 1890ին նոյնը կը մնայ՝ Առաջնորդ Ստեփանոս Եպիս.ի  
նախագահութեամբ: Համակ եռանդի, աշխատանքի և անձ-  
նութեամբ այս մարմնացումը՝ նոյնինքն Մխիթարեան  
Սրբազնն ամէն տեսակ ջանք ու ճիգ կը թափէ դպրոցի  
անունն ու վարկը բարձրացնելու և նրանց նորանոր  
աղբիւրներ գտնելու: Հոգաբարձութիւնն ալ իր կարգին  
աջակից կը դառնայ Առաջնորդի ձեռնարկներուն: Դպրոցի  
տեսուչ Տիգրան Գալֆայեանը իր կոչման և պարտականու-  
թեան գիտակից անձ ըլլալով՝ հաշտ ու համերաշխ գործակ-  
ցութեամբ կը վարէ դպրոցը, որու օգտին յաճախ կը կազ-  
մակերպէ նաև ներկայացումներ:

Առաջնորդ Սրբազնի հրաւէրով 1891ի Փետր. 17ին  
դպրոցի սրահին մէջ կը կայանայ Բերդաթաղի ծխական-  
ներու ընդհանուր ժողովը, ուր կընարուի Հոգաբարձու-  
թեան նոր կազմը, որուն անդամներն էին՝ Ծատուր Խան  
Սեթխանեան, Աղա Յովսէփիմ Ֆէնէրձեան, Աղա Սարգիս  
Յունանեան, Աղա Զաքարիա Նազարէկեան, Նազար Էֆէնտի  
Գորոյեան և Յովհաննէս Տէր Յովսէփեան:

Մխիթարեանը Սրբազնը 1891 Փետուար 21ին հե-  
տևեալ դառն տողերը կը գրէ նորընտիր Հոգաբարձութեան:

«...Ահա մտած եմ Առաջնորդական պաշտօնավարու-  
թեանս հինգերորդ տարեցրջանն և շարունակաբար վարած  
եմ ու կը վարեմ անակնկալ յօժարակամութեամբ դպրո-  
ցաց տեսչութիւնն և երբեմն պաշտօն կրօնուսուցչի, հե-  
տեւաբար համբերատար հոգով տանելով աւուրն պատահեալ  
աներեակայելի ծանրութիւնն, սակայն՝ ի հանդէպ իմ այս  
հոգատար կամաւոր ծառայութեանց՝ տեսի հատուցումն  
և փոխարինութիւնն, բայց միայն սոսկալի ապերախտ ու-  
թիւն: Զի եթէ անցելոյն և ներկայիս իսկ քողարկութիւնն

մերկացնելու լինիմ, ի հանդիսատեսութիւն տրուած կը գտնէք մի ռւրուագծեալ տիրատեսիլ մռայլ պատկեր ամենակերպ անհեթեթութեանց... ուղղակի կամ կողմանակի քմահաճ ոտնահարութիւնք իրաւանց, յանդուգն կամայականութիւնք, նենգամիտ շաղփաղփութիւնք և այլ սոցին կարգի անվայել արարք»:

Արամեան դպրոցի արդիւնաւոր ուսուցիչ և երբեմի տեսուչ Մեսրոպ Վարդապետ Փափազեանը\*) 1891ի Ապրիլին Թէհրանէն անցաւ Թաւրիզ և ապա Սալմաստ՝ Վան-Վարագայ վանքը երթալու ցանկութեամբ, Ծերունազարդ Վարդապետը (68 տարեկան էր) իր Բարսեղ ծառայի հետ՝ նոյն թուի Մայիս 2ի գիշերը ստոր դաւադրութեամբ սպանուեցաւ Հաֆթուան գիւղին մէջ, Բազմարդիւն դաստիարակի և ազգային համեստ գործիչի այս եղերական մահը խոր վիշտ պատճառեց Թաւրիզի հայերուն, մանաւանդ անոր աշակերտներուն, որոնք իրենց ուսուցչի յիշատակին կատարեցին հոգեհանգիստ - սպահանդէս:

Փափազեան Վարդապետի սպանութենէն 4 ամիս առաջ, 1890ի Դեկտեմբեր 28ին, Սալմաստի մէջ, դարձեալ դաւադրութեամբ, սպանուեցաւ Հայ կաթոլիկ Վարդապետ Հայր Մարտին Պարոնեանը:

Մահտարաժամ-ժանտախտ պատահեցաւ 1892ի ամառը, Թաւրիզն ալ ենթակայ եղաւ այդ սոսկալի հարուածին, որ չորցուց հազարաւոր կեանքերը Հարուստները Թաւրիզէն փախան իրենց կեանքը փրկելու համար, Մնացին խեղճերն ու աղքատները, Ասոնց հետ մնաց նաև Հովիւ Քաջ Մտեփաննոս Եպիսկոպոսը, որ Շիջաւ իւր շքեղ Առաջնորդարանից, գնաց մտաւ Լիլաւայի ժողովրդի տնակները՝ անձամբ միմիթարելու, վհատեալ սրտերը քաջալերելու: — Ես

\*) Տիրուհին մեռած ըլլալով, 1888ին Վանի մէջ ընդունեց վարդապետական կոչում և վեղարք՝ ժամանակի Առաջնորդ Գրիգորիս Եպիսկոպոս Ալէաթձեանի ձեռքով և նշանակուեցաւ միաբան Վարդագայ վանքին:

ում համար եմ Ապրում, պատասխանեց Սրբազանը իրեն աղաչողներից մէկին, որ հեռանայ քաղաքից: — Ի՞նչպէս թողնեմ այս խեղճ ժողովուրդը կրակի ու վտանգի բերանում, և հուժկու տղամարդի սիրտը փղձկում է այդ քաղցր սիրուց, արտասունքները գլորում են թուխ այտերի վրայ: ... Անհանգիստ եպիսկոպոսը մի տեղից միւսն է վագում, խոլերայի մասին գրքոյներ է ցրում, խորհուրդներ է տալիս, յուսազբում: Այդ սարսափելի օրերը Սրբազանի առողջ մարմինն էլ չի դիմանում: Նա հիւանդանում է... բժիշկը գալիս է, դարձեալ մի ուրիշ բժիշկ... զո՞ւր ջանքեր... Ստեփաննոս Եպիսկոպոսը հոգին տալիս է պրկուած մկանների սաստիկ տանջանքներում: Օգոստոս 2ին 1892 թուին, շաբաթ օրը: Թաղման կարգը խիստ անշուք էր. ներկայ էին 500 հոգի երկսեռ բազմութիւն:

Այսպէս ուրեմն գեռ երիտասարդ, 48 տարեկան, գերեզման իջաւ Ատպատականի Հայոց կրթանուէր և ժողովրդական Եպիսկոպոս Առաջնորդ Ստեփաննոս Եպիսկոպոսը. Թաղուեցաւ Թաւրիզի Մայր Եկեղեցոյ դաւիթի աջակողմը, ուր կայ և շիրիմը, հետևեալ արձանագրութեամբ.

Հովիւ բաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց Հանգիս Պատապան Պարսկահայոց վիճակաւոր Առաջնորդ Արքապատականի ՏՐ. ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՊՈ. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՇԻՐԱԿԱՅԻ. Ծնեալ 1844 ամի. Վախն. 1892 թ. Օգոս. 2  
Խօլերայիւ

Էջմիածնի Սինոդի կողմէ 1892ի Սեպտեմբեր 4ին Ատրպատականի Հայոց առաջնորդական տեղապահ նշանակուեցաւ Պարսկա-Հնդկաստանի թեմի երբեմնի առաջնորդական փոխանորդ Նոր Զուղայեցի Խաչառու Ծայրազոյն Վարդապետ Կարապետեանը, որ Թաւրիզ հասաւ նոյն թուի Հոկտեմբեր 9ին: Սակայն շատ կարճատե եղաւ ստոր պաշտօնավարութիւնը: Խեղճ և անկարող մարդ ըլլալով՝ յիշատակութեան արժանի որեւէ գործ չկրցաւ ընելի Վախճանեցաւ 1893ի Ապրիլ 11ին Թաւրիզի մէջ և մեծաշուք յուղար-

կաւորութեամբ թաղուեցաւ լիլաւայի Ս. Սարգիս եկեղեցոյ բակը, ուր և կը մնայ իր գերեզմանը, մարմարեայ տապանաքարով:

Մինչև 1890 ական թուականները Արամեան դպրոցի փայլուն կամ մռայլ շրջանները կապուած էին առաջնորդներու անձնական ազդեցութեան և գործունէութեան հետ, Յօդուածագիր մը—Երանեանը, հետեւալ տողերը կը զրէ («Արաքս» 1893, Գիրք Ա. էջ 148—149) Արամեան դպրոցի մասին.

«...Արամեան դպրոցը փոքր ի շատէ այժմ կարողանում է օգնութեան հասնել ժողովրդի վերածնութեան գործին՝ տալով թեմի խորքերում եղած դիւղերին ուսուցիչներ և քահանաներ, Բայց և այնպէս այդ դպրոցը գեռ հեռու է իւր նպատակից՝ չունենալով նպատակայարմար ծրագիր և դպրոցը ղեկավարող մի լաւ մանկավարժ: Արամեան դպրոցը փոխանակ անտէր ժողովրդի մէջ ժողովրդական հոգով ազնիւ, մաքուր իդէալներով զինուած առաքեալներ ուղարկելու, պատրաստում է միայն առետուրի ընդունակ «լեզուագէտաներ, որոնք ոչ մի շահով կապուած չեն ժողովրդի հետ:

...Նպագոյն չէ ներշնչում նոցա մէջ ժողովրդական ոգի, իսկ շրջապատող հասարակութեան մթնոլորտը գրեթէ ամբողջապէս առետրական մթնոլորտ է: Եւ իսկապէս Արամեան դպրոցը Թաւրիզի Հայութեան տուաւ աւելի շատ առետրականներ, հաշուապահներ, քան թէ ժողովուրդին նուիրած գործիչներ: Բացառութիւնները յարգելի են,

Արամեան դպրոցի Հոգաբարձութիւնը՝ Վաճառականապետ Սարգիս Յունանեանի ձեռքով Դարագաղի մէջ զընեց քանի մը հասութաբեր գիւղեր: Ուսուցչական կազմի անդամներն էին 1892-1893ին՝ Արեգնազով Ալէքսանեան, Յակոբ Կարապետեան, Վաղինակ Տէրունեան, Արիստակէս Հարախանեան, Գալուստ Փիլոսեան և Սեղրակ Միրզոյեան՝ 150-50 թուման տարեկան ոռմիկով: Հոգաբարձութիւնը

վանէն հրաւիրեց նաև քաջ հայկարան Մաղաքիա Պլուդեանը, որ Թաւրիզ հասաւ 1892ի աշնան:

Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա.ի—Խրիմեան Հայրիկի կոնդակով՝ էջմիածնի միաբան կրթասէր, գրասէր և ազգեցիկ Սումիաս Արքեպիսկոպոս Պարզեանցը, 1894ի Յունուարին նշանակուեցաւ Արքատականի Հայոց Առաջնորդը, որ նոյն ամսին Թաւրիզ հասաւ և ընդունուեցաւ մեծամեծ պատիւներով: Սուքիաս Արքեպիսկոպոսին առթիւ կազմեց յանձնաժողով մը՝ 1894ի Ապրիլ 29ին, ուսուցիչներէ և բանիմաց անձերէ՝ յանձնարարելով Արամեան դպրոցի համար 1879ին կազմուած ուսումնական ծրագիրը կարդալ և կազմել ժամանակի պահանջներուն համաձայն «լիամասն առաւելութեամբ կրթական շահերն երաշխաւորող կանոնադրութիւն խմբագրել և առաջարկել մեզ ի հաստատութիւն»:

Սուքիաս Արքեպիսկոպութեամբ արտակարգ եռանդով լծուեցաւ աշխատանքի և մանաւանդ զարկ տուաւ դպրոցական գործի յառաջադիմութեան: Անոր գալէն առաջ Սալմաստի, Ուրմիոյ և Խոյի շրջաններու շրջանային տեսուչն էր Արմենական նշանաւոր յեղափոխական գործիչ՝ անձնուէր և անկաշառ Մկրտիչ Աւետիսեան Թէրլէմէզեանը, որ հաստատուն հիմքերու վրայ դրաւ մանաւանդ Սալմաստի գիւղական դպրոցները: Աւետիսեանը Սալմաստի Հայութեան կրթական առաքեալներէն եթէ ոչ անդրանիկ, սակայն լաւագոյնն է, որուն անունը հիացմունքով կը յիշուի: Աւետիսեանը կ'առաջարկէր Սուքիաս Արքեպիսկոպութիւնը կիմել էջմիածնի, կովկաս և գրամ գտնել Արքատականի մէջ կեղունական միջնակարգ դպրոց մը բանալու համար: Այս հարցով զբաղեցաւ նաև Խրիմեան Հայրիկը, որ կեղունական դպրոցի մը հաւանական կառուցման կարծիքներ կ'ուզէր Պարզեանցէն: Արքատականի Հայոց համար Թեմական միջնակարգ դպրոցի հարցով զբաղեցան Պարզեան Արքեպիսկոպութիւնը վովսէփ Վարդապետ Սարամեան, Սահակ Եպիսկոպոս, Այվատ-

եան, Եղեշէ Շ. Վարդապետ Մուրագեան, Մեսրոպ Վարդապետ Մաքսուղեան, Մաշտոց Վարդապետ Փափազեան և վերջապէս Կարապետ Եպիս. Տէր Մկրտչեանը, որուն օրով 1909ին բացուեցաւ այնքան սպասուած Թեմական-Կենտրոնական միջնակարգ դպրոցը՝ Թաւրիզի մէջ:

Սուքիաս Արբազանի նախազահութեամբ 1894ի Մայիս 26ին կը կայանայ նորընտիր Հոգաբարձութեան նիստը: Կազմի անդամներն էին Սուքիաս Արքեպ.ը նախազահ, տնօրէն՝ Նազար Գորոյեան, գանձապետ՝ Գրիգոր Մելիք Ազարեան, երեցփոխ՝ Ալէքսան Տէր Օհանեան, կալուածոց կառավարիչ՝ Մարգիս Յունանեան և Ասատուր Միքայէլեան, խորհրդականներ՝ Զիբրայէլ Բուդաղեան և Աւագ Աւագեան, ատենագպիր՝ Մարտիրոս Նազարբէկեան: Այս Հոգաբարձութեան ջանքերով Արամեան դպրոցը վերածուեցաւ միջնակարգ դպրոցի՝ ունենալով Ե. դասարան, համաձայն ժամանակի պահանջներուն: Միջնակարգ դպրոցի համար յարմար չէր Տիգրան Գալֆայեանը պահել իր տեսուչ, որ այդ պաշտօնը բարեխղճութեամբ կատարած էր 12 տարիներէ ի վեր—1882-1894: Հոգաբարձութեան ցանկութիւնն էր հրաւիրել Սամուէլ Գիւլզաղեանը, որ նախապէս խօսք տուաւ գալու, բայց յետոյ հրաժարեցաւ: Ի վերջոյ Խրիմման Հայրիկի յանձնարարութեամբ Արամեան դպրոցի տեսուչ նշանակուեցաւ Գէորգ Զիլինկիրեանը, որ խոռվայոյզ վիճակ մը ստեղծեց դպրոցի մէջ, ընդհարուեցաւ ուսուցիչներու հետ և հրաժարեցաւ՝ մօտ երկու տարի (1894-1896) տեսչական պաշտօն վարելէ յետոյ:

Սուքիաս Արքեպ.ը 1895ի վերջերը հեռացաւ Թաւրիզէն: Անոր յաջորդեց 1896ի ամրան՝ կտրուկ, եռանդու և աղեցիկ Յովսէփ Վարդապետ Սարահեանը, որուն պաշտօնավարութեան երկու տարիները փոթորկալից՝ բայց անձնուէր գործունէութեան մը միշտ յիշելի շրջան մը կը կազմեն: Արամեան դպրոցին իր տեսուչ էջմիածնի ձեմարանէն հրաւիրուեցաւ Արեղնագով Ալէքսանեանը: Բեր-

դաթաղի և Լիլաւայի դպրոցներու հոգաբարձութեան վոխագարձ համաձայնութեամբ զոյգ դպրոցները միացան 1896ի Յուլիս 5ին, տեսուչ ունենալով Արեղնագով Ալէքսանեանը: Միացեալ Հոգաբարձութեան նախազահն էր Յովսէփ Վարդապետ Սարամեանը, իսկ անդամներն էին՝ Մարգիս Յունանեան, Զաքարիա Նազարբէկեան, Աստուածատուր Փանուէլեան, Ալէքսան Տէր Օհանեան, Ա. Միքայէլեան, Անդրէ Գուլմասեան, Թադէոս Աֆթանդիլեան, Յակոբ Մելիք Սարգսեան, Գրիգոր Մելիք Ազարեան և Գ. Շահնազարեան: Տեսուչը միացեալ դպրոցներու համար կազմեց 24 հոգինոց ուսուցչական խումբ մը: Երկու թաղերու դըպրոցներու միացման գործը սակայն տարի մը կը տեէ: Արեղնագով Ալէքսանեանը 1897ին կըստանցնէ Արամեան դպրոցի տեսչութիւնը, իսկ Լիլաւայի Հայկազեան-Թամարեան դպրոցներու տեսչութեան համար ալ 1898ին կը հրաւիրու յայտնի մանկավարժ Տիգրան Ռաշմանեանը, որու պաշտօնավարութեան շրջանը (1898-1903) իրաւամբ կըրնանք համարել Հայկազեան-Թամարեան դպրոցներու պատմութեան Ուկեդարը, երբ այդ դպրոցը Ատրպատականի Հայութեան կուտար շրջանաւարտներու հազուագիւտ խումբ մը, որուն անդամները ապագային դարձան կրթական և ազգային անձնուէր գործիչները Ասոնցմէ Ատրպատականի Թաւրիզի համար յայտնի գարձան մանաւանդ Գասպար Յակոբեան, Արմենակ Աֆթանդիլեան, Արմենակ Գերասիմեան, Միքայէլ Ստեփանեան, Լևոն Գրիգորեան (Երաժշտակէտ) Բժ. Արմենակ Թ. Աֆթանդիլեան և ուրիշներ:

Իր առաջնորդական եռամեայ պաշտօնավարութեան ընթացքին Ատրպատականի մէջ պատահեցան քաղաքական գանազան դէպքեր, որոնց հանդէպ Սարամեանը ցոյց տուաւ խոհեմ, հեռատես և կտրուկ վերաբերմունք, արժանանալով թէ պարսից կառավարութեան և թէ իր ժողովուրդի անվերապահ համակրանքին:

Խրիմեան Հայրիկի հայրապետական կոնդակով Ատր-

պատականի Հայոց Առաջնորդ նշանակուեցաւ Սահակ Ար-  
քայիսկոպոս Այվածեանը, որ 1898ի Հոկտեմբեր 23էն  
գործի անցաւ։ Ասոր օրով թէ Թաւրիզի և թէ գաւառնե-  
րէն Սալմաստի մէջ՝ կրթական և աղջային գործերը արդէն  
մտած էին իրենց բնական հունին մէջ։ Սալմաստի Հայոց  
կրթական և մշակութային կեանքի և ձեռնարկներու մէջ  
իբրև գործիչ և ղեկավար՝ ամբողջ 20 տարի արդիւնաւոր  
աշխատանք կատարած է Սամսոն Թաղէոսեանը, Դոկտ.  
Կարապետ Խան Փաշայեանը յամառ ջանքերով յաջողեցաւ  
Թաւրիզի մէջ հիմնել «Լսարանական Ընկերութիւն»ը, որ  
ձեռնարկեց ժողովրդական դասախոսութիւններ կազմակեր-  
պելու գործին։ Արամեան և Հայկազեան դպրոցներու թա-  
տերարաններուն մէջ կանոնաւոր կերպով տեղի կ'ունե-  
նային հերթական դասախոսութիւններ, որոնք կը լսուէին  
խուռն բազմութեան կողմէ։ Թաւրիզի «Լսարան»ը աւելի  
քան 7 տարիներու արդիւնաւոր կեանք մ'ունեցաւ շնոր-  
հիւ իր հիմնադիր Դոքտ. Փաշայեանի ջանքերուն։

Թաւրիզի մէջ 1890ական թուականներէն գոյութիւն  
ունէին կանանց երեք տարբեր միութիւններ, որոնք յետոյ  
միացան «Թաւրիզի Կանանց Բարեգործական Միացեալ  
Ընկերութիւն» անուան տակ։ Այս միութիւնը (որ զանազան  
անուններով շարունակուեցաւ և գոյութիւն ունի ցարդ) իր  
ձեռնարկներով նիւթապէս կը նպաստէր Թաւրիզի և գա-  
ւառներու կրթական գործին։ Միութեան սկզբնական շրջա-  
նի կարևոր գործիչներէն յիշենք՝ Տիկիններ Սրբուհի Ամա-  
տունի, Հեղինէ Ժորժ, Մարիամ Նազարեէկեան՝ Իսկուհի  
Յակոբեան և դեռ շատերը, որոնք անաղմուկ և արդիւնա-  
ւոր աշխատանք կատարած են։

Այվատեանի օրով Արամեան դպրոցի հոգաբարձուներն  
էին—Զաքարիա Նազարեէկեան, Նազար Գորոյեան, Մար-  
գար Միքայէլեան և Նարիման Մելիք Զոհրաբեան։ Արամ-  
եան դպրոցի տեսուչ Արեգնազով Ալէքսանեանի արդիւնա-  
ւոր գործունէութեան մասին Ալ. Տէր Վարդանեանը կը գրէ։



ԱՄԱՍԻԱՆ ԴՐՈՒՅԻ 1901—1902 ուսումնական տարեցրով ուսուցչական խումբը

Կանգնածներ ձափից—Սալմաստի Պալամբէլ, Ազգահանդեսի Պալամբէլ, Եղիշեանի Սելիլից-Զահանսկան, Նիկոլայ Յովենիսիսկան, Աբերդինի Սամանահան (տեսաւ), Գիշերութ Զիլինի լերպահան։  
Ամենից—Ալյոս Սամանադիր թիւն Յարութիւն թիւն Բարեգործական համար Բարեգործական և Գրիգոր Արտաշեան։  
Բարձրին լրիշնածներ—Լուսաւար Բարձրին լրիշնածներ Արտաշեան։

«...Այս համեստ, անաղմուկ և ըստ ամենայնի ընդունակ՝ ու բարեխիղճ մարդու անձնուէր և արթուն տեսչութեան օրով դպրոցը բարձրանում և փայլուն վիճակի է հասնում։ Օրիորդաց դպրոցում բացւում է 4-րդ դասարան, ուր առաջին անգամ մեզանում հայ օրիորդը, ի միջի այլոց ուսանում է հայոց հին ունոր գրականութիւնն...Պըն. Ալէքսանեանի 11ամեայ տեսչութեան օրօք Յ անգամ վերակազմում է ուսման ծրագիրը երկսեռ դպրոցների, ուր այդ շրջանում ուսանելիս են եղել 250—300 հոգի աշակերտուհիներ։ Արամեան դպրոցի երկարատև գոյութեան ընթացքում, մինչև 1907 թիւը միայն տեսուչ Ալէքսանեանն է, որ պահել է խիստ մանրամասն և կանոնաւոր գործեր։ ...Պ. Ալէքսանեանի տեսչական շրջանը կարելի է համարել Արամեան և Ս. Աննայեան երկսեռ դպրոցների ամենափայլուն շրջանը»։

Ինչպէս յիշեցի, Ատրպատականի մէջ Թեմական-կենտրոնական միջնակարգ դպրոց բանալու ծրագիրը առաջին անգամ ներկայացուց Մկրտիչ Աւետիսեանը, 1894ին, երբ Սալմաստի, Խոյի և Ուրմիոյ գաւառներու շրջանային տեսուչն էր։ Իրար յաջորդող առաջնորդներու օրով այդ հարցը միշտ արծարծուեցաւ։

Խրիմեան Հայրիկը 1899ի Մարտ 16 թուակիր նամակով Սահակ Արքեպ. Այվատեանին կը գրէ՝ բացուելիք կենտրոնական դպրոցի մասին։

«...Այդ դպրոցը ուր պէտք է բացուի և որ գաւառում, ուր աւելի է հայազգի ժողովուրդ։ Որչափ ես տեղեկութիւն ունիմ, կարծեմ յարմարագոյն կը թուի Սալմաստու գաւառը որ հայաշատ է և խիտ են գիւղեր, իրարումօտ։ Արդէն Հաֆթուան գիւղում դպրոց կար ուր կ'աշխատէին վանեցի ժուռ ու կոջոպ եղած վարժապետներ։ . . . Սալմաստու գաւառէն դուրս կայ ուրիշ մի կեդրոն յարմարագոյն և միանգամայն կարևորագոյն։ . . . Այս ամէն հարցմունքներուն վերայ պէտք է զլուխ գլուխ բաժնելով լիակատար տեղեկութիւն տաս»։

Այլատեանէն յետոյ Ատրպատականի Հայոց Առաջնորդ ընտրութեցաւ Եղիշէ Ծայրագոյն Վարդապետ Մուրադեանը, որուն ջանքերուն շնորհիւ Ատրպատականի թեմն ունեցաւ իր յատուկ կանոնադրութիւնը և որով ցարդ կը ղեկավարուին թեմական գործերը: Մուրադեանի օրով Բժ. Պետրոս Ապանեանը հիմնեց «Թաւրիզի Հայոց Աղքատախնամ Ընկերութիւն»ը, որ գոյութիւն ունի ցայժմ: Եղիշէ Ծ. Վրդպ. Մուրադեանը՝ իր խմբագրութեամբ 1903ին հրատարակեց Թաւրիզի Հայոց անդրանիկ թերթը՝ «Գործար», որ լոյս տեսաւ միայն մէկ թիւ Եղիշէ Վրդպ.ի ջանքերուն շնորհիւ Գրիգոր Միլզարէկեանը Ատրպ.ի թեմական տպարանին նուիրեց արագատիպ մամուլ-մեքենայ:

Մուրադեանէն յետոյ իրը առաջնորդական փոխանորդներ՝ 1904—1906ին Թաւրիզ եկան Մեսրոպ Վարդապետ Մաֆսուտեան եւ Մաւսոց Վարդապետ Փափազեանը (յայտնի Մեսրոպ Քահանայի որդին), որ 1904ին Թաւրիզի մէջ հրատարակեց «Ազգարար Առաջնորդարան»ի շաբաթաթերթը:

Ատրպատականի Հայոց Առաջնորդ ընտրութեցաւ 1906ին յայտնի գիտնական Կարապետ Եպիսկոպոս Տէր Մկրտիչեանը, որ 1909ին հիմնեց Ատրպատականի Հայոց Թեմական-կենտրոնական դպրոցը և որ գոյութիւն ունի ցարդ՝ իրը ամբողջ իրանահայութեան միակ միջնակարգ դպրոցը: Թեմական դպրոցի հիմնադրութեամբ Կարապետ Եպիսկոպոս մահացաւ Ատրպատականի Հայոց պատմութեան մէջ: Իրը Առաջնորդ 1906ին Թաւրիզ եկաւ Եզնիկ Եպիսկոպոս Ապանունին, որ որևէ գործ չըրած հեռացաւ:

Դառնալով Արամեան դպրոցին պիտի յիշեմ, որ 1901ին, 24,000 թումանի պատկառելի գումարով մը ապահովուած էր, սակայն «այն առեւտրական հայ տները, որոնց մօտ տոկոսով էին տրուած դպրոցական դրամների մի զգալի մաս — սնանկանում են» և դպրոցը նիւթական տագնապի մատնուելով կը տուժէ նաև ուսումնապէս, որով և 1906էն սկսեալ կը փակուին տղաներու Ե. և աղջըկանց Դ. դասարանները: Հոգաբարձական կազմի նոր ընտրութիւնը՝ հետեւալ անդամներով — Զաքարիա Նազարբէկեան, Ջիբրայէլ

ընտրութիւնը կը կայանայ 1906-ին: Նորընտիր Հոգաբարձութեան անդամներն էին — Մելքոն Շահբագեան, Ն. Տէր Օհանեան, Վ. Տէր Օհանեան, Խաչատուր Պատմագրեան և Ալէքսան Բարխուդարեան: Այս Հոգաբարձութիւնը 1907—1908 ուսումնական տարեսկզբին Արամեան տղայոց և Ս. Աննայեան աղջկանց դպրոցներու դասարաններն ու բաժանմունքները կը միացնէ և աշակերտ-ունիները խառն, երկսեռ կը նստեն դասարաններու մէջ: Վահան Բժշկեանին կը յանձնուի 1907/8 և 1908/9 ուսումնական տարեցաններու տեսչութիւնը, որ կը վարէ բարեխղճութեամբ:

Արեգնագով Ալէքսանեանի և Վահան Բժշկեանի տեսչութեան տարիներուն Արամեան դպրոցի մէջ պաշտօնավարած են Հրաչեայ Աճառեան (այժմ մեծանուն գիտնական-լեզուաբան), Նիկոլայ Տէր Օհանեան, Հայրապետ Պանիրեան (այժմ տեսուչ Ատրպ. Հայոց Թեմական դպրոցի) և ուրիշներ: Իր տեղին մոոցանք յիշել, որ 1890—1891ին Արամեան դպրոցի մէջ իրը ուսուցիչ պաշտօնավարած է նաև ազգային-յեղափոխական մեծանուն գործիչ Ռոստոմլի:

Արամեան դպրոցի Հոգաբարձութեան նոր կազմի ընտրութիւնը կը կայանայ 1909ի Յունիսի սկզբին: Կ'ընտըրուին հետեւալները — Դոքտ. Ե. Մ. Սարգսի, Վասմ Փիլոսեան, Վաղարշակ Զաքարեան, Սուրէն Աֆթանդիլեան, Առուաքել Պատմագրեան և ապա Ալէքսան Տէր Կարապետեանը: Հոգաբարձութեան այս կազմի կողմէ 1909ի Օգոստոս 25-ին Արամեան դպրոցին իրը տեսուչ կը հրաւիրուի Ալէքսան Տէր Վարդանեանը\*), որ եռանդով ու բարեխղճութեամբ գործի կը լծուի և դպրոցի ուսումնական մասի աշխատանքները կը վարէ ձեռնհասօրէն, մինչեւ 1912ի Յուլիս 19ի հոգաբարձական կազմի նոր ընտրութիւնը՝ հետեւալ անդամներով — Զաքարիա Նազարբէկեան, Ջիբրայէլ

\* ) Հրապարակախօս, հասարակական գործիչ, խմբագիր և 35 տարիներու վաստակական գործիչ՝ դասատիարակ, որու կը թագավար գործունէութեան յորելեանը տոնուեցաւ Ղազվինի մէջ՝ 1927ի դարնան: Այժմ տեսուչ Մասչեղ-Սուլէյմանիի Հայոց ազգային դպրոցի:

Բուղաղեան\*) (այս երկուքը յետոյ կը հրաժարուին), Գրիգոր Մելիք Ազարեան, Բժ. Վահան Գէորգեան, Ա. Բարխուդարեան,, Ալէքսան Տէր Կարապետեան, Առաքել Պատմագրեան, Ա. Մելիք Զոհրաբեան և Յովհաննէս Տէր Թովմանեան: Այս կազմն ալ Արամեան դպրոցին իրը տեսուչ կը հրաւիրէ Ալէքսան Տէր Վարդանեանը, որ նոյն եռանդով կըստանձնէ իր պաշտօնը և արդիւնաւոր գործունէութեամբ կը շարունակէ մինչև 1919ի Մայիսը, ամբողջ 11 տարի: Ալէքսան Տէր Վարդանեանի տեսչութեան տարիներուն Արամեան դպրոցի մէջ իրը ու սուցիչ պաշտօնավարած են – Աւագ Մելիք Արքահամեան, Լևոն Գէորգեան, Լուդվիկ Տատեան, Վարդան Վասիլեան, Վաղինակ Յովուէփեան, Յ. Զաւուշեան, վարժուհիներ՝ օր. Շ Պարթեան, Զ. Թորգոմեան, պարսկերէնի ուսուցիչ՝ Հասան Զադէ Պարիզի, Աշոտ Պատմագրեան, Գուրգէն Տէր Մարտիրոսեան և ուրիշներ:

Ալէքսան Տէր Վարդանեանի աւեսչութեան տարիներուն զուգադիպեցաւ Արամեան դպրոցի հիմնարկութեան վաթսունամեայ յոբելեանը\*\*) (1851-1911), որ մեծաշուրջ հանդիսաւորութեամբ տօնուցաւ 1913-ին: Այս յոբելեանը դպրոցին տուաւ 11-12,000 թումանի պատկառելի գու-

\*) Եղբարք Թումանեաներէն յետոյ Ատրպատականի Հայութեան ազգային և կրթական հաստատութեանց դրամապէս սատարողներ եղած են նախ Եղբարք Բուղաղեանները և ապա Եղբ. Աւագեանները, որոնց մեծագումար նուիրատութիւնները անպակաս եղած են տարիներ շարունակ: Եղբ. Բուղաղեանները Արամեան դպրոցին նուիրեցին (1936) հարիւրամեայ յոբելեանի առթիւ 3500 րիալ Վաճառականապետ Զիբրայէլ Բուղաղեանի վերաբերմունքը դէպի Ատրպատականի ազգային և կրթական հաստատութիւնները միշտ ալ գնահատութեան արժանացած է:

\*\*) Այս վաթսունամեակը հաշուած են Սահակ Եպիս. Սաթունեանի 1851ին հիմնած դպրոցական շէնքը նկատի ունենալով, իսկ յիշեալ թուականէն առաջ Բերդաթաղի վարժատուն-դպրատունը հաշուի առած չեն, ինչ որ պատմական սխալ է: Արամեան դպրոցի սկիզբը պէտք է ընդունել առնուազն 1835-1836 թուականները: Ա.

մար մը, որ յատկացուեցաւ Արամեան Թատրոնի շինութեան (1914-1915), Թատրոնի այս շէնքը մօտ 20 տարի լիուլի ծառայեց իր նպատակին և դարձաւ դպրոցի հասութաբեր աղբիւրներէն մէկը, որ վերջին տարիներու անդործութեան մատնուած է, քաղաքի կեղրոնէն հեռու դանուելուն և այլ պատճառներով:

Գէորգ Ե. Կաթողիկոսի կոնդակով 1912ի Սեպտեմբերի սկզբին Ներսէս Վարդապէտ Մելիք Թանգեանը (այժմ Արքապիսկոպոս) կ'անցնի Ատրպատական – Թաւրիկ՝ թեմական գործերը քննելու և անհրաժեշտ կարգադրութիւններ ընելու համար: Թաւրիկի մէջ Սեպտեմբեր 7-ին կը կայանայ Ատրպատականի Հայոց Թեմական Պատգամաւորական ժողովը, որ կը լսէ Ներսէս Վարդապետի ընդարձակ զեկուցումը թեմի անկեալ վիճակի մասին: Ժողովը կը զբաղի նաև Առաջնորդի ընտրութեամբ: Ատրպատականի Հայոց Թեմական Պատգամաւորական ժողովը միաձայնութեամբ Առաջնորդ կ'ընտրէ.

«Բարձր. Տէր Ներսէս Վ. Մելիք Թանգեանին թեմիս Առաջնորդ՝ Ապա Ժողովը Հայր Փոխանորդի\*») միջոցով սոյն ընտրութեան մասին յայտնելով Բարձր. Հայր Սուրբին նրան կրկին հրաւիրեց ժողովը և միահամուռ կերպով խնդրեց նկատի ունենալով թեմիս անմիտիթար կացութիւնը չը մերժէ այս ընտրութիւնը»\*\*):

Գէորգ Ե. Կաթողիկոսը կը հաստատէ Ներսէս Վարդապետի ընտրութիւնը, որմէ յետոյ Մելիք Թանգեանը կը լծուի իր ծանր և պատախանատու պաշտօնին և կը վարէ մինչև այժմ:

Ատրպատականի Հայոց արդի Առաջնորդ՝ Գեր. Տէր Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք Թանգեանը ամբողջ 25 տարի է, որ իր ազգանուէր և ժողովրդասէր գործունէութեամբ համբաւ հանած և համագային համակրանքի ու ժողովրդականութեան արժանացած է: Նա Մեծ Հովանաւորն է Ատրպատականի Հայութեան կրթական և ազգային հաստատութեանց, հետևաբար նաև Արամեան յոբելեար դպրոցին:

\*) Տէր Կարապետ Աւագ Թահանայ Մանուկեան, որ 1909էն մինչև այժմ, ամբողջ 28 տարի կը վարէ Ատրպատականի Հայոց Թեմական Առաջնորդի փոխանորդի պաշտօնը:

\*\*) Արձանագրութեան մատեան Ատրպատականի Հայոց Թեմական Պատգամաւորակ. Ժողովի. Նիստ լի. 7 Սեպտ. 1912: Հ. Ա.


Իրանի Հզօր և Մեծագործ Վեհապետ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ՄԵԾՈՒԹԻՒՆ ՇԱՀՆՇԱՀ ՄԵԾՆ ՓԱՀԼԵՎԻՔ և կառավարութեան  
հանդէպ ցոյց տուած հաւատարմութեան և անձնուէր գործունէու-  
թեան համար արժանացած է յարգանքի և խորին վստահութեան:

Տէր Ներսէս Արքեպ.ի առաջնորդութեան 25ամեակի ընթացքին<sup>\*)</sup> դպրոցական կեանքին զուգընթաց կատարուած են նաև մշակու-  
թային բազմատեսակ ձեռնարկներ, որոնցմէ յիշենք՝ Արամեան  
Թատրոնի հիմնարկութիւնը, Թաւրիզի Հայոց Մշակութային  
Միութիւնը (1916), Թեմական դպրոցի երբեմի տեսուչ վաստակա-  
ւոր կ. Պիոնեանի ուսուցչական գործունէութեան 25ամեայ յորել-  
եանը (1924), մարզական շարժումը (1926), Ատրպատականի Հայ  
կանանց Միութիւնը, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան  
մասնաճիւղը, հանդէսներ, հանգանակութիւններ, ներկայացումներ:  
ազգային զանազան ձեռնարկներ, գիւղական դպրոցներ, ազքատա-  
խնամ և բարեգործական աշխատանքներ և այլն և այլն Նորին Սրբազ-  
նութիւնը 1926ի Ապրիլին Թէհրան գնաց և յանուն Ատրպատականի  
Հայութեան մասնակցեցաւ ՇԱՀՆՇԱՀ ՓԱՀԼԵՎԻՔի թագաղըրութեան  
մհծաշուք հանդէսներուն, արժանանալով արքայական շքանշանի:

Արամեան դպրոցի հարիւրամեայ յորելեանին կը զուգագիսի  
Նորին Սրբազնութեան ծննդեան 70ամեակը՝ 1866—1936, ազգա-  
նուէր գործունէութեան 50-ամեակը՝ 1886—1936, հոգկոր կոչման  
35ամեակը՝ 1901—1936 և Ատրպատականի Հայոց Առաջնորդու-  
թեան 25ամեակը՝ 1912—1936, եթէ Սահակ Եպիս. Սաթունեանը  
հանդիսացաւ Արամեան դպրոցի հիմնադիրը և իբր այդ անմահա-  
ցաւ, Տէր Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք Թանգեանն ալ իր 25 տա-  
րիներու ազգանուէր և անկաշառ գործունէութեամբ, իր անբասիր  
վարքով, անսահման բարեացակամութեամբ և անկեղծ ժողովրդա-  
սիրութեամբ կը գրաւէ բացառիկ և արժանի տեղը՝ Ատրպատա-  
կանի Հայոց նորագոյն պատմութեան մէջ:

Արամեան դպրոցի տեսուչը 1919—1920 ուսումնական տարե-  
սկզբէն մինչև այժմ, ամբողջ 17 տարի Միքայէլ Ստեփանեանն է:  
Իրմէ առաջ բազմամեայ տեսուչներ եղած են՝ Տիգրան Գալֆայ-  
եան՝ 12 տարի, Արեգնագով Ալէքսանեան 11 և Ալէքսան Տէր Վար-  
դանեանը 11 տարի: Արամեան դպրոցի պատմութեան մէջ Միքա-

\*) Նորին Սրբազնութեան մանրամասն կենսազրութիւնը տես՝  
Հայկ Աճէմեան—«Տէր Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք Թանգ-  
եան. Իւր Ազգային և Հասարակական Գործունէութեան Քառասու-  
ամեայ Ցոքելեանի առթիւ. 1886—1926», Վենետիկ. Միթթարեան  
Տպարան, 1926, էջ 52, պատկերազարդ և շքեղ հրատարակութիւն».



յէլ Ստեփանեանի տեսչութիւնն է ամենէն երկարատեղ։ Այս 17  
տարիներու ընթացքին Արամեան դպրոցի իրար յաջորդող Հոգա-  
բարձութեանց անդամներ եղած են՝ Բժ. Ռուբէն Տէր Ստեփանեան,  
Բժ. Բ. Բաղդասարեան, Մարգար Յակոբեան, Յովսէփ Աղազարեան,  
Խաչատուր Մելիք Վարդանեան, Կամսարական (Կամօ), Արտաշէս  
և Վարդան Խաչատրեան եղբայրները, Արտաշէս Տէր Մարտիրոս-  
եան, Սիմոն Միլրայեան, Աշոտ Աֆթանդիկեան, Հայկ Աֆթան-  
դիկեան, Յովսէփ Խան Յովսէփեան, Ալէք Սագինեան, Մարտիրոս  
Բաղդասարեան, Միսակ Վարդանեան, Կարապետ Վարդանեան, Մար-  
տին Շաթիրեան, Հմայեակ Աղաբէկեան, Զարեհ Պետրոսեան, Նա-  
զար Նազարբէկեան և Խորայէլ Մատթէոսեան։

Միքայէլ Ստեփանեանի տեսչութեան 17 տարիներուն՝ Արամ-  
եան դպրոցի մէջ պաշտօնավարած ուսուցիչներն են — Վարդան  
Մելիք Աբրահամեան, Օր. Սաթենիկ Զարգարեան (այժմ Բալալ-  
եան), Օր. Արշալոյս Գրիգորեան, Վարդան Յովհաննիսեան, Անդրէ  
Տէր Օհանեան, Աղա Զափար, Լևոն Գրիգորեան, Ասատուր Մելիք  
Աբրահամեան, Շահէն Դիլանեան, Հայկ Աճէմեան, Օր. Աստղիկ Տէր  
Յարութիւնեան (այժմ Մելիք Աբրահամեան), Օր. Հրաչուհի Զա-  
փարեան, Յովակ Ստեփանեան, Տիկ. Աննա Յարութիւնեան, Տիկ.  
Նուարդ Յարութիւնեան, Օր. Հերմինէ Զատիկեան (այժմ Արոյեան),  
Հայկ Կոսոյեան, Սամսոն Խաչիկեան, Եղնիկ Քաջունի, Վաղարշակ  
Քենդիրեան, Մահմադ Խան, Օր. Աղէլ Թովմասրէկնեան (այժմ Մու-  
րադխանեան), Օր. Անժէլ Գևորգսեան (այժմ Խաչիկեան), Աղա Հա-  
զըմ Նաջաթ, Աղա Վաղուդ, Օր. Ալիս Մատթէոսեան (այժմ Հայ-  
րապետեան) Լևոն Գէորգեան, Վարդան Միլրա Նալբանդեան և  
Տիկ. Զարուհի Մելիք Վարդանեան։

Իբր տեսուչ Միքայէլ Ստեփանեանը եղած է բարեխիղճ և  
անձնուէր, համեստ և աշխատասէր հասարակական-կրթական գոր-  
ծիչ մը, որ տարիներ շարունակ կրցած է դպրոցին մէջ ստեղծել  
ուսուցիչներու փոխադարձ յարարերութեանց ջերմ և ընկերական  
մթնոլորտ մը, որ այնքան անհրաժեշտ է կրթական յարկերուն  
տակ Նա կանոնաւոր կերպով պահած է իր տեսչութեան, 17 տա-  
րիներու ամբողջ գործերը — դիւան։

Քանի մը խօսք ալ Արամեան դպրոցի տնտեսական վիճակի  
մասին։ Դպրոցը զբկուցաւ 24,000 թուման կանխիկ դրամէն՝ վա-  
ճառականաց սնանկութեան պատճառով։ Դպրոցը Ղարադադ գա-  
ւառի մէջ ունէր Նորաշէն, Յոյժ, Զեագահ և Ղուլուզի գիւղերը, ո-  
րոնցմէ կը մնան երեքը՝ տարեկան 150 թումանի աննշան գումար  
մը տալով։ Արամեան Թատրոնը քանի մը տարիներէ ի վեր ոչ  
միայն դրամական մուտք չի բերեր, այլև ամէն տարի 150—200  
թուման նորոգութեան ծախս կը խլէ։ Դպրոցապատկան Ս. Աստ-

ուածածնի մատուռը մուտք չի բերեր. այդին տրուած է կապաւառուի մը, որ կը հոգայ միայն ջուրի ծախքը. Դպրոցը ներկայիս ունի հետևեալ մուտքերը՝ թոշակներ՝ 1200 թուման, Ալքատախը նամի, Հայ Կանանց Միութեան և որդեգիր սաներ պահողներէն տարեկան՝ 220 թուման, օդիի պետական տուրքի տոկոսներէն՝ 200 թուման, զանազան ձեռնարկներէ՝ 500 թուման, բարերար և կրթասէր անձերէ ստացուած պատահական նույներ և ննջեցելոց յիշաւակին տրուած գումարներ՝ 200 թուման, Մարէֆի միջոցով տրուած պետական-կրթական նպաստը այս տարուընէ՝ 480 թուման, համագումար՝ 2800 թուման, մինչեւ դպրոցի տարեկան ծախսն է 3600 թուման, ուրեմն ամէն տարի բաց ունի 700—800 թուման։

Այժմ Արամեան դպրոցը երկսեռ է և կեցամեայ. Աշակերտութեան թիւը վերջին տարիներու ընթացքին եղած է 180—210, որոնց քառորդը գրեթէ ձրիավարժ և աղքատիկ սաներ են. Արամեան դպրոցը 1934—1935 ուսումնական տարեսկիզբէն իրանական Սարա անունը կը կը և լրիւ կերպով կը կիրառէ պետական ծրագիրը. Վեց դասարաններու մէջ շաբաթական կ'աւանդուին 121 դաս պարսկերէն լեզու, առարկաներ և 95 դաս հայոց լեզու և կրօն։

Արամեան դպրոցն իր աւելի քան 100 տարիներու գոյութեան ընթացքին Հայ ժողովուրդին տուած է 1000 ընթացաւարտ և աւելի քան 4000 տարրական գրագէտներ։ Շուրջ հինգ հազար հոգի այդ դարաւոր կաղնիի հովանիին տակ պատապարուելով գրանաչ դարձած և կամ ուսում, կրթութեան ստացած են։ Ո՞վ կարող է չափել ու կշռել երախտագիտութեան դգացումները, այն հազարաւոր աշակերտաներուն, որոնք Հայ լեզուն ու մայրենի բարբառը սովորեցան Բերդաթաղի դպրատան-վարժատան անշուք յարկի տակ և Արամեան դպրոցի դասարաններուն մէջ։ Տասնեակ տարիներու հուլիսին մէջ սերունդներ եկան ու անցան և աւանդ թողին մեզ Հայ դպրոցը, իբր հոգեկան և իմացական անսպառ զանձարան մը, որուն մէջ առաջնորդներէն սկսեալ մինչև հոգաբարձուներն ու տեսուչները, ուսուցիչներն ու աշակերտները՝ ձգեցին իրմաց մտքի լոյսն ու սրտի յոյսը՝ անշէջ պահելու համար Հայ դպրոցի կանթեղը, որուն լոյսը յաւերժապէս պիտի ցոլա և առկայծէ գեղածիծաղ իրանի կապոյտ երկնքին տակ, ուր այժմ Մեծն ՇԱՀՆՇԱՀ ՓԱՀԼԵՎԻՔ յաղթական ու հզօր բազուկով կը դարբնուի իրանի Վերածնութեան Ոսկեղարը։



## تذکر

چون عصر حاضر اجازه نمیدهد که در همچو مجلسی که اکثر مشترکین از اشخاص منورالفکر و مطلع از وضع کنونی دنیا و ترقی معارف میباشد ابداً کلمة دایر بشرح و بسط منافع معارف و لزوم تعلم و تربیت گفته شود و علاوه مقصود اصل از بر با نمودن این جشن اعلان اختتام صد مین سال از تاسیس این دبستان و یاد آوری از اسم و نتوت گذشتگان در ظرف صد سال قبل و مقایسه وضع کنونی دبستان با اوضاع ادوار سابق این دبستان است لذا ضمن شرح تاریخچه دبستان در قسمت ازوم مساعدت بمعارف توجیه علاقهمندان این دبستان و مخصوصاً اهداخواص را که از این دبستان تمام ابتدائی یافته و به درجات عالیه انسانیت نائل شده اند جلب و بیک جمله موجز عموم حاضرین و شالبین را مخاطب ساخته مذکور میشویم که استقرار این دبستان عنوان بمداد تجهیزات معارف پرورانه مادی و معنوی شماهاست و بس.

هیئت جشن اختتام صد مین سال تاسیس دبستان صبا



چیزی که مایه امیدواری و بدان نواقص دبستان نسبتاً تکمیل نمیشود همانا  
بذل مساعدة وزارت جلیله معارف و اوقاف میباشد که برای این دبستان  
در سال (۴۸۰۰) ریال مقرر واحیاء فرموده اند - این است که پیاس  
سپاهگذاری از شمول همچو عطیه محبی هیئت و کلاع و کارکنان این  
دبستان اشکر و امتنان خودرا بوسیله جناب آفای فهیمی رئیس محترم اداره  
معارف و اوقاف ایالت شرقی آذربایجان که از روی نیت پاک و فطرت تابداخ  
واسطه حقیقی تعديل ز شمول مراجع مقام محترم وزارتی این دبستان  
گردیده بمقام محترم وزارت جلیله معارف و اوقاف عرض وسلامت آوزیر  
بی نظیر بلند مرتب و از دیاد توجه و جبه جناب آفای فهیمی باین دبستان  
معمر را ازته دل خواستاریم .

### بودجه دبستان

۱- از ایادات سال جاری دبستان در حدود (۲۹۰۰۰) ریال بشرح ذلیل می باشد :	
۲- از ماهیانه شماگردان	۴۸۰۰ ریال
۳- از جشن دبستان وغیره	۱۲۰۰۰ «
۴- از مساعدتهای مقرر	۵۰۰۰ «
۵- از متوفیون و مقویات	۲۰۰۰ «
۶- از اعایدات قراء دبستان	۲۰۰۰ «
۷- از رسومات (غیر دولتی)	۱۲۰۰ «

مخارج دبستان بالغ بر (۳۵۰۰۰) ریال است از روی همین محاسبه  
از بودجه دبستان تقریباً (۶۰۰۰) ریال جای خالی میماند .

اوّاق که اسم کلیه مدارس تغییر یافته اسم این دبستان هم به صبا موسوم  
و برگرام رسمی وزارتی نیز کاملاً مجری نمیشود -  
ربع قرن که جناب خلیفه نرسن ملک تانگیان متصدی خلافت ارامنه آذربایجان  
میباشد علاوه بر اینکه کلیه امور ارامنه در حال طیبوی جریان دارد مدارس نیز در  
 تمام نقاط جزء بویژه این دبستان که مورد توجه مخصوص شان میباشد ترقی  
شایان تقدیری نموده است - گرچه هیئت و کلایی دبستان در اسمنت مر و طه  
بخود سنتی نگردد و در انجام امر و کلایت جاحد و ساعی بوده و همچنین  
اهمی نیز نسبتاً مساعدت داشته اند ولی مشوق اشخاص مذکور جهت خدمت  
معارف جناب خلیفه بوده و بس - این است که هیئت و کلای و کارکنان  
دبستان خرسندی خاطر خودرا بحضور محترم عرض و سلامت وجود  
مبارکش را از صمیم قلب خواهان میباشند .

علاوه بر اشخاص معارف پروری که در این تاریخچه اسم شان برده  
شد جمع کثیری هم در راه ترقی این دبستان خدمات شایان نموده اند  
چون ذکر اسم کلیه شان موجب اطالة کلام و دوری از اصل مقصود  
میگردد لذا همینقدر ارواح شان را که نگران این مجلس اند مخاطب  
ساخته میگوئیم دستانی که شماها از بکفرن پیش بدآید باعثاب و اخلالات  
سپرده اید همیندم مانیز محض تشیید اساس آن برای بکفرن دیگر مجلس  
جشن برپا نموده این تاچنانکه از شماها تحويل گرفته این به آیندگان بکفرن  
دیگر تحويل نمائیم :

### در اطراف بودجه دبستان

از زمانی که این دبستان (۲۵۰۰۰) ریال متضرر گردیده اهلب از  
حیث امور مالی عقب و در مضیقه میباشد وعلاوه در سوابق از نایابه اعایدات  
محقا بهی هم داشتی که آنهم در این اوآخر بکلی منقطع شده است - فقط

دروس دبستان نوییرات کلی رخ داده و از آن زمان علوم مقرر که غیر  
شرعيه پيشرخت داشته است - مرحوم خليفه در تحقیق همین نظریه مرحوم  
ساموبل گلزارادیان را که از اهالی جلفای اصفهان بوده بمدیریت ابن دبستان  
دعوت نموده است -

مرحوم گلزارادیان علاوه بر اينکه مدرسه را در دوره تصدی خود به  
منتهای رسانده در سه زبان اپر (فارسی - فرانسه - ارمی) حائز  
مقام استادی بوده و او اول کسی بوده است که کتاب شهیر شاهنامه اردوسی  
علیه الرحمه را از زبان پارسی با منی بنظم و نثر ترجمه کرده است .

از سال ۱۸۷۹ که مرحوم موشیان خليفه شده وی نیز از فرط علاوه  
للي بمعارف علاوه بر خدماتی که نسبت باین دبستان نموده شخصا مدیریت  
مدرسه را هم عهده دار و برای تحریکیم اساس دبستان و انتظام دائمی امور  
آن هیئت و کلاغه برای دبستان انتخاب نموده است - انتخاب و کلاغه در  
این دبستان هم ازوی بیادکار مانده است .

در سال ۱۸۸۳ که از سال‌هاي خلافت مرحوم دردانلیان بوده برادران  
طومانیان از جیب قوت بخرج شخصی عمارتی برای تأسیس دبستان آناث  
در جنب دبستان بنا نموده اند و هنوز یادکارشان باقی و ذکر خیرشان در  
اواه جاری است .

از سال ۱۸۸۶ که مرحوم استپانوس مختاریان خليفه شده مشارالیه  
نیز بنویه خود از هیچگونه مساعدت مضایه نکرده چنانکه در اثر ترشیب  
خليفه مذکوره و کلاغی دبستان که مرحوم زاکار نظر بیگمان - هواکیم  
افرجان - سرکیس هوانیان بوده اند خدمات بر جست و فداکاری های  
قابل تمجیدی در راه پيشرخت امور دبستان بعمل آورده اند و برای از دیاد  
عایدات دبستان مبلغ هنگفتی جمیع و برای امکان حصول اتفاق از  
آن در ولایت (قاراجه داغ) چهار قطمه قریه خریداری نموده اند .

در سال ۱۸۹۴ که از سال‌هاي خلافت مرحوم سوکیاس بوده در تیجه وظیفت  
مشارالیه مرحوم عده کلاس‌های دبستان زیادت یافته و چندی با اسم دبستان  
و دبیرستان برقرار بوده است - بمن از خلیفة مذکور چند نفر مدیر برای  
مدرسه انتخاب شده ولی در زمان مدیریت شان امور مدرسه چندان پيشرخت  
نداشته تا اینکه نویه مدیریت بمرحوم هابدن کوب آلسانیانس رسیده است -  
آلسانیانس خودش از فارغ التحصیلین این مدرسه بوده اصل و کمال  
و لیاقت و کفايت مشارالیه بوردن توجه خاصه وات شده از طرف خلیفة برای  
اهتمام دوره تحصیلات بشه کلسا فرستاده شده و یعنی از تکمیل معلومات  
بمدیریت این دبستان معین شده است - مشارالیه در اجرای یروگرام  
باصول اروپ چنانکه شاید و باید کوشیده و علاوه بسکون کتابخانه برای  
مدرسه تاسبیس وعده کلاس‌های آناث را افزوده و عده شاگردان در زمان  
وی بالغ به (۲۲۵) نفر شده است - فقط چیزی که در بیان مدیریت وی  
سبب عقب افتادگی امور مالی مدرسه و واجب افسردگی خود او و سایر  
علاوه مندان معارف گردیده (۲۵۰۰۰) تومان تضرر مدرسه شده که بیش  
تجار داشته و تجار مذکور ورشکست شده اند - تضرر مذکور و عدم  
تکافو و بودجه اختلاط مدرستین ذکور و آناث را ایجاد نموده است .

از سال ۱۹۰۹ تا ۱۹۱۹ مدیریت دبستان بهمده آلساندر در وارناپیان  
و اگذار شده در زمان مدیریت وی نیز دبیرستان سروهی تاسیس و کلاس  
های متوسطه بدأنجا فرستاده شده باز مدرسه از آنوقت شش کلاس شده است  
از سال ۱۹۱۹ تا حال که قریب هفده سال است مدیریت دبستان بهمده  
آقای میکائیل استپانیان که در حقیقت از هر حيث بمدیریت استحقاق والویت  
دارد و اگذار شده و در تمام این مدت دبستان شش کلاس، و امور آن منظم و  
آوز کارانش مجرب و ببرز میباشد - آسم این دبستان در سوابق به آرامیان  
اشتخار داشته ولی از سال گذشته بر حسب امر وزارت جلیله معارف و

## اصل تاریخ تأسیس دستان صبا

در اوایل قرن هیجدهم (قریباً دویست سال قبل) همین دستان صبا در جنب کلیسا اسم و شکل مکتب داشته و در آن علوم شرعیه تدریس میشده - کم کم بحثهای زمان تغییر شکل داده تا اینکه در سال ۱۸۳۵ بهت و فتوت مرحوم مسروب طاغیاتیان بکلی از شکل مکتب خارج و اسم دستان بخود گرفته است

مرحوم طاغیاتیان از اهالی ایروان و از دانشکده کلکته دبیله و در اکثر علوم زمان خود متبحر و مخصوصاً در املاء و اشاء بد طولائی داشته است - مشارالیه ضمن مسافرت بهندستان و سال در تبریز اقامت جسته و همین دستان را از خود بیاد کار گذاشته است - مرحوم طاغیاتیان علاوه بر فدا کاریهایکه در راه معارف بوده در تحقیم اساس این دستان نموده شخصاً هم تدریس کرده و هنوز یکباب اطاق از مدرس وی بحال اولیه باشید - پس از مسافرت مرحوم خلیفه بوغوس که منظور مقدس طاغیاتیان را جدا تعقیب نموده در ابقاء دستان ویشرفت امور آن لازمه معاخذت بعمل آورده تا اینکه در سال ۱۸۵۱ مرحوم صحاح خلیفه از طرف سه کلیسا به تبریز وارد شده است - مرحوم صحاح کنیز در تشبید اساس دستان زحمات بسیار کشیده و تا ورود مشارالیه دستان عمارت مخصوصی نداشته و محل فعلی دستان و خلیفه گردی آنکه آرامگاه بوده بر حسب تجویز و امر مشارالیه قبرهارا بش و استخوانهای اموات را جمع و در جنب کلیسا دفن و آرامگاه را مخصوص و در آن عمارت دستان را بنا نموده اند - باینکه در طول

مدت ساخته از از امامه تقدیم برست از نقطه نظر جهالت و محض نیش قبرها و تاسیس دستان آنهم در جای گورستان را برخلاف کیم و آئین پنداشه از ممانعت علمی و مخالفت مخفی فروگذاری نکرده و هدم دیوارهای اضافی آرامگاه را نوعی از ثواب دانسته و شبهه در کندن دیوارها اصرار داشتند ولی مرحوم صحاح خلیفه بدون تغییر حال و ادلات و تنبیه ساخته اند دستان را در ظرف دو سال با تمام رساند -

میتوان گفت که مرحوم دستان در حقیقت مسروب طاغیاتیان و بانی عمارت مرحوم صحاح خلیفه بوده است -

پس از مرحوم صحاح خلیفه چند نفر خایله دیگر نیز که من باب ذکر خیر اسمشان هم یاد آوری داشود «خلیفه گربکور - خلیفه هاکوب خلیفه و هابیان - خلیفه آندزیاص - خلیفه دوشخ - خلیفه بار تو بامن» هر یک بنوی خود ضمن ایفای وظیفه خلیفه گی در پیشرفت امور دستان مجاهدت وافی بعمل آورده اند -

میرزا ایشان مرحوم خلیفه و هابیان بوده که در سال ۱۸۶۴ بطریان مسافرت وازن انصار الدین شاه تقاضای بذل مساعدت بدستان نموده تا ورنجه با صدار اهرمان دویست تومن مستمری در سال برای دستان که عین فرمان هم فعلاً مضبوط میباشد ووفق گردیده و مستمری مذکور تابن اواخر که مسقمررات بکلی منقطع گشته هرسکه وصول و مهروف نواصی بودجه دستان میگردید و از زمان اصتمهار و مستمری مذکور تدریس زبان فارسی در این دستان پیشرفت کرده است -

محاسبات دستان در سال ۱۸۷۲ که مرحوم گربکور هاکوبیان خلیفه بوده منظم و عایدات آن در اثر تشویق خلیفه مرحوم از بذل هدایی اغذیه ممتازد و دستان دارای (۲۰۰۰۰) تومن نقدیه گردیده است -

از تاریخ ۱۸۷۴ که مخلافت مرحوم آندزیاص شروع شده دو مواد

- ۰ -

زهی خوشوقتیم که اختتام صدمین سال از تأسیس این دبستان  
کوچک ما که مدت یکقرن تمام با تعلیم و تربیت در آن ویرافکار  
خدمت نموده با همچو دوره مشعشع مصادف و خدمات حیر  
آن توجه وزارت جلیله معارف و اوقاف و صنایع مستظرفه را  
با خود جلب و استحقاق استقرار - ۴۸۰۰ - ریال مساعدت در سال  
را یافته است - از بذل این مقدار مساعدت و تعديل وزارت جلیله  
معارف با نهایت افتخار و امتنان سپاسگزار و بناء و سلامت ذات  
مقدس اعلمیحضرت همایون شاهنشاهی را که عموم  
افراد ملت در پیشگاه مدلتش مساوی و از ثمره وحدت ملی  
برخورد دار میشوند از ایزد بی نیاز نیازمند میباشیم .



## بنام همایون شاهنشاهی

موجب بسی مسرت است که عموم ملت ایران در این عصر  
سمادت اثر از توجهات شاهنشاه جوان بخت «اعلمیحضرت  
رضا شاه پهلوی » خلد الله ملکه و سلطانه در شاهراه  
تجدد و تعمیق قدم گذاشته و باهدایت قائد توادا و سرپرست عظیم  
الشأن خود روزبروز بسادت قرین و نسبت بهم الیف و درفع  
و ضر شریک و از ثمره مدفیت سویم و بدون استثناء ازانواع نعم  
متنعم میگردد - سپری شدن روزهای تیره و تار و حصول این  
همه ترقیات محیر المقول را یگانه معیار حساس همانا و سمت  
معارف و میزان بودجه آن میباشد و بس - از مقایسه زمان حاضر  
با قبل از دوره پهلوی ثابت و مدلل میشود که ملت از توسعه یافتن  
معارف بچه اندازه از مذلت رها و چقدر بسادت نزدیکتر و چه  
مقدار از دریای فلاکت بساحل نجات سوق گردیده است -



اعلیٰ حضرت همایون اشاهنشاه پهلوی کبیر

با اجازه نمره ۵۰ اداره معارف و اوقاف ایالت شرقی آذربایجان

واجازه نمره ۳۱ اداره شهربانی طبع گردید

جشن

لهم انت سعادت حبيبنا والى سعادتك وانت انت سعادتنا

لهم انت سعادت خالق رب العالمين

( ۳۱۷۱ - ۳۱۷۱ )

سید علی بن ابی طالب

۳۱۷۱

سید علی بن ابی طالب

سید علی بن ابی طالب

باقم هاشم نجات

۱۳۱۵

تبریز

تبریز چاپخانه خلیفه گری



# ناشر

هیئت جشن اختتام صدمین سال تأسیس دبستان صبا

تاریخچه صد ساله دبستان صبا

( ۱۲۱۴ - ۱۳۱۴ )

پنجم هادیم نجات

۱۳۱۵

تبریز

---

تبریز چایخانه خلیفه گری

ՀՀ Ազգային գրադարան



NL0231727

51.230